11 ՄԱՅԻՍ 2018 ՈՒՐԲԱԹ 18(5514)

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Վարչապետի առաջին նշանակումները

Երեկվա ընթացքում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի նախագահին առաջարկել էր պաշտոնանկ անել ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին եւ ԱԱԾ տնօրեն Գեորգի Կուտոյանին: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ այս առաջարկներն ընդունվել են, իսկ վարչապետի մեկ այլ առաջարկով նախագահ Արմեն Սարգսյանի հրամանագրերով ոստիկանապետ է նշանակվել փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը, իսկ ԱԱԾ տնօրեն՝ Արթուր Վանեցյանը, որը մինչ այդ եղել է Երևան քաղաքի վարչության պետի տեղակալը: Իր ֆեյսբուքյան ուղիղ եթերում Օսիպյանի նշանակումը Նիկոլ Փաշինյանն անվանում է սիմվոլիկ, քանի որ հեղափոխության ժամանակ փշալարերի տարբեր կողմերում հայտնված մարդիկ այժմ պետք է լինեն մի կողմում: Իսկ ԱԱԾ տնօրենի ընտրությունը բացատրել է այս կառույցի իրական՝ անվտանգային, հակահետախուզության եւ մաքսային ոլորտի հակակոռուպցիոն գործառույթները վերականգնելու շարժառիթով:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Օլիգարխիայի դեմ, օլիգարխների հե՞տ

Թվում է՝ ներքաղաքական կոնֆլիկտը գոնե առաջին մասով հանգուցալուծվեց. փոքրամասնական կառավարություն՝ Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ: Այսուհետեւ, առաջիկա հանգրվանում, նորընտիր վարչապետից պահանջվում է «քայլ առաջ» անել միայն խիստ ականապատված դաշտում, որը նրան բավական թափանցիկ խոստացավ, հենց ընտրության օրը, խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչ Վահրամ Բաղդասարյանը: Վարչապետը այսուհետեւ ստիպված է այդ դաշտում առաջ շարժվել մեծագույն հմտությամբ, երբեմն միս-մինակ, ընդամենը իր կողքին ունենալով հասարակության ակտիվ մասի բարոյական, կրկնում եմ՝ բարոյական աջակցությունը, որը նյութականացնելու, քաղաքական դրամագլուխի վերածելու համար նրան անհրաժեշտ է հասնել գլխավոր առաջադրանքին՝ խորհրդարանական արտահերթ ընտրությունների կայացմանը, որը ներկա պայմաններում թվում է անկարելի առաջադրանք, նկատի ունենալով նորընտիր վարչապետի ձեռքի տակ եղած միջոցների սակավությունը: Քաղաքական անվստահելի դաշնակիցներ եւ դեռեւս կանգուն ընդդիմություն: Արդարեւ, հակառակ սպասելիքների, նախկին նախագահ եւ վարչապետ Սերժ Սարգսյանին հաջողվեց առայժմ կուռ պահել եթե ոչ իր գլխավորած կուսակցության, ապա գոնե խորհրդարանական խմբակցության շարքերը, որոնց մեջ կան մարդիկ, ովքեր կուզենային, շա՜տ կուզենային, խորհրդարան ներկայացվող յուրաքանչյուր օրինագիծ «տապակել»: Հատկապես այն օրինագծերը, որոնք նախատեսում են հանրապետության նախագահի սահմանադրական իրավունքների վերականգնում, ընտրությունների մասին օրենքի անհրաժեշտ փոփոխություններ, ընդհուպ՝ արտահերթ ընտրությունների անցկացման որոշումը: Անշուշտ անկարելի չէ այդ խոչընդոտների հաղթահարումը, եթե պատշաճ հմտությամբ օգտագործվեն Սահմանադրության որոշ դրույթներ, որոնք կարող են առաջնորդել Ազգային ժողովի ինքնալուծարմանը...

Նորակազմ կառավարության համար ավելի փորձանավոր են լինելու որպես վերջինիս դաշնակից կամ գործակից ներկայացող կողմերի հարուցելիք դժվարությունների հաղթահարումը: Նկատի ունեմ ՀՅԴաշնակցությունը՝ ավանդականորեն իր «ոլսան» քաղաքականությամբ, եւ «Ծառուկյան» դաշինքը՝ իր գաղափարազուրկ էությամբ եւ անձնիշխանական բուրգով: ՀՅԴ-ն արդեն իսկ հայտարարել է արտահերթ ընտրություններին իր դեմ լինելը՝ վախենալով ժամկետից շուտ կորցնել իր ունեցածը, մինչ «Ծառուկյան» դաշինքը բնավ պիտի չփափագեր իր «խոսքը գործի» դնելու ստիպողության առաջ կանգնել:

Այսուհանդերձ ամենադժվարն ու տեւականը լինելու է օլիգարխիայի՝ եթե ոչ վերացումը, գոնե նրան օրենքի եւ օրինականության դաշտ բերելու պարտականությունը, որն ստանձնել եւ խոստացել է վարչապետ Փաշինյանը ժողովրդին: Խոսքս չի վերաբերում այն անհեթեթ կացությանը, որի մեջ ակամայից հայտնվեց նա՝ անհրաժեշտաբար եւ նույնիսկ պարտադրաբար ընդունելով հայտնի օլիգարխների աջակցությունը վարչապետ ընտրվելու գործում: Ինքը՝ Փաշինյանը փորձել է, սակայն ոչ համոզիչ կերպով, բացատրել, որ իրեն ձայն տալու այդ արտառոց երեւույթը ոչնչով չի պարտավորեցնում իրեն երախտապարտ լինելու հայկական օլիգարխիային: Խոսքս վերաբերում է այն համակարգին, որը Սերժ Սարգսյանի, Ռոբերտ Քոչարյանի, նույնիսկ Լեւոն Տեր-Պետրոսյանի ու նրանից առաջ՝ սովետական դարաշրջանի վերջին տասնամյակներին ծնունդ է առել, զարգացել եւ անտեղաշարժելի համակարգի է վերածվել, որի մեջ մտել է նաեւ դարերի հնություն ունեցող հայկական նեպոտիզմը (ժողովրդական խոսքով՝ ԽԾԲ), որի հետեւանքով խորացել ու զարգացել է համատարած կաշառակերությունը, ազգային հարստության պիտանելի բեւեռացումը: Նկատի չունեմ հրապարակում հայտնի օլիգարխներին միայն, այլ մյուսներին նաեւ, որոնք հայտնի են միայն նեղ շրջանակներին, որոնք սերտաճել են ոչ միայն չինովնիկական կաստայի, այլեւ միմյանց հետ՝ իրար «փայ» տալու, իրար հետ «փայ» մտնելու, անգամ՝ աղջիկ-տղա առնել-տալու գործողություններով:

Այս պարագայում Սինգապուրի փորձը օրինակ չի կարող ծառայել մեզ, մեզնից հեռո՜ւ նման փորձանքները: Այլ պետք է այդ համակարգի դեմ համակարգված ու տեւական պայքար՝ միջազգային հաջողված ֆինանսա-տնտեսական մեթոդների կիրառմամբ:

Այդ հարցում նույնպես կարեւոր դեր է վերապահված մեր երիտասարդությանը, որի հրաշալի էներգիան պետք է ի գործ դրվի կերտելու համար օրենքի երկիր, օրինավոր պետություն՝ Նոր Հայաստանը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Ժողովրդի մարդը կառավարությունում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Մայիսի 8-ին, փաստորեն սկիզբ դրվեց Հայաստանի չորրորդ հանրապետությանը, երբ խորհրդարանում 59 կողմով վարչապետ ընտրվեց ժողովրդի մարդը՝ Նիկոլ Փաշինյանը: Ասեմ, որ ՀՀԿ-ի պահվածքը, որքան էլ այնտեղ ընկերներ ունեմ, բոլորովին դուր չեկավ հանրությանը: Հասկանալի կլիներ, եթե ՀՀԿ-ն ասեր, որ դեմ է Փաշինյանի անձին, բայց երկիրը ճգնաժամից դուրս բերելու քաղաքական որոշում է կայացրել, իսկ քաղաքական որոշման մեջ հասկացվում է քաղաքական թեւի քվեարկությունը: Մինչդեռ խմբակցության կազմում եղած օլիգարխների քվեարկությունը (թվով 13 կողմ քվեարկողների մեծ մասը օլիգարխներն էին) նետելը ժողովրդի թեկնածուին ցույց է տալիս, որ ՀՀԿ-ում մինչեւ հիմա ամենեւին էլ չեն հասկացել իրավիճակը, եւ այդ քվեարկությամբ նույնիսկ փորձել են դնել առաջին ականը Նիկոլի վարչապետության ճանապարհին: Դեմ ես օլիգարխներին՝ ստացիր նրանց քվեարկությունը: Մինչդեռ վերջիններս, անկախ իրենց քվեարկությունից, ստիպված են լինելու ընդունել նոր խաղի կանոնները, քանի որ ստվերում աշխատելը կտանի նրանց ունեզրկմանը հենց օրենսդրությամբ: Համենայնդեպս լուրը, որ Սամվել Ալեքսանյանի մասնակարար ընկերություններն արդեն ապրանք մասնակակարելիս տալիս են նաեւ հարկային հաշիվ-ապրանքագիրը՝ վկայություն է, որ գործարարները գոնե հասկանում են իրավիճակը:

Անցած շաբաթ եւ այժմ իրադարձություններն այնպես արագ էին զարգանում, որ անգամ դժվար էր դրանց հետեւելը, ուր մնաց արձագանքելը: Մենք բոլորս դարձել ենք մեր կողքին գրվող պատմության մասնակիցը պարզապես , սկիզբ է առել ժողովրդի լայն զանգվածների լեգիտիմությամբ օժտված նոր վարչապետի կառավարման շրջանը, որը շուտով ժամանակավոր կառավարության կազմ կներկայացնի եւ ձեռնամուխ կլինի նախորդ կառավարության թողած պիտանելի խնդիրների քայլ առ քայլ լուծմանը:

⇨3

## Պաշտոնական Բեռլինը դեռ չի շնորհավորել. սպասու՞մ է Փաշինյան-Պուտին առերես հանդիպմանը

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

«Ուրախ եմ Հայաստանի համար: Ձեզանից սովորելու բան ունենք», համերգի ընդմիջմանն ասաց Գերմանիայում բնակվող ուկրաինուհի բարեկամուհիս, որ գերմանացի ամուսնու եւ 2 երեխաների հետ 2 անգամ արդեն եղել է Հայաստանում, ճանաչում է մեզ, իսկ մի քանի օրից հայրենիք է մեկնում՝ մի բաղձանքով՝ յուրացրած տեսնել Հայաստանի՝ սիրո, ամենակարեւորը՝ աշխարհաքաղաքական կողմ չդառնալու դասերը:

Գերմանական առաջին ալիքի եթերում մի հեռուստասերիալ կա, որի մեջ ռուս, ուկրաինացի երկրորդական կերպարներն այդպես էլ գլխավոր չդարձան, գերմանական ռեալպոլիտիկը ծանրութեթեւ արեց, «կրակի» վրա շագանակ չբովեց եւ վերջերս սերիալ ներմուծեց ուսումնատենչ վրացուհու մի կերպար: Մեզ ծանոթ հաշտեցման գիծն էլ կա՝ Էթերիի հայրը վրացի է, մայրը՝ ռուս, դրանով անշուշտ գողությամբ զբաղվող, ԳԴՀ- ում ապօրինություններ կատարող վրացիներին հակակշռող կերպար ստեղծվեց: Մեր՝ հեղափոխության կամ իշխանափոխության թեման առայժմ սերիալ չի մտել, ընդդիմադիր պատգամավորից հեղափոխական Նիկոլի կերպարը, որ հրաշալի կերտեցին նաեւ գերմանացի մեր գործընկերներն իրենց ռեպորտաժներում, կդառնա՞ գրականության կամ նեղ մասնագիտական՝ պատմության ձեռնարկում օրինակ, կիմանանք, կհետեւենք, կիրազեկենք, բայց այսօր կարող ենք փաստել, որ նույն գերմանական մեդիան նրա ու մեր ժողովրդի տարբեր շերտերի մասին պիտանելի նյութ է ամբարել՝ առաջին անգամ տեղում աշխատելով, գրավոր ու տեսա- լսաժապավենին արձանագրելով մեր պատմության վերջին՝ անարյուն այս անկյունադարձը:

Ուկրաինան ու Վրաստանն այժմ գերմանական մեդիա դաշտում դրական, առաջնորդող կերպար էլ չեն, իսկ ադրբեջանական քարոզչամեքենան՝ «Ազերթաջը», որի գերմաներեն տարբերակն էլ շատ արագ էր սովորաբար՝ զեփյուռից փոթորիկ փչելու հարցում, պապանձվել է: Նույնիսկ մայիսի 9- ին Արցախ այցելած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Ալիեւին ուղղված կոչին լայնորեն չի արձագանքում... այսպիսի ուժեղ հարվածին դեռ չեն կողմնորոշվել՝ ինչպես պատասխանել, իսկ միջազգային հանրության առջեւ մի եվրոարդարացում ունեն՝ արտոնել են օտարերկրյա ԶԼՄ-ներին տեղում լուսաբանել այդ ասուլիսը: Լյուքսեմբուրգի երկրորդ մեծ օրաթերթը «Թագեբլաթը» մայիսի 9-ի համարում, հղում անելով գերմանական DPA-ին, որն էլ հենվում է տեղական լրատվամիջոցներին, փոխանցում է, որ վարչապետությունը ստանձնած Փաշինյանն առաջինը Ղարաբաղ այցելելով, հարեւան Ադրբեջանին խաղաղ բանակցությունների կոչ է ուղղել, որին ուղիղ մասնակցելու է նաեւ ԼՂ ղեկավարը: Թերթը շեշտադրում է՝ կոռուպցիան քննադատած, բարեփոխումների ջատագով Փաշինյանը Ղարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծման հարցում կամենում է իր նախորդների կուրս գիծը շարունակել:

⇨2



Նոր Հայաստանն ու «վենդետան», ո՞վ՝ ո՞ւմ

էջ 4



Վալմար. Հնչող նկարչություն

էջ Ա



Հայկական հեղափոխության առանձնահատկությունները

էջ 6

AZG NEW SHABAT.QXD 10/05/2018 23:06 Page 2



ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Հրաբուխը

Ամբողջ ամիս մը տեւած բողոքի ցոյցերը ուրիշ բան չէին, եթէ ոչ հրաբուխ, որ տարիներ բանտուած անհանդուրժողութեան, բողոքի ու ատելութեան լաւան դուրս ժայթքեցուց: Մասիսները, որոնք յանգած հրաբուխներ են, վերակենդանացան, ապրեցան իրենց վերածնունդը ժողովուրդին մէջ. չէ՞ որ ամէն իսկական հայ Արարատ մը ունի իր սրտին մէջ:

Մայիսի 8, որ նուիրագործուած է որպէս Շուշիի ազատագրման օր, նոր զգեստաւորում մըն ալ ունեցաւ, երբ այդ օր ազատագրուեցաւ երկրին խիղճը ու յաղթանակեց արդարութիւնը:

Ասիկա, սիրոյ յաղթանակ ըլլալէ աւելի ատելութեան յաղթանակն էր: Ատելութիւն՝ տարիներ տեւած մենատիրութեան դէմ, անարդարութեան դէմ, փտածութեան դէմ, երկիրը թալանողներուն դէմ, իրենց պաշտօնները տարբեր անօրէն նպատակներու եւ սեփական շահի ծառայեցնողներուն դէմ:

Այո՛, ժողովուրդը յաղթեց: Այդ ե՞րբ է եղած, որ ժողովուրդները չեն յաղթած եւ չեն տիրացած իրենց արդար իրաւունքներուն: Կաթսային մէջի ճաշը մէյ մը որ սկսաւ եռալ, ուրեմն ուշ կամ կանուխ անպայման կափարիչը վեր պիտի նետէ ու յորդի: Եւ յորդեցաւ:

Աշխարհը զարմացաւ: Պճլիկ Հայաստան մը աշխարհին դաս տուաւ, թէ ինչպէս կ՚ըլլան անարիւն, թաւշեայ յեղափոխութիւնները, ոչ միայն սովորական թափօր, այլ՝ ձեռագործուած ու դրուագուած երգով ու պարով, ծափով ու ծիծաղով...

Մարդիկ ըսին, որ հայերուն դէմքին վրայ այսքան ծաղկուն ժպիտ չէին տեսած երբեք:

Յաղթեց հայու կամքը, յաղթեց Հայաստանը, Արցախը, համայն Սփիւռքը: Աշխարհի հայութիւնը այսքան միակամ ու յանուն գերագոյն նպատակի մը, այսքան զօրեղին, այսքան հաւատքով լեցուն չէր եղած բնաւ:

Հիմա, յաղթանակի շեփորահարութենէն ու ժողովրդային ցնծութենէն ետք, հին էջերը փակելու եւ նոր էջեր բանալու ժամանակն է: Հիմա խօսքերը գործի վերածելու ժամանակն է, եւ այս հանգրուանին ժողովուրդը իր պարտականութիւնը կատարած կարծելով, ծրագիրներուն իրականացումը նորակազմ կառավարութեան վստահելով, տուները քաշուելու եւ հանգստանալու չէ, այլ նոր վարչապետին հնչեցուցած խոստումներն ու ծրագիրները իրականացնելուն սատարելն է: Յեղափոխութիւնը ժողովրդային էր, բարենորոգումներն ալ ժողովրդային պիտի ըլլան, որպէսզի անոնց պտուղները վայելելու արդար իրաւունք ունենայ ժողովուրդը:

Նիկոլ Փաշինեան իր ճառին մէջ վերջակէտ դրաւ իւրաքանչիւր փտածութեան (կոռուպցիա) յիշատակումէն ետք՝ «ԵՒ ՎԵՐՋ» ըսելով: Վերջ առանձնաշնորհեալներու, վերջ ապօրինութեանց ու թալանին, վերջ անարդարութեան, վերջ պաշտօններու շահագործումին եւ այլն: Վարչապետին յիշատակած իւրաքանչիւր փտածութիւնը քայլ մըն էր երկիրը վերջնական անկումի տանող, որ յետ այսու կասեցուելու է եւ ետքայլ կատարելու է:

Այնքան հաւատքով ու հաստատակամութեամբ խօսեցաւ վարչապետը, որ կասկած չձգեց, որ անոնք սոսկ խօսքեր էին, որոնցմով օրօրուած են սուտ ղեկավարները իրենց ժողովուրդները: Փաշինեան քաջ մարդ է, գուցէ անփորձ ամբողջ երկիր մը ղեկավարելու, սակայն այն ոգին որ դրսեւորեց, այն անկոտրում կամքը որ ընկրկում չճանչցաւ բողոքի բոլոր օրերուն եւ նաեւ Ազգային Ժողովի դահլիճին մէջ, կասկած չի թողուր, որ Հայաստանը պատրաստ է թեւակոխելու լուսաւոր նոր շրջան մը իր պատմութեան մէջ:

Հալալ է քեզի այս յաղթանակը, հայ ժողովուրդ:

Բարի երթ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

# Մեկ տարի հետո գովենք...

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

**Գյումրի**

Հայաստանում տեղի ունեցածը եւ մանավանդ՝ դրա ընթացքը մեր մասով հիշեցրին 19-րդ դարի գերմանացի գործարար եւ հնագետ, անտիկ Տրոյայի ուսումնասիրող **Հենրիխ Շլիմանի** հայտնի միտքը. «Եվրոպայի դժբախտությունն այն էր, որ նա որպես քաղաքակրթական հիմք ընդունեց Հունաստանը, եւ ոչ Հայաստանը»: Մենք, որ մեր հատկապես նոր պատմության ընթացքում տարբեր անգամներ աշխարհի ուշադրությունը գրավել ենք, ցավոք, մեզ պատուհասած որեւէ դժբախտության առիթով, այս անգամ աշխարհի զարմացած հայացքի ներքո նրան խաղաղ ու քաղաքակիրթ ժողովրդական շարժման գեղեցիկ օրինակ ու դաս տվեցինք՝ թե՛ շարժման մասնակիցների, թե՛ գործող իշխանության ցուցաբերած հնարավոր զուսպ պահվածքով:

Հայ ազգը, մեր հավատավոր ժողովուրդն իր պատմության ընթացքում տարբեր անգամներ հավատացել է ում ասես ու երեւի միշտ հուսախաբ է եղել: Այս անգամ նա, ավելի ստույգ՝ մեր երիտասարդությունը, հավատաց ինքն իրեն, իր ուժին ու կարողացավ հասնել նրան, ինչը մեկ ամիս առաջ անհավատալի կարող էր թվալ: Այն, ինչ մեր երկրում բոլոր անցած տարիներին չէր կարողացել փոխել իրարահաջորդ աղմկած ու անցած որեւէ ընդդիմություն կամ նրանց որեւէ միավորում, զարմանալիորեն կարողացավ անել մեկ մարդ՝ ոտքի հանելով եւ առաջնորդելով այսօրվա ավագ ու միջին սերնդից շատ ավելի ազատ եւ հոգեբանական որոշակի կապանքներից զերծ երիտասարդներին՝ երկրիս մոտիկ ապագայի տերերին: Հավանաբար նաեւ պահը հասել էր, ու հենց՝ երկրում իշխող քաղաքական ուժի ամենագործուն «օգնությամբ», որի իշխանության դեմ էլ շարժումն ուղղված էր:

Բոլոր այս տարիներին անկախ Հայաստանի իշխանական համակարգի մասին մտածելիս իմ կամքից անկախ միշտ պատկերացրել եմ Վրթանես Փափազյանի «Լուր-դա-լուրը»: Հիշո՞ւմ եք, տմարդի աղայի դրած պայմանին հլու, բայց նրա դավին անտեղյակ երիտասարդ սիրահար հովիվը սարի բարձունքում նստած՝ նվագում է իր սրինգը, որի հնչյուններից դյութված նրա հոտը աղայի մարդկանց դրած սանդուղքով քայլում, մղվում է դեպի բարձունքը, բայց սանդուղքի մի աստիճանի գաղտնի կոտրված լինելու պատճառով կենդանիները հերթով գահավիժում են դեպի անդունդը... Այդպես խորհրդային իշխանության մայրամուտին հզոր ազգային շարժման ալիքի վրա Հայաստանում իշխանության եկած խումբը, որի ծոցից է ելել նաեւ սրանից դեռ օրեր առաջ իշխող ՀՀԿ վերնախավը, իր ետեւից տարավ ու միանգամից աղքատության, անօրինականության, անհուսության խոր փոսի մեջ գցեց հայրենի ժողովրդին՝ ինքը ցատկ կատարելով փոսի վրայով ու հետզհետե ամեն ինչով ավելի հեռանալով, կտրվելով ժողովրդից, մեր ցավ ու հոգսերից:

Ժամանակին միակուսակցական կառավարումը փլուզեց անգամ ԽՍՀՄ-ի նման մեծ ու հզոր տերությունը: Որեւէ քաղաքական ուժի երկարատեւ անմրցակից իշխանությունը նրան լճացնում է, զրկում իրականության զգացողությունից՝ երկրի համար դրանից բխող բոլոր տխուր հետեւանքներով: Այս տարիների ընթացքում մեր ժողովրդի համբերության բաժակը կաթկաթ լցվել էր, իսկ ընտրությունների միջոցով իշխանություն փոխելն արդեն կարծես թե անհնար էր դարձել: Եվ տեղի ունեցավ խաղաղ ժողովրդական ապստամբություն ՀՀԿ իշխանության դեմ ու հանուն մեր երազած Հայաստանի: Եվ ծնվեց ՀՈՒՅՍԸ...

Ծնվեց անկախ Հայաստանի Քաղաքացին: Ու նախկին շատ ժխտողների համար էլ երկիրս երկիր դարձավ: Նաեւ նորովի կարեւորվեցին մեր սահմանադրությունը, դրոշը...

Ծնվեց կամ գուցե բացահայտվեց մի նոր Նիկոլ Փաշինյան, որին հարգեցինք ու սկսեցինք հավատալ նախկինում նրա քաղաքական համակիրը չեղած երեւի շատերս: Եվ երկրի ղեկավար նրա դառնալն էլ եղավ օրինականության ու ընդհանուր համաձայնության պայմաններում: Նաեւ՝ ասես նախախնամության բարի ձեռքով հենց այս օրերի համար ասպարեզ եկած նոր Նախագահի Արմեն Սարգսյանի դրական մասնակցությամբ:

Այս ամենը, իհարկե, շատ գեղեցիկ է: Բայց հիմա հեղափոխական ռոմանտիզմին հաջորդելու է դժվարին իրականությունը: Անցումային այս փուլի կառավարությունը կազմավորելիս կարեւոր է չկրկնել նախկինում թույլ տրված մի էական սխալ: Պաշտոնը պարգեւ չէ եւ այդպիսին չպետք է լինի ո՛չ շարժման ժամանակ Նիկոլի կողքին ու հարթակում լինելու, ո՛չ շարժմանն ակտիվ մասնակցելու եւ ո՛չ նույնիսկ երկրին մատուցած որեւէ ծառայության համար: Իրական փոփոխությունների համար այսօր կարիք կա լավագույն պրոֆեսիոնալի ու նվիրյալի հատկությունները համատեղող բարձրակարգ կադրերի ընդգրկման, անկախ կուսակցական պատկանելությունից ու համակրանքներից:

...Ղարսա Բասենի շրջանից գաղթած, Աշոցքի Թորոս գյուղում ապրած Շահանենց տոհմի շառավիղ իմ խնկահիշատակ Տիգրան պապը մի անգամ հարսանքավոր է լինում, հարսի ու փեսայի կենացն ասելիս բոլորը հարսին շռայլ գովում են, ինքը կենացը խմում ու նստում է, չի գովում: Հարսանքավորներից մեկը, լավ իմանալով պապիս բնույթը, հարցնում է. «Տիգրան ապեր, ինչո՞ւ հարսին չգովեցիր»: «Ես մի տարի հետո էս վախտ կգովեմ»,- լինում է պապիս իմաստուն պատասխանը... Բոլորիս ու նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանին ուզում եմ մաղթել, որ իրեն մենք մեկ տարի հետո էլի գովենք:

Եվ այո, Աստված մեզ, մեր երկրին պահապան:

**10.05.2018**

# ՀԲԸՄ-ն շնորհավորում է Նիկոլ Փաշինյանին

Հայկական բարեգործական ընդհանուր միության Նյույորքյան կենտրոնական գրասենյակից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ կազմակերպությունը շնորհավորում է նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ով կառավարման համակարգում նոր էջ է բացում Հայաստանի պատմության մեջ եւ նոր հույս ու տեսլական հաղորդում երկրի քաղաքացիներին:

«Հաջողության լավագույն ցանկությունները ենք հղում վարչապետ Նիկոլ Փաշինյանին իր բոլոր նախաձեռնություններում, ակնկալելով սերտ եւ կառուցողական համագործակցություն անձամբ իր եւ իր կառավարության բոլոր անդամների հետ, ի բարօրություն մեր հայրենիքի եւ նրա քաղաքացիների», գրված է հաղորդագրության մեջ:

# Պաշտոնական Բեռլինը դեռ չի շնորհավորել. սպասու՞մ է Փաշինյան-Պուտին առերես հանդիպմանը

⇨1

Պաշտոնական Բեռլինը դեռ չի շնորհավորել Նիկոլ Փաշինյանին: Զգույշ են: Վրաստանի, Ուկրաինայի պարագայում հակառուսական տրամադրությունը այժմ նոր՝ վերաձեւակերպվող օրակարգ ունի: Իրանին սահմանակից երկրում իշխանափոխության մասին դեռ չեն շտապում իրենց վերաբերմունքը հաղորդել, առաջնային համարելով Իրանի միջուկային համաձայնագրի շուրջ ԱՄՆ-Եվրոպա առճակատման մասին Ռուսաստանի վստահությունը ստանալը, այդ երկրից հնչող տեսակետներով պայմանավորված՝ Հայաստանի քայլերին հետեւելու են Սոչիում: Արտգործնախարար **Մաասը** մայիսի 10-ին Մոսկվա մեկնելուց առաջ գրառել էր՝ Սիրիայից մինչ Արեւելյան Ուկրաինա՝ մեր ժամանակների մեծ ճգնաժամերի լուծման համար չենք կարող միջոց գտնել առանց Ռուսաստանի հետ ուղիղ երկխոսության: Մաասն ուրախությամբ արձանագրել էր, թե միջազգային, ռուս- գերմանական հարցերի օրակարգով հանդիպելու է պաշտոնակից Սերգեյ Լավրովին:

Գերմանական «Հանդելսբլաթը», որ վերջին՝ մայիսի 9- ի համարում իր՝ մեր մասին նյութը ստացել է Մոսկվայից, անդրադառնալով Փաշինյանի ԱԺ ամբիոնից հնչեցրած ելույթին եւ արտոնյալների, կոռուպցիայի, այլ մերժելի երեւույթների հանդեպ հնչեցրած վերջնագրին, մեկնաբանում է՝ վերջ ասելն անել չէ դեռ: Առաջին տեսանելի փոփոխությունները հավանաբար ընտրական օրենքում կլինեն, գրում է թերթը ներկայացնելով, թե ընտրողներն ապագայում պետք է գրանցվեն մատնահետքերով, որ խուսափեն զեղծարարությունից, ինչը մի քանի ամսվա ընթացքում կազմակերպվելիք ընտրություններում հեռանկար կունենա, բայց սրանք տեխնիկական մանրամասներ են, ավելի բարդ կլինի փոխել վարքագծի կանոնները՝ Կովկասում կլանային կառույցները երկար պատմություն ունեն, դժվարլուծելի: Հիշատակելով ԼՂ հարցը եւ Ադրբեջանի հետ հակամարտությունը, թերթը նշում է, թե ոստիկանության, բանակի կառույցների վերակերտումը, անձնակազմի վերակազմավորումը դժվար է լինելու Հայաստանի անվտանգության պայթունավտանգ լինելու պատճառով: Բայց նորընտիր վարչապետն ուշադրության առանցքում պիտի պահի նաեւ արտաքին քաղաքական կուրսը: Մինչ այժմ Մոսկվան Երեւանի ամենահզոր դաշնակիցն էր: Կրեմլը Կիեւի հետ իր դառը փորձառությունից դաս է քաղել, Պուտինն ու Մեդվեդեւը շնորհավորել են, գրել է թերթը եւ նշել՝ բայց հազիվ թե Ռուսաստանի ղեկավարությանը դուր գա փողոցից իշխանության ղեկին նրա հայտնվելը, նրա երբեմնի լոզունգները: Փաշինյանը բազմիցս Մոսկվային հանդարտեցրել է, թե Ռուսաստանը մնում է Հայաստանի կարեւորագույն գործընկերը: Մայիսի 14- ին Փաշինյանը Սոչի կմեկնի Պուտինի հետ հանդիպելու: Ինչպե՞ս են երեք օր մորուքը չսափրած Revoluzzer - ը եւ վարչարարության տասնամյակների փորձառությամբ KGB- ի նախկին գործակալն իրար հետ անձնապես շփվել-հասկացվելու, վճռորոշ կլինի նաեւ երկու երկրների հարաբերությունների համար, եզրակացնում է «Հանդելսբլաթը»: Տնտեսությունն արդիականացնելու համար Փաշինյանն արեւմուտքի սատարման կարիքն ունի, նա ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բարելավման մասին ակնարկեց իր ելույթում: Հավասարակշռություն պահելը այս՝ լարված հարաբերություններ ունեցող կետերի՝ Ռուսաստան-Արեւմուտքի միջեւ դժվար է լինելու: Փաշինյանը 3 ճակատում է պայքար մղելու՝ ներքաղաքական, արտաքին քաղաքական եւ ԼՂ հիմնահարց, գրում է գերմանական թերթը՝ նորընտիր վարչապետի դժվար աշխատանքը նկարագրելով: ԼՂ-ի հարցին՝ աչառու հայացք՝ հանկարծ նորից ռազմական տաք կետ չդառնա:

# Ժողովրդի մարդը կառավարությունում

⇨1 Ինտերակտիվ այս հեղափոխության՝ համացանցով արագ արձագանքման ու ինքնակազմակերպման դրական գործոնն այս պահին վերածվել է Նիկոլ Փաշինյանին ներկայացվող զանգվածային առաջարկների հեղեղի, մարդիկ, ովքեր մասնակից էին հեղափոխությանը, հիմա էլ փորձում են համացանցում կառավարություն կազմել, Նիկոլի քայլերը ուղղորդել, ճիշտ ու սխալ որոշել: Սա հատուկ է հետհեղափոխական բոլոր ժամանակներին: Կուզեինք, որ խորհրդատուները մի փոքր զերծ մնային զանգվածային նամակագրությունից ու հայտարարությունների տարածումից՝ սպասելով նոր կառավարության առաջին քայլերին: Նիկոլ Փաշինյանն ուղիղ եթերներով փորձում է պահել կապը հազարավոր աջակիցների հետ, վերացնել տասնամյակներով կառուցված պատնեշները ժողովրդի եւ իշխանության միջեւ, այդ ընթացքում երբեմն էլ անտեսում է մի շարք անվտանգային կանոններ, օրինակ՝ զինված ուժերի գլխավոր հրամանատարն Արցախից վերադառնալիս ուղղաթիռից ուղիղ եթերով պատմում է իր գտնվելու վայրի մասին, տեղանք ցուցադրում, սա հուսով ենք, հետագայում կբացառվի: Բացի այդ՝ շուտով Նիկոլն իսկի քիթ սրբելու ժամանակ չի ունենա, այնպես որ, վստահ ենք, միգուցե բավարար լինեն շաբաթը մեկ արված ամփոփում-ուղիղ եթերները, որոնք միգուցե հենց հեռուստաընկերությունները ուղիղ կցուցադրեն նաեւ: Համենայնդեպս այսօր կայանալիք կառավարության նիստը լրագրողների համար բաց է լինելու, նրանցից ոմանք գուցե հենց ուղիղ եթեր կապահովեն, այսպիսով թույլ չտալով հեղափոխության աջակիցներին օտարվել իրենց առաջնորդի ամենօրյա աշխատանքներից:

Ասենք, որ վարչապետի պաշտոնում Փաշինյանի առաջին շփումները հօգուտ նրա են աշխատել: Անբռնազբոս, արարողակարգերով դեռեւս չփչացած զույգի՝ Նիկոլ Փաշինյանի եւ նրա տիկնոջ՝ Աննա Հակոբյանի անկեղծ պահվածքը, առանց հուշարարների եւ տանելի հայերենով նրանց կողմից տեսակետների արտահայտումը պարզապես ակնահաճո եւ հուսադրող են: Իհարկե, ժամանակի հետ դրանք կսրբագրվեն. քսան տարի առաջ Նիկոլ Փաշինյանին ճանաչողները կարող են արձանագրել, թե տարիների քաղաքական փորձառությունն ինչպես աճեցրեց նրան ու դարձրեց զանգվածներին կառավարող քաղաքական գործիչ, իսկ նրա մեջ դրված անվերջ աճելու ու նորն ընկալելու մոտորը, վստահ ենք, նրան կամաց- կամաց կօժտի նաեւ գործադիրի կառավարման հմտություններով, համենայնդեպս՝ հուսով ենք: Համացանցով նրա կապը հանրության հետ այդ իմաստով կարեւոր է՝ բանկային անվտանգության կոճակի նման մի բան, հենց մի հարց նա միայնակ չկարողանա լուծել, կամ նրան վտանգ սպառնա այս կամ այն կլանից, նա անմիջապես կարող է սեղմել այդ կոճակը եւ կանչել իր թիկունքին՝ ժողովրդին:

Իսկ Արցախում մայիսյան եռատոնի ժամանակ նրա հանդիպումները պարզապես ցրում էին այն բամբասանքները, թե Նիկոլը գլուխ չի հանում արտաքին քաղաքականությունից, Արցախի խնդրից: Փաստորեն հանում է, նրա ասուլիսը վկա՝ Արցախին բանակցային սեղանին վերադարձնելու առաջնահերթության մասին հայտարարությամբ, Բակո Սահակյանի հետ հանդիպման անբռնազբոսությամբ...

Միֆ էին նաեւ այն կեղծ մտահոգությունները, թե Ռուսաստանը նրա անձի հետ կապված խնդիր կտեսնի՝ ՌԴ նախագահն առաջիններից մեկը շնորհավորեց ու հեռախոսազրույց ունեցավ Փաշինյանի հետ: Առհասարակ՝ եվրողեկավարների, ԱՄՆ պետկառույցների ներկայացուցիչների, դեսպանների ջերմ շնորհավորանքներն ու հայտարարությունները կարծես բնական եզրափակումն էին քսան օրից ավելի չտեւած ու աշխարհում նախադեպը չունեցած հայկական անարյուն հեղափոխության, որը դեռ հեղափոխությունների պատմության մեջ իր արժանի տեղը կգրավի անշուշտ եւ... այլ երկրներում կրկնվելու միտում կդրսեւորի՝ Ռուսաստանում սկսված բողոքի միջոցառումները, «Ուզում ենք, ինչպես Հայաստանում» կարգախոսներով, ձեզ հավաստում:

Հայկական հեղափոխությանը հմայք հաղորդեց նաեւ աշխարհահռչակ երգիչ Սերժ Թանկյանի ժամանումը եւ խորհրդարանի օթյակից Նիկոլ Փաշինյանի ընտրությանը հետեւելու նրա ժեստը:

## Ո՞վ կլինի Նիկոլի կառավարությունում

Նիկոլ Փաշինյանի ելույթն Ազգային ժողովում թերեւս ուրվագծում էր այն խնդիրները, որոնցով զբաղվելու են Նիկոլն ու իր կառավարությունը: Այս կառավարության (թեկուզ ժամանակավոր) հաջողելն արդեն հայ ժողովրդի հաջողելուն կհավասարվի, ոչ ավել, ոչ պակաս, ձախողելը կնշանակի արտագաղթի ու անհուսության նոր ալիք: Հուսով եմ՝ հանրությունը դա հասկանում է, եւ ինչպես հեղափոխության ժամանակ կանգնեց Փաշինյանի թիկունքին, հիմա էլ արդեն մի կողմ չի քաշվի ու քայլ առ քայլ ու հետեւողական մասնակից կլինի խնդիրների լուծմանը: Թեպետ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, որի անդամները հեղափոխության շարժիչ ուժն էին դարձել, ունի կառավարության իր ուրվագիծը, սակայն ինչպես Փաշինյանը հայտարարեց Ստեփանակերտում՝ «...քանի որ իրենք ձեւակերպել են այլ խնդիր, քան իշխանությունը վերցնելն է, այդ պատճառով կսկսենք բոլոր խորհրդարանական ուժերի հետ (նկատի ունի քննարկումները-Մ.Խ.), որոնց արդյունքում կձեւավորվի կառավարություն»: Այսինքն՝ խոսքը կարծես թե կոալիցիոն ժամանակավոր կառավարություն ստեղծելու մասին է:

Արդեն իսկ արտահոսքեր կան, որ նրա երկու փոխվարչապետները կարող են լինել Վաչե Գաբրիելյանն ու Արարատ Միրզոյանը, չնայած վերջինիս մասին ասվում է , որ նա կարող է դառնալ «Ելք» խմբակցության ղեկավար: Կլուծարվի՞ առաջին փոխվարչապետի պաշտոնը՝ համապատասխան օրենսդրական փոփոխությամբ, թե այն կօգտագործվի բավարարելու համար ծառուկյանականների հավակնությունները, կամ միգուցե Կարեն Կարապետյանով զսպելու հանրապետականների սաբոտաժային տրամադրությունները, դեռ հայտնի չէ: Հավանաբար Փաշինյանին սատարող «Ծառուկյան» դաշինքն ու ՀՅԴ-ն կունենան չորսական եւ երեքական պորտֆելներ: Որոշ պորտֆելներ կարող են մնալ անցյալ կառավարության պրոֆեսիոնալներին, օրինակ, կարծիք կա, որ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը կարող է դառնալ պաշտպանության նախարար: Փաշինյանն արդեն դիմել է նախագահ Արմեն Սարգսյանին՝ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին եւ ԱԱԾ պետ Գեորգի Կուտոյանին զբաղեցրած պաշտոններից ազատելու առաջարկով: Ավանդաբար այս կառույցներից Հայաստանում շատ բան է կախված՝ և՛ իշխանության ամրությունը, և՛ մարդկանց մոտ այս կառույցների հանդեպ վերաբերմունքը, և՛ երկրի անվտանգությունը: Փաշինյանն իրեն վստահելի մարդկանց նշանակելով այս պաշտոններին՝ կարող է որոշ առումով հակակշռել խորհրդարանում առաջացած վիճակը, միաժամանակ վերահսկելով օրինականության հաստատումը Հայաստանում: **Արծվիկ Մինասյանը**, որ մեզ հետ զրույցում եռանդով պատմում էր բազմաթիվ սկսած իր ձեռնարկների մասին բնապահպանության նախարարությունում, ցանկություն ունի շարունակել պաշտոնավարումը, չնայած այս պաշտոնի համար նաեւ տրվում է Փաշինյանի կուսակից Լենա Նազարյանի անունը: Սպորտի նախարար Հրաչյա Ռոստոմյանը կվերադառնա, արտաքին գործերի նախարարի թեկնածուի անուններ դժվար են տրվում, անգամ մենք լսեցինք նախկինում Վարդան Օսկանյանի խորհրդական Սալբի Ղազարյանի անունը, սակայն դա հավանաբար ցանկալի արտահոսք է ոմանց համար: Ամեն դեպքում արտգործնախարարի խնդիրը լուրջ է, մենք օրինակ, ափսոսում ենք Վիգեն Սարգսյանի նման կադրի որոշումը՝ քաղաքական հարթակում գործունեություն ծավալելու, այն դեպքում, երբ նա երբեք էլ առանձնապես քաղաքականացված չի եղել: Իսկ արտաքին ոլորտն այսօր առավել, քան երբեւէ բարդ է, ներքին խնդիրներին հավասար բարդ, տարածաշրջանը եռում է, ԱՄՆ-ը դուրս է եկել Իրանի հետ միջուկային համաձայնագրից, ու ոչ ոք դեռ չգիտե, զարգացումներն այստեղ ինչ սցենարով կընթանան: Այնպես որ՝ ոլորտը մեծ պրոֆեսիոնալի կարիքն ունի:

Կառավարությունից սպասվող առաջին քայլերը պետք է վերաբերեն մենաշնորհները վերացնելուն, մաքսային եւ հարկային դաշտում տոտալ օրինականություն հաստատելուն, ստվերը հարկային դաշտ բերելուն, գործարար բոլոր հաստատություններում ստվերային աշխատողներին ի հայտ բերելուն եւ գրանցելուն, օրենսդրական փոփոխություններ պատրաստելուն՝ հետագայում արտահերթ ընտրությունների անցկացման համար: Այսինքն՝ սեւ-բանվորական ու տանջալից աշխատանք է սկսվելու, որին միգուցե համաձայն չլինեն փափուկին սովոր մեր ներկա պաշտոնյաներից շատերը: Գումարած նրան, որ Ազգային ժողովում մեծամասնություն ունեցող ՀՀԿ-ն, դատելով իր վերահսկողության տակ գտնվող մամուլի հարձակումներից՝ առ Փաշինյանն ու նրա ձեռնարկած քայլերը, մտմտում է իր ռեւանշը: Փոխանակ ուրախ լինի եւ օգնի պետությունը ոտքի կանգնեցնելուն, այդպես հավաստելով քաղաքական կուսակցություն, եւ ոչ թե խմբիշխանություն լինելու իր բովանդակությունը:

## Սկսել միանգամից

Փաշինյանը մի շարք հայտարարություններ ընտրվելուց հետո արդեն կրկնել է՝ բիզնես-քվոտաներ եւ արհեստական մենաշնորհներ չեն լինելու, ով ինչ ուզում է՝ կարող է ներկրել Հայաստան, մաքսազերծումը երկու-երեք անգամ ավելի արագ եւ անխոչընդոտ է լինելու:

Կարող են հետաքննություններ սկսվել անօրինական ունեցվածքի ծագումնաբանությունը ստուգելու ուղղությամբ, հանրությունը կողջունի այդպիսի քայլը, ներդրումները եւս կախված կլինեն գործարար տարածքի իրական ազատականացման եւ օրինականության հաստատման քայլերից: Համենայնդեպս՝ Միացյալ Նահանգների հետաքննությունների դաշնային բյուրոն սկսել է ստուգել Լոս Անջելես արտահոսած հայկական ունեցվածքի եւ փողի ծագումնաբանությունը: Վենդետա չի լինելու, հայտարարել է Փաշինյանը, բայց դա ամենեւին չի նշանակում, որ անօրինական, պաշտոնեական լիազորությունների չարաշահմամբ եւ արհեստական մենաշնորհներով «վաստակված» միլիարդները չեն մտնելու բյուջե: Շուտով կկայանան առաջին անաչառ դատավճիռները, աշխատանքից կհեռացվեն կամ լիազորություններից կզրկվեն կոռումպացված պաշտոնյաներն ու դատավորները, արդարադատության համակարգը կսկսի մաքրվել չարդարադատությունից, եւ այլն: Նոր վարչապետի առաջին քայլերին հանրությունը հետեւում է շունչը պահած:

## Հեշտ չի լինելու

Փաշինյանի նախկին զինակից Լեւոն Տեր-Պետրոսյանը, կարծես տխրելով Փաշինյանի արձանագրած հաջողությունից, ոչ միայն չի շնորհավորում նրան, այլեւ մեկ անգամ եւս հիշեցնում է ակնհայտը՝ խորհրդարանական մեծամասնությունը միշտ կարող է վիժեցնել փոքրամասնության վարչապետի եւ կառավարության նախաձեռնությունները, իսկ հանրության աջակցության ռեսուրսն արդեն սպառված է: Ելքն արտահերթ ընտրություններն են, դրանք եւս բարդ են եւ օրենսդրության փոփոխության եւ անցկացման տեսակետից՝ խորհրդարանում ՀՀԿ-ի մեծամասնության պատճառով, որն իր քվեով անընդհատ վիժեցնելու կամ տապալելու է ամեն փոփոխություն: Սրանք, իհարկե, Փաշինյանը Տեր-Պետրոսյանից լավ է պատկերացնում: Մի տարբերությամբ՝ հանրության ակտիվ հատվածը, ի հեճուկս Տեր-Պետրոսյանի, դեռ երկար կլինի Փաշինյանի կողքին, լրագրողների մեծ մասը եւս՝ բացառությամբ ՀՀԿ-ից սնվող լրատվամիջոցների. սա շատ կարեւոր է: Բացի այդ առկա է հաղթողի սինդրոմը՝ Հայաստանի գլխավոր արծիվ Խաչիկ Ասրյանի՝ ՀՀԿ-ից դուրս գալու հայտը ձեզ օրինակ, ՀՀԿ-ական համայնքապետերի՝ ԲՀԿ-ի հետ ստվերային բանակցությունները եւս մի օրինակ, ՀՀԿ-ն շուտով այնքան կլղարանա պատեհապաշտներից, որ ՀՀԿ խորհրդարանական մեծամասնությունն անելիքն անգամ չի իմանա: Իսկ գործընթացների գլխավոր երաշխիքն այն անսահմանափակ լիազորությունների մեջ է, որոնք Սերժ Սարգսյանն անընդհատ կուտակում էր՝ միգուցե իր, միգուցե մեկ ուրիշի համար, բայց ճակատագրի հեգնանքով դրանք բաժին հասան Փաշինյանին ու նրա ժամանակավոր կառավարությանը: Այնպես որ Տեր-Պետրոսյանը հավատարիմ մնաց մինչեւ վերջ մութ ֆիգուր լինելու իր դերին:

Այժմ Փաշինյանի գլխավոր փորձությունը մոտակա օրերի ընթացքում կառավարության այնպիսի կազմ ներկայացնելն է, որը չի հիասթափեցնի հանրությանը, չի սնի Հայաստանում մինչեւ այժմ թագավորող թայֆայական մոտեցումների խրտվիլակը, չի լինի կլաններին կուլ գնալու ցուցիչ, չի անրջացնի կառավարման ինստիտուտը՝ արկածախնդիրներով եւ երեխաներով լցնելով գործադիրը: Դժվար, բայց ի վերջո հաղթահարելի փորձություն: Մյուս փորձությունն արտաքին հարթույթում է, որը կհավասարվի ոչ ավել, ոչ պակաս՝ Հայաստանը եւ նրա արտաքին գերակայությունները միջազգային ասպարեզում արժանապատիվ ներկայացնելու հայտի: Խոսքը մայիսի 14-ին Սոչիում կայանալիք ԵՏՄ վեհաժողովին Հայաստանի նոր վարչապետի մասնակցության մասին է, որը կարող է դառնալ միջազգային ասպարեզում վարչապետ Փաշինյանի առաջին պրեզենսը, որի որակը կախված կլինի միայն ու միայն նրանից: Նախատեսված է նաեւ Փաշինյան-Պուտին հանդիպում, իսկ ԵՏՄ անդամ երկրների հնաբնակ նախագահների ֆոնին Փաշինյանի հայտնությունը ԵՏՄ-ում տեսարժան կլինի, առավել եւս՝ նրա այն նախնական տեսակետների ֆոնին, թե անդամ երկրները բոլորը պետք է ջանան կառույցն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

AZG NEW SHABAT.QXD 10/05/2018 23:06 Page 4



# Բարձրացնենք ռուսահայության դերը Հայաստանի կյանքում

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**Մոսկվա**

Եվ այսպես Նիկոլ Փաշինյանն ընտրվեց Հայաստանի վարչապետ՝ ղեկավար: Սփյուռքահայերի, այդ թվում նաեւ ռուսահայերի համար խիստ շահեկան էին Փաշինյանի հավաստիացումները հայրենի երկրում բիզնեսի համար արդարացի պայմաններ ստեղծելու հարցում: Որպես Ռուսաստանում երկար տարիներ ապրած մարդ կարող եմ վստահաբար ասել, որ ռուսահայ շատ բիզնեսմեններ միշտ էլ մեծ ցանկություն են ունեցել ներդրումներ կատարել Հայաստանում, սակայն հիասթափվել են, բախվելով հայրենիքում բուն դրած հրեշավոր կոռուպցիայի, չինովնիկների շահախնդրական կամայականությունների հետ: Մնում է միայն, որ Փաշինյանը կարողանա իրագործել իր մտահղացումները: Ընդսմին, ռուսահայ համայնքի հնարավորությունները իրոք մեծ են:

Սակայն այս թեմայով խոսակցությունը կուզենայինք սկսել առաջին հայացքից անսովոր մի դիտարկումով: Ռուսաստանում եւ Հայաստանում տեղի ունեցող բեկումնային քաղաքական իրադարձությունների ժամանակ էական մի տարբերություն է նկատվում: Նման պարագայում իրենց երկրում ռուսները պարտադիր «հրեական հետք» են փնտրում: Նույնիսկ այս օրերին, երբ ընդդիմադիր Ալեքսեյ Նավալնին ցույցեր էր կազմակերպում «Ցար Պուտինի» դեմ, «առկա էր» հրեաների ակտիվ դերը այդ ընդվզումներում:

Հայաստանում քաղաքական բզկտումների ժամանակ բոլոր կողմերում էլ հայեր են, եթե նույնիսկ դրսից են, ապա ուրեմն սփյուռքահայեր են: Նույնիսկ Շարմազանովն էլ է հայ: Լավագույն դեպքում որոշ հերոսներ կարող են տեղայնացվել ըստ ծննդավայրի, ոչ ավել: Հրեական կամ այլ գործոն համենայն դեպս չկան:

Բայց որ հրեաները՝ հրեական համայնքը իսկապես իսկայական դեր են խաղում Ռուսաստանի քաղաքական-տնտեսական կյանքում, աներկբա է: Լավ թե վատ, դա ուրիշ հարց է: Ընդ որում, սա ասելով, բնավ էլ պարտադիր չէ, որ դու մեղադրվես անտիսեմիտիզմի մեջ: Պարզապես փաստն ես արձանագրում: Նույնիսկ մեր օրերում, երբ Իսրայելը պարբերաբար օդային հարձակումներ է գործում Սիրիայի ռազմական օբյեկտների վրա, ռուսները դրա մեջ էլ են հրեական «նենգ» խաղեր տեսնում ռուս-ամերիկյան առանց այն էլ գերլարված հարաբերությունները էլ ավելի փչացնելու գործում:

Բավական հաճախ բանը հասնում է նույնիսկ ծայրահեղությունների: Անգամ Թրամփի հակասական շատ գործողություններ ռուսները շաղկապում են ամերիկյան հզորագույն հրեական լոբբիի եւ Իսրայելի հետ: Հատկապես ներկա Արեւմուտք-Իրան խրթին հարաբերությունների պայմաններում: Անշուշտ հրեաներն իրենց բավարարված կզգային, եթե տապալեին Ասադին եւ Սիրիան կրկին հետ շպրտեին քաոսային իրավիճակի, լեգիտիմացնեին Գոլանի բարձունքները եւ առհասարակ քայլ առ քայլ իրականացնեին Նեղոսից մինչեւ Եփրատ Մեծ Իսրայել ստեղծելու իրենց մշտնջենական երազանքը: Սակայն այդ ճանապարհին, ռուսների կարծիքով, Իսրայելը այնուամենայնիվ չի կարող անտեսել Ռուսաստանի հետ ռազմական բախման հավանականությունը, ինչը կարող է ճակատագրական լինել առաջինի համար: «Իսրայելի համար շատ ավելի անվտանգ է, գրում է «Զավտրա» թերթը, ոչ թե մենամարտել Ռուսաստանի հետ, այլ իր շահերն իրագործել ներռուսաստանյան համայնքի միջոցով, որը մեր երկրում առանցքային դիրքեր ունի այն բոլոր ոլորտներում , որոնք վերաբերում են (ուշադրություն դարձրեք. Ռ.Հ.) պետության ազգային անվտանգությանն ու նրա ստրատեգիական զարգացմանը: Դրանք են՝ իշխանական կառույցները, էկոնոմիկան, ֆինանսները, մշակույթը, կրթությունը,քաղաքականությունը, ԶԼՄ-ները, հասարակական ու ոչ կառավարական կազմակերպությունները»: Թերթի կարծիքով, պատերազմ հրահրելու դեպքում ռուսաստանցի հրեաների դիրքերը մեկ ակնթարթում կարող են կորսվել, քանի որ ոչ մի իրեն հարգող պետություն չի կարող պատերազմական պայմաններում հանդուրժել նման «հինգերորդ շարասյուն» իր կարեւորագույն ստրատեգիական ճյուղերում: Այդ դեպքում ինչո՞ւ չգործել Ամերիկայի միջոցով:

Ասվածի մեջ գլխավոր ուշադրությունը կենտրոնացնենք հենց «հրեական համայնք» գործոնի վրա: Նացիոնալիստական «Զավտրա» թերթը բնավ էլ չի չափազանցեցնում հրեաների հիրավի ազդեցիկ դերը ռուսաց պետության վերոնշյալ ասպարեզներում: Իսրայելի բոլոր ղեկավարները, տարբեր առիթներով լինելով Մոսկվայում, պարտադիր քաղաքի խոշորագույն հանդիսասրահներում հանդիպում են իրենց ազգային համայնքի ներկայացուցիչների հետ, խորհրդակցում են նրանց հետ, «ցուցումներ» տալիս: Պետք է միայն տեսնել, թե ովքեր են այդ «ներկայացուցիչները»: Ռուսաստանցի հրեա մեծահարուստները հաճախ են խմբովին «ուխտագնացություն» կազմակերպում դեպի Ավետյաց երկիր: Զարմանալի համառությամբ եւ ունակությամբ մարդկային այս ցեղը կարողանում է պաշտպանել իր ազգային գերակա շահերը:

Եվ այս ֆոնի վրա նույնիսկ դժվար է համեմատություններ անել ռուսահրեա եւ ռուսահայ համայնքների միջեւ: Այսօր Ռուսաստանում ավելի շատ հայություն է ապրում, քան հայրենիքում, ինչը հազիվ թե դրական փաստ է: Առիթներ են եղել նշելու, որ Հայաստանում հնչող՝ «ապազգայնացված ու ձուլվող» համայնքի վերաբերյալ մտայնությունները սկիզբ են առնում տակավին խորհրդային տարիներից, երբ Ռուսաստանում պաշտոնապես չկար հայ ազգային կյանքը: Հիմա շատ բան է փոխվում եւ հատկապես Հայաստանից արտագաղթածների շնորհիվ ազգային կյանքը վերելք է ապրում: Ուրիշ հարց է, որ մինչ այժմ Հայաստանի ղեկավարության ու ռուսահայ համայնքի հարաբերությունները աչքի չեն ընկել առանձնակի ջերմությամբ ու ակտիվությամբ: Մինչդեռ մենք էլ Ռուսաստանում ունենք բազմաթիվ աչքի ընկնող անհատներ ամենատարբեր բնագավառներում: Սակայն մենք ճանապարհ ունենք անցնելու գոնե սկզբունքային հարցերում միասնական ամբողջություն դառնալու համար: Եվ իհարկե՝ հայրենիքի հետ ունեցած առնչություններում: Ըստ իս, Հայաստանի նոր ղեկավարությունը ճիշտ կվարվի, եթե հատուկ ուշադրություն դարձնի ռուսահայ համայնքին:

Հայաստանի ներդրումային քաղաքականությունը, առանց չափազանցության, թռիչք կկատարի, եթե Նիկոլ Փաշինյանին իրոք հաջողվի բիզնեսի համար ստեղծել խոստացած արդարացի պայմանները: Սա շատ բարդ խնդիր է, որ շատերին չի հաջողվում: Կոնկրետ ռուսահայերի վերաբերյալ կարծում եմ մեծ լումա կարող է ներդնել Ռուսաստանում Հայաստանի դեսպանությունը եւ մասնավորապես «**Ազգի**» բարեկամ դեսպան Վարդան Տողանյանը: Գուցե անհրաժեշտություն զգացվի ընդլայնել դեսպանության, այսպես ասած, տնտեսական բլոկը, որը հնարավորություն ստեղծի ակտիվ գործունեություն ծավալել հայկական (եւ ոչ միայն) գործարար շրջանակներում, նրանց մոլորյալ հայրենիքի տնտեսական կյանքին մասնակից դարձնելու նպատակով:

***Հ.Գ.*** *Նրբանկատ մի նկատառում: Հարգելի պարոն վարչապետ: Ընդդիմադիր գործունեության ընթացքում դուք հաճախ էիք սարկազմի ենթարկում Սերժիկ եւ Սաշիկ անունները, դրանք դիտելով որպես ինտելեկտուալ թուլության արգասիք: Սոցցանցերում, սակայն, գոհունակություն չի արտահայտվում նաեւ ձեր հայրանվան կապակցությամբ: Փառք աստծո, ձեր հայրը ողջ-առողջ է եւ կարող է փոխել իր անունը: Ցանկալի կլիներ, որ առնվազն Ռուսաստան մեկնելուց առաջ հանդես գայիք նոր հայրանունով: Ես կառաջարկեի հետեւյալ տարբերակը՝ Նիկոլ(այ) Վարդանի Փաշինյան:*

# Նոր Հայաստանն ու «վենդետան». ո՞վ՝ ո՞ւմ

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

**Նյու Յորք**

Հայկական հեղափոխության մասին միջազգային լրատվամիջոցների տեղում արված ռեպորտաժները աշխարհին ներկայացրեցին մի նոր Հայաստան, ուր մեր ժամանակներում կատարված աննախադեպ խաղաղ իշխանափոխությունը կդառնա քրեստոմատիկ օրինակ աշխարհում հետայսու տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացների համար: Հայկական հեղափոխության ֆենոմենը լավագույն գովազդ էր նաեւ մեր ազգի պատմության ու մշակույթի ճանաչման համար գլոբալ առումով: «Մեկ ամիս առաջ նա ցուցարար էր: Այժմ, Նիկոլ Փաշինյանը Հայաստանի ղեկավարն է»,- ասաց The New York Times-ը մայիսի 8-ին, զետեղելով ականատես լրագրող **Նիյըլ ՄակՖարքըհի** ուշագրավ հոդվածը:

Ամերիկյան մեդիադաշտում Հայաստանի դեպքերի մասին պատմող լրատվական «հրավառությանը», ազդեցիկների շարքում անմասն չմնացին լոկալ- նահանգային մեդիամիջոցները՝ «Orlando Sentinel», «Miami Herald»: Վերջինս անդրադարձել էր Հայաստանի նորընտիր վարչապետի Մայիսի 9-ի Արցախ կատարած այցին եւ արցախյան թեմայով արված վերջին հայտարարությանը, առ այն, որ Արցախը պետք է լինի բանակցային կողմ եւ ճանաչվի միջազգայնորեն, ինչին նակադարձել էր Ադրբեջանի ԱԳՆ մամլո քարտուղար **Հիքմեթ Հաջիեւը**. «Ի՞նչ է սա: Պարզամտությո՞ւն, խնդրի նկատմամբ անտեղյակությո՞ւն, հաղթողի խիզախությո՞ւն, կամ գուցե՝ բոլորը միասին: Ադրբեջանը պնդում է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի ցանկացած հանգուցալուծման դեպքում այն մնալու է Ադրբեջանի հանրապետության մաս»: Առհասարակ, հայկական հեղափոխության դրական լիցքը հուժկու հարված էր միլիոններ ծախսող ադրբեջանական հակահայ քարոզչամեքենային, որի պատվիրած մի քանի սադրիչ, ստահոդ հոդվածներ՝ «The American Interests», «Orientalreview.org», «IJR.com» առցանց կայքերում, ջանձիգ փորձեր էին խեղաթյուրելու Հայաստանում տեղի ունեցած ապրիլյան շարժումը, փնտրելով այնտեղ «ռուսական պրոբ», բնութագրելով այն որպես՝ անարխիայի դրսեւորում:

Սակայն եթե օտար լսարանի համար հայկական իրադարձությունները ունեին սոսկ խրոնոլոգիական նշանակություն, ապա հայկական Սփյուռքի ժամացույցը Երեւանի հրապարակի հետ գործում էր վայրկյանների ճշտությամբ: Ամերիկյան ամենահայաշատ Գլենդել քաղաքում տեղի ունեցած բազմամարդ ցույցերն ի պաշտպանություն Նիկոլ Փաշինյանի շարունակվեցին մինչեւ մայիսի 8-ի տրամաբանական ավարտը, ուր հայրենիք վերադառնալու, նոր Հայաստան կերտելու տրամադրություններ էին թեւածում: Վաշինգտոնում ՀՀ դեսպանատան մոտ ցույցի հավաքված երիտասարդները, թավշյա հեղափոխությանը զորավիգ իրենց լոզունգներով, հար եւ նման էին Երեւանի փողոցները թնդացնող «էրեխեքին»: Երեքշաբթի, ՀՀ նոր վարչապետի ընտրությունից անմիջապես հետո Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը (ANCA) կոչ է արել պետքարտուղար Մայք Պոմպեոյին աջակցել «Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիայի» միջոցով $140 մլ. դոլարի դրամաշնորհ հատկացնելու Հայաստանին, դպրոցներում կրթական ծրագրեր իրականացնելու համար: Մ. Նահանգները պետքարտուղարության մակարդակով շնորհավորեց ՀՀ նորընտիր վարչապետին, հավաստելով իր աջակցությունը Հայաստանում հաղթանակած ժողովրդավարությանը:

Ամերիկահայ համայնքի ճնշող մեծամասնության համար, սակայն, մայիսի 1-ին ԱԺ-ում ՀՀԿ 56 հոգու դրսեւորած քամահրանքը հրապարակում առավոտից կանգնած ժողովրդի նկատմամբ, վարչապետի ընտրության տապալված ելքով, ունեցավ շոկային ազդեցություն եւ ընկալվեց որպես՝ ազգային դավաճանություն: Այս պահը, թերեւս, ազգային շարժման ամենամռայլ դրվագներից էր, անկախ երեքշաբթի ԱԺ-ում ՀՀԿ-ի ընտրության վերադասավորումից: Ամերիկահայ կազմակերպությունները հայտնեցին, որ կդիմեն համապատասխան կառույցներին սառեցնելու համար ՀՀԿ-ական որոշ պատգամավորների տարիներ շարունակ Հայաստանից ԱՄՆ արտահոսող գումարների բանկային հաշիվները: Թալանված հսկայական միջոցները Հայաստան վերադարձնելու նպատակով մի շարք անհատների բանկային հաշիվներն արեւմտյան երկրների եւ օֆշորների բանկերում սառեցնելու վերաբերյալ հայտարարություն էր տարածել իր կայքէջում նաեւ՝ Եվրոպայի հայկական միությունների ֆորումը (ԵՀՄՖ): Թե որքանով են կոռուպցիոն մութ ու խրթին բացահայտումները տեղավորվելու Փաշինյանի հայտնած՝ «վենդետա չի լինելու» նախապայմանի մեջ, կյանքը ցույց կտա: Ակնհայտ է արդեն, որ հետ չի լինելու: Վիհի վրածվող բաժանարարն արդեն խորանում է նորի եւ նախկինի միջեւ: Առաջիկայում, ցավոք, ականատես կլինենք ընդդիմություն դարձած ՀՀԿ-ի կատաղի հակադրությանը:

Երիտասարդ, ազգընտիր ՀՀ վարչապետին այսօր անհրաժեշտ է Սփյուռքի անվերապահ աջակցությունը: Գլենդելի քաղաքապետ Զարեհ Սինանյանի օրինակով պետք է զորակոչվեն Սփյուռքում ապրող բիզնեսի, իրավունքի, ֆինանսական, ռազմական, բարձր տեխնոլոգիաների եւ այլ ոլորտի լավագույն մասնագետները, իրենց խորհրդատվությամբ սատարելու ՀՀ վարչապետին ու մասնակցելու նոր Հայաստանի կերտմանը:



AZG NEW SHABAT.QXD 10/05/2018 23:06 Page 5



ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Էս ի՞նչ եք անում, տղե՛րք

Ժողովրդի մեջ տարածված խոսք կա. «Սերժին ժողովուրդը սարքեց Սերժ»:

Հայաստանում սիրո, հանդուրժողականության, բաց ձեռքերի ու թավշյա հեղափոխություն եղավ, եւ մենք, լավ, ժողովրդավար վարչապետ ունենք: Ինչքան լավ բառեր են համադրված կողք-կողքի: Բայց, ինչպես գիտենք, հեղափոխությունը ռիսկային բան է. կարող են մարդիկ զոհվել, անգամ հնարավոր է կորցնել այն, հանուն ինչի ծնվում է հեղափոխությունը՝ պետականությունը: Բայց մենք մեր այս ռիսկային հեղափոխության ժամանակ ավելի շատ ձեռքբերումներ ունեցանք, քան՝ կորուստներ: Չնայած կուսները տարբեր էին, մեծ ու փոքր, եւ եղան այնպիսիները, որոնք բովանդակային առումով շրջանցեցին լավն ու վատը:

Հիշենք միայն երկուսն ու բավարարվենք: Առաջինը, ամենաաղետալին ու անդառնալին մանկահասակ երեխայի մահն էր. Աստված հոգին լուսավորի: Երկրորդը՝ մեծ, շատ մեծ, բայց հուսով եմ, այսուհետ կանխված ատելությունն էր, որի գագաթնակետը եղավ մի շատ «հարգարժան բժշկի» հայտարարությունը, որը մոռանալով, որ ինքը բժիշկ է, Հիպոկրատի երդում է տվել, վերջին հաշվով՝ մարդ է, հայտարարեց, որ հանուն ժողովրդի, հանուն սիրո ու հանդուրժողականության այսուհետեւ ինքը հրաժարվում է բուժօգնություն ցույց տալ հանրապետականներին ու նրանց ընտանիքի անդամներին: Շեշտում եմ հենց այս երկուսը, որովհետեւ երեխայի կյանքն ամենաթանկն էր, եւ անհնար է նրան վերակենդանացնել, իսկ ատելության քարոզն ու մարդու առողջությանն ուղղված արհամարհանք լսեցինք մի մարդուց, ով երդվել է ամեն բան անել՝ հանուն մարդու առողջության, կրկնում եմ՝ մարդու՝ առանց ազգային պատկանելիության:




Ասացի, որ ձեռքբերումներ էլ ունեցանք, այն էլ՝ բազմաթիվ: Ի թիվս այդ բազմաթիվ ձեռքբերումների, ունեցանք նաեւ մեծ սեր, ավելի ճիշտ՝ անհատի պաշտամունք, Նիկոլի պաշտամունք, չնայած դեռ հարց է՝ ձեռքբերո՞ւմ է, թե՞ կորուստ: Մենք պատմությունից ծանոթ ենք անհատի պաշտամունքի բազմաթիվ դրսեւորումների: Բայց Նիկոլի դեպքն ուրիշ է, նա ոչ մեկին նման չէ, որովհետեւ սեր ու հանդուրժողականություն է քարոզում, սա ասում եմ ամենայն պատասխանատվությամբ ու լրջությամբ, որովհետեւ նա արժանի է իր ժողովրդի սիրուն ու հարգանքին: Բայց ժողովուրդը, եւ խնդիրը ժողովրդի մեջ է, կարող է իր առաջնորդին հավատարմություն ցույց տալու սխալ ձեւ ընտրել, որն արդեն ընտրված է, ու փչացնել ամեն ինչ: Դա տեղի է ունենում պատահաբար, հենց այն ժամանակ, երբ ժողովուրդն ամեն կերպ Նիկոլ Փաշինյանին ուզում է համոզել, որ ինքը ոչ թե լավ քաղաքական գործիչ է, իսկ դա այդպես է, այլ՝ մեսիա, մարգարե, ոչ թե Տավուշի մարզից է, այլ՝ ուրիշ մոլորակից: Առաջին հայացքից մանրուք թվացող այս խնդիրը հետո աղետ է դառնալու, այնպես՝ ինչպես անցած 30 տարիները: Այն ժամանակ երկիրը տվեցինք «կռված տղեքին» , նրանք էլ իրենց «պահած» երկրի հետ վարվեցին այնպես, ինչպես ցանկացան: Հիմա էլ երկիրը տալիս ենք մեզ այդ «կռված տղերքից» ազատողին, տալիս ենք իրե՛ն: Հասկանո՞ւմ եք, լրջության զգացում ունե՞ք: Իհարկե, ես միտում չունեմ Նիկոլ Փաշինյանին համեմատել այդ «կռված տղեքի» հետ, բայց, ինչպես ոստիկանն է սիրում ասել՝ սթափվե՛ք:

Մարդիկ գլխարկներ ու շապիկներ են կրում, որոնց վրա գրված է ոչ թե հեղափոխություն, այլ՝ Նիկոլ: Ոչ թե արդարություն են վանկարկում, այլ՝ Նիկոլ: Ոչ թե՝ Հայաստան, այլ՝ Նիկոլ: Նիկոլ, միայն Նիկոլ: Ես սա ասում եմ որպես այդ շարժման ամենօրյա մասնակից, որպես Նիկոլ Փաշինյան քաղաքական գործչին սատարող մարդ: Ես սա ասում եմ, ցավով տեսնելով, որ դուք մոռացել եք Նիկոլ Փաշինյանի կողքին կանգնած մարդկանց, ու ամենակարեւորին՝ ժողովրդին, ձեզ. ինքներդ ձեզ եք մոռացել... **Էս ի՞նչ եք անում, տղերք***:

Ձեր արածը, ձեր անհատապաշտությունը, ձեր հուզառատությունն իսկական չարիք է դառնալու ձեր ու բոլորիս գլխին, որովհետեւ ամեն ինչ չափազանց է: Եվ չզարմանաք, որ մի օր ցանկություն զգաք՝ Նիկոլ Փաշինյանի դեմ բողոքելու: Իմացեք, այդ ամենի համար նա մեղավոր չի լինելու, մեղավորը դուք էիք, դուք եք, ու դուք եք լինելու՝ ձեր անհատի պաշտամունքով: Եվ կրկնում եմ, ես սա ասում եմ որպես շարժման մասնակից, Նիկոլի՝ ժողովրդի կողմնակից:

Ուշքի եկեք, ընկերներ, ուշքի եկեք, քանի ուշագնաց չենք ու չենք եղել, եւ ինչ-որ նախկին «մոդայիկ» վարչապետ դրսից «մարդ» չի բերել մեզ «ուշքի բերելու» համար:

***Ընգծված հատվածը Վազգեն Սարգսյանի՝ 1990թ. գրած մի քննադատական հոդվածի վերնագիրն է:***

# Քյաբաբից՝ Հեմինգուեյ

Մի քանի օր առաջ Հայաստանում տեղի ունեցավ մի ուշագրավ բան. սովորական քաղաքացիները բռնել են ոստիկանության գնդապետին, ով մինչեւ բռնվելը հասցրել էր բանկ թալանել (ջհանդամը) եւ մի մարդ սպանել (ցավոք սրտի), մյուսին՝ վիրավորել: Կրկնում եմ՝ սա արել են սովորական քաղաքացիները: Ես իհարկե չեմ պնդի, որ մարդիկ այսկերպ չէին անի՝ մինչեւ հեղափոխությունը, ոչ էլ ուզում եմ ասել, որ հեղափոխությունն է ստիպել ոստիկանության գնդապետին բանկ թալանել, բայց արձանագրենք. հեղափոխությունից հետո Հայաստանում ոստիկանության գնդապետն օրը ցերեկով բանկ է թալանել ու նրան չեզոքացրել են սովորական քաղաքացիները:

Նրանցից մեկի՝ Լիպոյի հետ ծանոթացա երկու օր առաջ: Լիպոն կանաչ աչքեր ունի եւ մուգ-կապույտ Volkswagen: Սիրում է քյաբաբ եւ իր մորքուրի տղային, որի անունն էլ Անդո է, բանակից եկել է 5 տարի առաջ, ունի կին, Opel եւ սիրուհի: Դուրս եկա Հանրային հեռուստաընկերությունից՝ երեկոյան ժամը 10-ի կողմերը: Քանի որ ավտոբուս այդ ժամերին էլ չի լինում, կանգնեցի փողոցում, որպեսզի տաքսով հասնեմ տուն, եւ ահա՝ մուգ կապույտ Volkswagen-ը եկավ: Նստեցի ու ասացի՝ «Բանգլադեշ»: Ուրիշ տաքսիստները, երբ նստում եմ ու ասում՝ Բանգլադեշ, միանգամից ուրախանում են, քանի որ Նորքից՝ Բանգլադեշ ահագին երկար ճանապարհ է ու կարելի է այդ ընթացքում համ լավ փող աշխատել, համ էլ հասկանալ, թե ի վերջո ե՞րբ է աշխատելու Նաիրիս գործարանը: Լիպոն, սակայն, տխրեց, Լիպոն ուրիշ տղա է: Ապերու,- ասաց,- արի ես քեզ տանեմ քաղաք, դու ընդեղից քո խոդով գնա: Ես, քանի որ տուն հասնելու այլ տարբերակ չունեի, չնայած Մարուքյանն ասում է՝ Ելք կա, նստեցի Լիպոյի կողքին: Ասաց, որ Մոնումենտով Քանաքեռ է գնում, ինձ Ռայկոմ կիջեցնի: Հասանք Ռայկոմ, ասում եմ՝ ինչքա՞ն պետք է տամ, ասաց՝ «Ոչ մի բան, ապերու, էս փողը կտաս մի ուրիշ ազիզ ախպոր, թող քեզ տուն հասցնի»: Ես իհարկե ուրախացա, որ հեղափոխությունից հետո նման բաներ լինում են, բայց ողջ ճանապարհին տխրել էի, որ փաստորեն ՀՀԿ-ն ռաբիսի հետ կապ չունի, որ մեկին հաղթում ես, մյուսը չի հեռանում՝ Ծառուկյանի ասած՝ համապատասխանաբար: Հետո Լիպոն ասաց. «Սպասի տենամ մորքուրիս տղեն ստեղ ա, քեզ տանի»: Քանի որ Լիպոն ինձ մինչեւ Ռայկոմ ձրի էր բերել, որոշեցի սպասեմ, մանավանդ, որ Լիպոն, չնայած կանաչ աչքեր ուներ, բայց նաեւ այնպիսի դեմք, որ կարող էր նեղանալ ինձանից, որ իր մորքուրի տղայից ավելի ազիզ ախպեր գոյություն ունի աշխարհում:

Պարզվեց՝ մորքուրի տղան Զեյթունում է: Լիպոն ասաց՝ «ապերու, արի քեզ տանեմ Զեյթուն, ընդեղից քեզ կտանի»: Մեղքս ինչ թաքցնեմ՝ ասացի «արի»: Ճանապարհին Լիպոն զանգահարեց Զեյթունի Սիթիի մոտ գործող քյաբաբանոցի պահեստապետին, ասաց, որ սոված գալիս է, որ մի հատ մեծ քյաբաբ սարքի: Հետո ինձ խնդրեց, թե կլինի՞ սկզբից գնանք քյաբաբի հետեւից, նոր՝ մորքուրի տղու: Ասացի՝ իհարկե, քանի որ այս պատմությունն ինձ սկսել էր դուր գալ, չնայած տասը րոպեից Չեմպիոնների լիգայի պատասխան կիսաեզրափակչում «Ռոմա» ընդունելու էր ինձ համար շատ սիրելի «Լիվերպուլին»: Մինչ կհասնեինք քյաբաբանոց, Լիպոն ասաց մի բան, որը երբեք չեմ մոռանա. «Ապերու,-ասաց,-էս հեղափոխություն-բան սաղ սուս բաներ են, ես մենակ գիտեմ, որ Նիկոլը նստեց վարչապետ՝ ես դրա հաջորդ օրը էլի էս մաշնովս տաքսավաս եմ անելու: Բայց կարեւորը էս հարիֆ ժողովուրդը հասկացավ, որ ինքը հարիֆ չի»: Հասանք քյաբաբանոց: Լիպոն ասաց՝ «ապերու, սպասի, հեսա վեգալեմ գամ, կուզե՞ս մի հատ էլ քեզ բերեմ»: Ասացի ոչ, չնայած քյաբաբ սիրում եմ, չնայած ռաբիս չեմ: Լիպոն եկավ տասը րոպեից. կա՛մ ես հոգեբանությունից բան չեմ հասկանում, կամ էլ նա զարմացավ, որ ես մեքենայում խելոք սպասել եմ, չնայած Զեյթունի Սիթիի մոտ լիքը տաքսիներ կային, որոնք ինձ մեծ սիրով կտանեին Բանգլադեշ, մանավանդ հիմա, երբ սիրո հեղափոխությունը եղել է: Առաջին կծից հետո քյաբաբի հոտը տարածվեց մեքենայի մեջ, Լիպոն փակեց պատուհանը, քանի որ մրսում էր, համ էլ ժամն արդեն 23-ն էր: Հասանք ինչ-որ խանութի մոտ, որտեղ պետք է լիներ Լիպոյի մորքուրի տղան՝ Անդոն: Չկար: Իջանք ու սպասեցինք: Անդոն եկավ տասը րոպեից: Հետո ճանապարհին ինձ՝ որպես իր ախպեր Լիպոյի ազիզ ապեր, խոստովանեց, որ ուշացավ, քանի որ սիրուհուն (ինքը սիրուհի չասաց, ուղղակի չեմ սիրում մյուս բառը) տուն էր տանում, երբ հասել են, պարզվել է, որ սիրուհին ոսկեղենը մոռացել է խորթ հոր տանը, հետ են դարձել, վերցրել, հետո նորից հետ է տարել տուն, հիմա էլ ինձ տանում է տուն, որպեսզի ինքը գնա տուն, քանի որ այսօր փոքր աղջկա ծննդյան օրն է ու կինը տորթ է թխել: Ճանապարհին պարզվեց, որ Անդոն գազ չունի, ավելի ճիշտ՝ Անդոյի Opel-ը: Հետ դարձանք Շամպայն, գազը լցրեցինք ու Անդոն, ինչպես խոստացավ ինձ, ուղիղ 17 րոպեից ինձ հասցրեց Բանգլադեշ: Ընդամենը 1500 դրամով: Այդ ընթացքում Ռոմա-Լիվերպուլ խաղի հաշիվն արդեն 2:2 էր:

Հաջորդ օրը, երբ իմացա բանկի վրա հարձակված ոստիկանության գնդապետին վնասազերծած քաղաքացիների մասին, հիշեցի Լիպոյին ու Անդոյին: Մենք իսկապես հրաշալի քաղաքացիներ ունենք՝ հանցագործություն չհանդուրժող, հանցագործին բռնող, բարի, քյաբաբասեր, ախպերություն գնահատող, ապերությանը հասնող, հարիֆ, բայց հարիֆացնող, լիալուսնի տակ սիրուհիների հետ արեւոտ ծովափի մասին երազող, սոված, բայց ավտոյով, Հայաստանի դրոշով մեքենայի մեջ ադրբեջանական մուղամ լսող, նման կերպ վարվողների վրա գոռացող... Խայտաբղետ, դարուփոս, սոված, լփոշ, երազող, երեւակայող, դուխով: Ու այս ամենը Կոելյո կարդալուց հետո, բա որ Հեմինգուեյ կարդայինք՝ ինչե՜ր կանեինք...

**Կա միայն այսօրը եւ ուրիշ ոչինչ: Չկա ո՛չ երեկ, ո՛չ վաղը: Քանի՞ տարեկան պետք է դառնաս, որպեսզի իմանաս դա: Կա միայն ներկան, եւ եթե ներկան ընդամենը երկու օր է, ապա այդ երկու օրը քո ողջ կյանքն է, եւ դրանում ամեն ինչ չափի մեջ կլինի: Ահա թե ինչպես են ապրում մի ողջ կյանք երկու օրում: Եթե դադարես բողոքել ու պահանջել այնպիսի բաներ, որոնք երբեւէ չես ստանալու, դու լավ կյանք կունենաս. Հեմինգուեյ:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 10/05/2018 23:06 Page 6



# Հայկական հեղափոխության առանձնահատկությունները

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

պ.գ.թ., ՌԱԿ կենտրոնական վարչության անդամ

Վերջին շաբաթների ընթացքում համաշխարհային լրատվամիջոցների խորագրերին նաեւ Հայաստանն էր եւ այն ամենը՝ ինչը տեղի էր ունենում մեր երկրում: Համոզված կարելի է պնդել, որ Հայաստանին նվիրված այսքան հոդվածներ եւ վերլուծություններ նախկինում երբեք չէին եղել եւ պատճառը, ինչպես հասկանում ենք, տեղի ունեցած եւ արդեն «թավշյա հեղափոխություն» անունը ստացած իրադարձություններն էին, որոնք մայիսի 8-ին ավարտվեցին վարչապետի պաշտոնում ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանի ընտրությամբ:

Թե իրականում ինչ տեղի ունեցավ վերջին մեկ ամսվա ընթացքում, դեռեւս մանրակրկիտ ուսումնասիրության եւ եզրահանգման կարիք ունի, սակայն այսօր իսկ պարզ էր, որ այս իրադրաձությունները պատմության մեջ կմտնեն որպես հայկական ֆենոմեն: Նման ձեւակերպումը պայմանավորված է ոչ միայն տեղի ունեցածի բացառիկությամբ՝ դրա խաղաղ բնույթով, այլեւ կիրառված նոր տեխնոլոգիաներով, որոնք օգտագործվեցին եւ որոնց մի մասը զուտ հայկական ստեղծագործական մտքի արդյունք էին եւ նախկինում, այլ երկրներում, երբեք չէին կիրառվել:

Ընդդիմության ղեկավար Նիկոլ Փաշինյանի եւ նրա թիմի կողմից նախաձեռնած քայլարշավը դա ոչ թե անհուսության նշան էր, ինչպես գրում էր մամուլը այդ իրադարձության առաջին օրերին, այլ լավ մտածված քաղտեխնոլոգիա, որի նպատակ էր բնակչությանը ցույց տալ, որ միայն ակտիվ գործողությամբ է հնարավոր կանխել Սերժ Սարգսյաի կողմից իր իշխանության արհեստական երկարացման փորձը: Հենց ակտիվ գործողությունը, այլ ոչ թե պասիվ պայքարի ձեւն էր, որ գրավեց երիտասարդության ուշադրությունը, եւ նրանք միացան այդ քայլարշավին:

Ակտիվ պայքարի սկզբունքը՝ փողոցներ փակելը, Երեւանի փողոցներով անընդհատ շարժվելը, մեկ տեղում չկենտրոնանալը, սրանք այն գործողություններն էին, որոնք դժվարացնում էին ոստիկանության աշխատանքը եւ հեշտացնում ցուցարար երիտասարդների գործողությունները: Եվ իհարկե, այս ամեը հնարավոր չէր լինի առանց կապի ժամանակակից միջոցների՝ սմարտֆոնների ու սոցցանցերի, որոնք ակտիվ կերպով «աջակցում» էին երիտասարդությանը՝ գործողությունները համակարգելու ու համաստեղելու հնարավորություն տալիս:

Ժամանակի ընթացքում պայքարի այս մեթոդները եւ երիտասարդության ակտիվությունը հնարավորություն տվեց բողոքի գործողությունների աշխարհագրությունը մեծացնել Երեւանից բացի ընդգրկելով նաեւ մյուս մարզերը եւ քաղաքները: Կարելի է ասել՝ կիրառվեց բողոքի գործողությունների կառավարման ցանցային համակարգ, որը հնարավորություն էր տալիս ոչ միայն դրանք համակարգել եւ սինխրոնացնել, այլեւ շարունակաբար տարածել ե՛ւ Հայաստանում ե՛ւ Սփյուռքում:

Սփյուռքի ակտիվությունը նույնպես իր ձեւի մեջ աննախադեպ էր: Նախկինում եւս հայտնի էին փաստեր, երբ Սփյուռքյան մի շարք գաղութներում բողոքի գործողություններ էին տեղի ունենում ընդդեմ Հայաստանի Հանրապետության իշխանությունների, սակայն նմանատիպ տարածում եւ զանգվածայնություն այն երբեք չէր ունեցել: Այս գործողությունների արդյունքում, կարելի է ասել, զարթնեցին նույնիսկ հայկական այն համայնքները, որոնք թվում էր թե անտարբեր են հայաստանյան իրականության հանդեպ:

Սերժ Սարգսյանի եւ Հանրապետական կուսակցության 20-ամյա իշխանության դեմ սկսված բողոքի աննախադեպ գործողությունները, կարելի է ասել ի վերջո ավարտվեցին բողոքարարների՝ ընդդիմության հաղթանակով եւ վարչապետ ընտրվեց Նիկոլ Փաշինյանը, որը թեեւ չունի քաղաքական մեծամասնությունը խորհրդարանում, սակայն ունի բնակչության լայն աջակցությունը, ինչն էլ առանձնահատուկ է դարձնում այս իրավիճակը Հայաստանում: Նկատենք, որ սա աննախադեպ է նաեւ համաշխարհային քաղաքական պատմության տեսակետից, երբ բնակչության հսկայական զանգվածի ճնշման պայմաններում, խորհրդարանական մեծամասնությունը ընդունում է որոշում, որը հակասում է նրա քաղաքական կամքին:



Վարչապետի պաշտոնում Նիկոլ Փաշինյանի ընտրությամբ կայունանում է քաղաքական իրավիճակը երկրում՝ դադարում են դասադուլները, գործադուլները եւ բողոքի մյուս ակցիաները եւ ՀՀ պատմության մեջ առաջին անգամ ընդդիմության ղեկավարը օրինական կերպով ընտրվում է պետության փաստացի ղեկավար: Գաղտնիք չէ, որ խորհրդարանական կառավարման պայմաններում հենց վարչապետն է հանդիսանում պետության թիվ մեկ քաղաքական գործիչը, որն իր ձեռքն է կենտրոնացնում պետության ողջ ղեկավարությունը:

Սակայն մյուս կողմից էլ, մասնագիտական շրջանակների համար հասկանալի է, որ վարչապետի ընտրությամբ խնդիրները չեն լուծվում, այլ միայն նոր են սկսվում: Հասկանալի է, որ սպասումները նոր վարչապետից շատ ավելի են, քան եթե վարչապետ լիներ Սերժ Սարգսյանը: Վերջինիս հեռացմամբ եւ Փաշինյանի ընտրությամբ բնակչությունը ակնկալում է, որ իսկապես կսկսվեն իրական բարեփոխումներ, ինչը կազդի ոչ միայն պետության, այլեւ ամեն մի քաղաքացու կյանքի որակի վրա:

Տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը նոր էներգիա եւ նոր հույս է արթնացրել բնակչության ու հատկապես երիտասարդության շրջանում, այն ոգեւորել է սփյուռքահայությանը ու ապացուցել, որ Հայաստանում հնարավոր են փոփոխություններ ու դրանք կարող են լինել խորքային: Այս ոգեւորությունն է, որ հնարավորություն է ստեղծում սկսել տնտեսական ու քաղաքական բարեփոխումներ իրականացնել ու բարելավել կյանքը Հայաստանում: Այս պայմաններում կարծում եմ յուրաքանչյուր հայ, անկախ նրանից, թե նա ինչպես է վերաբերվում քաղաքական այս կամ այն ուժին կամ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, պետք է օգնի պետության հզորացմանը:

Պետք է ընդունենք, որը տեղի ունեցածը իր ձեւի մեջ շատ նման է 88-ին սկսված Ղարաբաղյան շարժմանը, ինչի հետեւանքով իշխանության եկավ ընդդիմությունը ներկայացնող ՀՀՇ-ն, հանձին նրա ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանի, սակայն իշխանության գալուց հետո վերջինս այդպես էլ չդարձավ նույն այդ շարժման գաղափարաբանության շարունակողը, խորը հիասթափություն առաջացնելով այդ շարժման կողմնակիցների շրջանում: Նիկոլ Փաշինյանի հնարավոր ձախողումը, ինչի մասին արդեն իսկ խոսում են իրենց ինտելեկտուալ համարող շրջանակները, չի բխում Հայաստանի շահերից: Հետեւաբար ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, Սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ, պետք է իրականացնի հնարավորը այս հեղափոխության ստեղծած էներգիան ճիշտ օգտագործելու ու Հայաստանին տնտեսապես եւ քաղաքականապես օգնելու համար:

Թավշյա հեղափոխությունը իրականում նոր է սկսվում եւ պետք է նպաստել, որ այսուհետ, սկսված բողոքի ակցիաներից հետո տեղի ունեցած իշխանափոխությունը ու նոր վարչակազմի կառավարումը լինի նույնքան կրեատիվ ու ստեղծագործ, ինչպիսին բողոքի ակցիաներն էին Երեւանում եւ Հայաստանի մյուս մարզերում: Հեղափոխություն կայանում է, երբ այն վերածվում է նոր գաղափարների ու նորարարությունների, որոնք կիրառվում են պետության կառավարման գործում: Այս առումով Նիկոլ Փաշինյանին ու նրա թիմին մեծ աշխատանք է սպասվում եւ վերջիններս պետք է ապացուցեն, որ իրենց նպատակը ուղղակի իշխանափոխությունը չէր, այլ քաղաքական նոր իրականության ստեղծումը, որը հնարավորություն կտա առավել ազատ ու անկաշկանդ պայմաններում ստեղծագործ աշխատանքով կերտել նոր Հայաստան:

# Շատ սիրելուց շատ չեն խոսում

Իտալացի պատմաբան, դիվանագետ, զինվոր եւ գրող Բաղդասարե Կաստիլիոնեն, ում մասին հայտնի է այն, որ նա եղել է Նովիլարայի կոմսը, մի առիթով ասել է՝ «Ով ուժգին է սիրում, քիչ է խոսում»: Իհարկե կոմս Կաստիլիոնեն սա ասել է 16-րդ դարում՝ մեր սիրո հեղափոխությունից 5 դար առաջ, բայց ամեն դեպքում, նման բան, նույնիսկ 16-րդ դարում ասելու համար, պետք էր դուխով լինել...

Եթե երկու ամիս առաջ որեւէ մեկն ասեր, որ երկու ամիս անց Նիկոլ Փաշինյանը դառնալու է Հայաստանի վարչապետ, ապա կարելի էր հանգիստ պատասխանել՝ «Իյա, իրո՞ք»: Դարձավ, Հայաստանի Ազգային ժողովն իր Հանրապետական մեծամասնությամբ Փաշինյանին ընտրեց վարչապետ ու հիմա նա՝ կուզի Բաղրամյան 26-ում կնստի, կուզի՝ Հանրապետության հրապարակում՝ Կառավարության շենքում, կուզի վենդետա կանի, կուզի՝ չի անի, կուզի քաղբանտարկյալներին կազատի, կուզի՝ ոչ բոլորին, կուզի՝ կշարունակի սիրել, կուզի՝ կշարունակի ատել... Մի խոսքով, այն ինչ կարող էր անել Սերժ Սարգսյանը՝ վերջին տասը տարիների ընթացքում, հիմա կարող է անել Նիկոլ Փաշինյանը: Ավելին, Փաշինյանն ի տարբերություն Սերժ Սարգսյանի կարող է մի բան էլ անել. օրինակ նա կարող է ուղերձով դիմել ժողովրդին, թե բա՝ Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիներ, առաջիկա կիրակի օրը, հաշվի առնելով տաք եղանակը, գնում ենք Արագածի լանջերը՝ երգելու: Եթե նման բան ասեր Սերժ Սարգսյանը, որեւէ մեկը տեղից չէր շարժվի, Փաշինյանի ասելու դեպքում ժողովուրդը կհագնի իր՝ «Դուխով» շապիկները եւ եթե պետք է նույնիսկ ոտքով կհասնի Արագածի լանջերին, եթե կարիք կա՝ նույնիսկ գագաթին, եթե երգելուց բացի նաեւ պետք չէ, ու եթե Նիկոլն ասի, նույնիսկ կպարի...Սա լավ է, մարդիկ ուրախ են, նրանք նշում են, որ վերջապես Հայաստանն ունեցավ մի ղեկավար, որին ամբողջ ժողովուրդը սիրում է, բայց սերը քծնանքից տարբերվում է նրանով, որ առաջինը մասսայական զբաղմունք չէ, լինում են իհարկե դեպքեր, բայց հենց այդ դեպքերից հետո էլ առաջացել է քծնանք բառը: Իմիջիայլոց, այս օրերին հանկարծ հայտնի դարձավ, որ Հայաստանում օճառի արտադրության ծավալներն ավելացել են...

Նախքան վարչապետ դառնալը Փաշինյանն արեց մի խիստ ուշագրավ հայտարարություն. Մայիսի 7-ին՝ Հանրապետության հրապարակում, Սերժի, բայց Թանկյան կողքին կանգնած, նա հայտարարեց, որ վաղը՝ այսինքն մայիսի 8-ին՝ իր վարչապետ ընտրվելու օրը, հայտարարում ենք ոչ աշխատանքային օր: Մեր աշխատասեր ժողովուրդն ուրախությունից բացականչեց ու սա շատ կարեւոր է: Բանն այն է, որ մայիսի 8-ը այսուհետ կարող է համարվել այս շարժման դե յուրե հաղթանակի օր եւ ամեն տարի նշվել որպես տոն: Այսինքն մենք բոլորս ամեն տարվա մայիսի 8-ին հագնենք մեր սպիտակ վերնաշապիկները, դուրս գանք հրապարակ ու փուչիկներով եւ ծաղիկներով նշենք՝ պայմանականորեն ՀՀ հպարտ քաղաքացու, իսկ իրականում՝ Նիկոլ Փաշինյանի իշխանության գալու օրը: Մոտավորապես Ադրբեջանի պես, որտեղ ժողովուրդը Հեյդար Ալիեւի ծնունդն է ազգովին նշում, որին ի դեպ ադրբեջանցի ժողովուրդը պաշտում է, համարյա այնպես, ինչպես մենք՝ Նիկոլին:

Բայց անցած լինի, նկատի ունեմ՝ հեղափոխությունը: Վստահեցնում եմ, որ հեղափոխությունները Հայաստանում անցած փուլ հայտարարելը հենց առաջին հերթին Փաշինյանի ցանկությունն է, այնպես որ եթե նա մի օր ասի՝ Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիներ, հեղափոխությունների էջը Հայաստանում համարում ենք փակված, ու եթե նա սա ասի ավելի վաղ քան կխոսի մենաշնորհների, օլիգարխիայի, քաղաքական, տնտեսական հետապնդումների էջերը փակելուց առաջ, չհիասթափվեք. հեղափոխությամբ եկածը հեղափոխության ամենամեծ թշնամին է դառնում, առաջի՛ն հերթին հեղափոխության:

Ու հիմա մենք որքան էլ հաղթել ենք, չնայած ես հաղթանակ բառը չէի շռայլի, մանավանդ մայիս ամսին, բայց վտանգավոր իրավիճակում ենք: Խնդիրն այն է, որ չափազանց սիրելը չափազանց ատելու պես վտանգավոր է, գուցե ավելի: Քանի որ չափազանց ատելուց՝ մարդիկ, ինչպես համոզվեցինք, դուրս են գալիս հրապարակ, փակում են փողոցները, մերժում են անարդարությունը, բռնությունը, վախը, կոռուպցիան, ապա չափազանց սիրելուց մարդիկ... Չէ, էլի դուրս են գալիս փողոց, բայց կուրացած:

Վարչապետ Փաշինյանը պետք է նախ եւ առաջ այս կուրացման հարցը լուծի, եթե իհարկե այս շարժումը ժողովրդի հաղթանակն է, ոչ թե անձամբ իր:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ՆԱԻՐ ՅԱՆ

# Էյֆորիայից հետո

Համաժողովրդական ինքնորոշման ու պայքարի վրա հենված Նիկոլ Փաշինյանի հետ հասարակության գրեթե բոլոր շերտերը հույսեր են կապում: Ու շատ շուտով պարզ հարցեր են հնչելու՝ ե՞րբ է թոշակն ու աշխատավարձը բարձրանալու, ե՞րբ են աշխատատեղեր ստեղծվելու, ե՞րբ ենք մեր մաշկի վրա զգալու բարեփոխված կյանքի շոշափելի նշանները: Այս օրերին օդում պտտվում են քաղաքական կանխատեսումների ու վարկածների տարբեր տրամաչափի փուչիկներ՝ բա չե՞ք իմացել՝ ասում են Քոչարյանը հետ է գալու, կամ առաջին փոխվարչապետը Խաչատուր Սուքիասյանն է լինելու, Տարոն Մարգարյանն էլի քաղաքապետ է մնալու, Նիկոլը ստիպված է լինելու հենվել եղած ռեսուրսների վրա, վա՜յ, չէ, ի՞նչ եք ասում, Նիկոլը կտրուկ փոփոխությունների, կոշտ քայլերի է գնալու եւ այլն, եւ այլն: Իսկ այդ ընթացքում Փաշինյանն ապագա կառավարման մեթոդների մասին ընդհանուր ակնարկներ է արել միայն՝ վենդետտաներ չեն լինելու, կառավարության մեջ գործարարներ չեն լինելու, խաղի կանոնները փոխվելու են:

Պարզ տրամաբանությամբ բոլորն են հասկանում եւ ընդունում, որ ամենադժվար ժամանակները դեռ առջեւում են. կիսավեր երկրի կյանքը նոր էջից սկսելը բարդ գործընթաց է լինելու: Մտավախությունների հետ մեկտեղ՝ անգամ փորձառու քաղաքագետներն ու փորձագետները համոզված են, որ նոր Հայաստան կառուցելն անհնար չէ:

Իսկ մտավախությունները պատճառներ ունեն, նախադեպը՝ 1988-ի արցախյան շարժումը, երբ նորանկախ Հայաստանի իշխանություններին ժողովուրդը բառացիորեն իր ուսերի վրա դրած բերեց: Եւ իշխանությունները հենց այդ ժամանակվանից ի գիտություն ընդունեցին, որ ժողովրդի ուսերը լավագույն դիրքն ու տեղն են իրենց համար: Նույն տեղն ու դիրքը շարունակեցին կիրառել նաեւ նրանց հաջորդները: Ինչո՞ւ ուսեր, որովհետեւ այնտեղից դեպի գլուխ բարձրանալը շատ հեշտ է: Նրանք դրժեցին բոլոր այն արժեքները, որոնց վրա հենվելով՝ քաղաքական ասպարեզ էին մտել: Լեւոն Տեր-Պետրոսյանին բախտ էր վիճակվել նոր, մաքուր էջի վրա գրել մեր երկրի պատմությունն ու կյանքը: Ու նա հենց սկզբից սխալ գրեց, նրան հաջորդողներն էլ ոչ թե սխալների ուղղում արեցին, այլ սխալները շարունակեցին, ամրագրեցին ու օրինաչափ դարձրին: Իշխանության եկած բոլոր այրերն իրենց թիմերով արհամարհեցին բոլոր արժեքները, իսկ որ ամենասարսափելին է՝ ոչնչացրին ժողովրդավարական արժեքները: Ժողովրդավարական առողջ շարժումներն ու արժեքները 30 տարվա ընթացքում բոլոր իշխանավորներն ու ընդդիմությունները անխտիր տանուլ են տվել ու մսխել, վիժեցրել են ու փչացրել ժողովրդական ազնիվ մղումների բոլոր սերմերը: 1988-ի շարժումը Արցախն Ադրբեջանից ազատագրելու նպատակ ուներ: Այն իրավի պատմական հեղափոխություն էր: Կարճ ժամանակ հետո շարժումը նոր թափ ստացավ՝ պայքար հանուն անկախության, ինչը նշանակում էր, որ Հայաստանը մերժում է միակարծության, մենիշխանության վարչակարգը. կատարվեցին հասարակարգային փոփոխություններ: Դա քաղաքական, վարչակարգային, ազգային-ազատագրական, ազգային գիտակցության զարթոնքի շարժում էր:

30 տարի անց տեղի ունեցած թավշյա հեղափոխությունն ըստ էության իր օրակարգում ներառում էր 30 տարի առաջ տեղի ունեցած համաժողովրդական շարժման գրեթե բոլոր դրույթներն ու դրդապատճառները՝ բացի Արցախի ազատագրումից: Այն պայքար էր միակարծության ու մենիշխանության վարչակարգի դեմ, որն ըստ պայքարողների՝ ժողովրդի նպատակների՝ պետք է իր հետ բերի նաեւ հասարակարգային փոփոխություններ: Այլ խնդիր է, որ վերջին հարցում ժողովրդի նպատակները միգուցեեւ չհամընկնեն հեղափոխության լիդերի նպատակների հետ: Այս պայքարն իր կառուցվածքով ու նպատակներով ինքնին ապստամբություն էր՝ ընդդեմ բռնակալության: Ապստամբներին միավորում էր մի գաղափար, մի ցանկություն՝ ուղղված իշխանություններին ՝ ի սեր Աստծո, հեռացեք, խաղաղ, լուռ հեռացեք: Ոչ միայն վերջին 10 տարում, այլեւ 1990-ից ի վեր՝ բոլոր իշխանավորների օրոք, բոլոր վարչակարգերում ոչ մի նախագահ չի համապատասխանել երկրի ղեկավարի՝ ժողովրդի պատկերացրած կերպարին, նրա վեհ գաղափարներին ու ձգտումներին: Մինչդեռ նրանցից յուրաքանչյուրի համար պետք է մեծ պատիվ լիներ այսպիսի ժողովրդին ու այսպիսի երկիր ղեկավարելը: Հայաստանի Հանրապետության ղեկավարի դիրքերում նրանք որդեգրել են նեղ, ցածր նպատակներ ու գայթակղություններ, անձնական շահ՝ պետական շահի փոխարեն:

Նիկոլ Փաշինյանը հեղափոխությունը սկսեց քայլելով, բայց կարճ ժամանակ անց ժողովուրդը սովորույթի ուժով նրան նորից ուսերի վրա բարձրացրեց ու այդպես տարավ-դրեց վարչապետի աթոռին՝ հավատալով նրա ազնիվ մղումներին, հայամետ ու պետականամետ ձգտումներին: Ժողովուրդը չպետք է հապաղի, հենց այս օրերին պետք է իր ուսերին դրած ու մինչեւ վարչապետի աթոռ հասցրած Փաշինյանին ներկայացնի իր հստակ պահանջներն ու խնդիրները: Իսկ այդ պահանջները ներկայացնելու համար բազմաթիվ միջոցներ կան, օրինակ՝ հասարակական, իրավական, սոցիալական, կրթական շահերը ներկայացնող բազմաթիվ կառույցներ ու հարթակներ: Հետո այնպես չլինի, որ Փաշինյանին անվերապահորեն վստահած ժողովրդին մատուցվի մոտավորապես այսպիսի իրողություն՝ դե ստացվեց այն, ինչ ստացվեց: Փաշինյանը վենդետտաներ կկիրառի, թե՞ ոչ, հանրապետականների հետ կհամագործակցի՞, Եվրասիական միության, թե՞ Եվրոմիության, ժողովրդի լայն զանգվածներին դա չի հուզելու եւ չի հետաքրքրելու: Նրանց հետաքրքրելու են հեղափոխության, ժողովրդի կողմից վստահված վարչապետի կառավարման դրական արդյունքները, որոնք, ի դեպ, չպետք է իրենց երկար սպասեցնել տան: Չէ՞ որ ժողովուրդը մեկ վայրկյան անգամ չկասկածեց ու չհապաղեց, երբ մեկ մարդու պես կանգնել էր նրա կողքին եւ Նիկոլ Փաշինյանին հակառակ իր կամքի չի առաջարկել վարչապետի՝ երկրի գլխավոր ղեկավարի պաշտոնը:

Ոչ հոռետես կամ լավատես, այլ իրատես քաղաքագետներն ու փորձագետները չեն բացառում, որ կգա նաեւ հիասթափության ժամանակը: Անչափելի ոգեւորությանն ու էնտուզիազմին սովորաբար այդ փուլն է հետեւում: Կասկածելի է, թե մեր երկրում շռնդալից իշխանափոխություն կլինի:

Այն թերացումները, որ մինչեւ հիմա եղել են երկրի կառավարման համակարգում՝ սկսած թանկացումներից մինչեւ ընտրակեղծիք ու արցախյան հարցի փակուղի, ժողովուրդը մինչեւ հիմա հնազանդ տարել է ու հանդուրժել: Ու այս պայքարը նաեւ ընդվզում ու բողոք էր հենց իր այդ կարգավիճակի դեմ: Այսուհետեւ մեր հասարակությունը պետք է փոխի իր վերաբերմունքն ու տրամադրվածությունը, պետք է վերջ դնի իներտությանը եւ հետեւողական լինի Նիկոլ Փաշինյանի ու նրա ձեւավորած իշխանության գործողությունների նկատմամբ: Մինչեւ հիմա ժողովրդին դեմ էին տալիս ղեկավարների, որոնց նա՛ չէր ընտրել: Միգուցե նախկին իշխանությունների բռնարարքների, կամայականությունների նկատմամբ ժողովրդի հանդուրժողականությունը, ցածրաձայն բողոքն իր ներսում, իր ընտանիքում սահմանափակելու կարգավիճակը հենց նրանից էր գալիս, որ ժողովուրդը երբեք չի ունեցել լեգիտիմ իշխանություններ. եթե այս մարդուն ես չեմ ընտրել, նրանից ի՞նչ պահանջեմ:

Իսկ այս դեպքում ժողովո՛ւրդն ընտրեց, ու հիմա երկրի ղեկավարի պաշտոնում ժողովրդի ընտրյալն է: Այդ ընտրյալի նկատմամբ համաժողովրդական վերաբերմունքն անգամ անձի պաշտամունքի վերածվելու վտանգավոր դրսեւորումներ ունեցավ: Ինչ-որ տեղ հասկանալի են այդ ծայրահեղ վերաբերմունքի պատճառները. ժողովուրդը երբեք չի ունեցել առաջնորդ, որին չէր կասկածի, ավելին՝ անվերապահ կվստահեր: Բայց շուտով անչափելի ոգեւորությունը կդառնա չափելի, հետո չափավոր, ու կգա սթափ դատելու ժամանակը: Եվ թող ոչ մեկը փափուկ բարձ չդնի իր գլխի տակ ու մտածի, թե այդ բարձից ժողովրդի գլխի տակ էլ է դնելու: Հիմա ժամանակն է, որ ժողովրդի կուտակած էներգիան, ինտելեկտը, արժանապատվորեն ապրելու, լավ երկիր կառուցելու պատրաստակամությունն ու ձգտումները ճիշտ ու արդյունավետ օգտագործվեն: Իսկ դրա համար կառավարման ճիշտ համակարգ, ուղղորդումներ եւ մեթոդներ են պետք: Ու շատ-շատ է պետք, որ Նիկոլ Փաշինյանն իր նախորդների պես հանկարծ չհեռանա ժողովրդից, միշտ լինի այն իրականության մեջ, որտեղ ժողովուրդն է ապրում:

Նախորդ անգամներին մենք շատ ենք տեսել, թե ինչպես նոր ղեկավարի ֆան-կլուբի անդամները, որ քարոզարշավների ընթացքում գոնե ցուցադրաբար պատրաստ են եղել սեփական շորերը պատռել՝ հանուն առաջնորդի, հոշոտել հակառակորդին, նաեւ ժողովրդին, հալած յուղի պես անցել են իշխանական պաշտոնների: Եվ նույն ագրեսիայով սկսել են ինքնադրսեւորվել ու ինքնահաստատվել արդեն ղեկավար պաշտոններում: Դրանք միակարծությունը դավանանքի տեղ ընդունած, մածունի միայն սեւը պատկերացնող, քաղաքական կարիերայի շարունակությունը յուղոտ բիզնեսի վերածող այն զրահապատ մեքենաներն են, որոնք հողին կհավասարեցնեն նրանց, ովքեր իրենց ճանապարհին թեկուզ պատահաբար կհայտնվեն: Սուտ կլինի, եթե ասենք, որ թավշյա հեղափոխության ժամանակ նման զրահապատների չտեսանք, ու չենք մտածում, թե նրանց նպատակն իշխանության կազմում հայտնվելը չէ: Երբ նպատակները դառնում են կիրք, կիրքը դառնում է վարքագիծ ու ագրեսիա: Պատմությունն ապացուցել է, մենք մեր մաշկի վրա էլ ենք զգացել, որ նման կրքոտ կարիերիստները հետո իսկական պատուհաս են դառնում ժողովրդի գլխին եւ նրանցից ավելի դժվար է լինում ազատվելը, քան իրենց ղեկավարից:

Ահավասիկ, վերջին ամենաթարմ ապացույցը՝ իշխանությունից հրաժարված Սերժ Սարգսյանն ու իշխանության փեշերից կառչած ՀՀԿ-ն:

Բոլոր օրինաչափություններից դուրս թավշյա հեղափոխություն իրականացրած իմ երկրում ամենայն հավանականությամբ կունենանք ընդդիմություն՝ ի դեմս ՀՀԿ-ի: Որպես կանոն՝ ընդդիմությունը միշտ լինում է իշխանությունների դեմ ու ժողովրդի կողմից: Երեւի մենք առաջին երկիրը կդառնանք, որտեղ ընդդիմությունը ժողովրդի դեմ է լինելու, ժողովուրդն էլ՝ ընդդիմության:

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

# Ժողովուրդը մի՛շտ պիտի գործոն լինի

**Մի ժամանակ ֆրանսիացիներն ասում էին. «Ամենաիմաստունը Վոլտերն է, սակայն Վոլտերից ավելի իմաստուն է ժողովուրդը»:**

**Այո՛, չկա ժողովրդից ավելի իմաստունը, ուստիեւ, մեծ հաշվով, միշտ էլ ճշմարիտ եւ արդարացի է ժողովուրդը (չշփոթել ամբոխի եւ ոչ էլ քոչվոր-բարբարոս ցեղախմբերի հետ): Եվ եթե ոտքի է կանգնում ժողովուրդը արտաքին կամ ներքին բռնության դեմ՝ պաշտպանելու իր անվտանգությունը, գոյությունը, ինքնությունը եւ ազատությունը, ապա թե՛ դրսի եւ թե՛ ներսի ուժերն անհրաժեշտաբար պիտի հաշվի նստեն նրա կամարտահայտության հետ, անսան նրա ձայնին:**

**Մեր ժողովուրդն իր բազմահազարամյա թե՛ ողբերգական եւ թե՛ փառապանծ պատմության մեջ արձանագրել է նաեւ բազում ժողովրդական շարժումներ: Անհրաժեշտ է, որ մենք միշտ հիշենք դրանք՝ մեր այսօրվա եւ ապագայի քայլերն ավելի ճիշտ ու անշեղ կատարելու համար, քանի որ, ինչպես ասել է Հեգելը, պատմության դասերը անցյալի սխալները չկրկնելու համար են: Իսկ այդ դասերն ուսուցանում են, որ երբ ոտքի է կանգնում ժողովուրդը՝ դրդված ազգապահպանման ազդակներից, ապա անհրաժեշտ է, որ բոլորը՝ անկախ դիրքից եւ հայացքներից, կանգնեն նրա կողքին:**

**Նշենք նաեւ մի կարեւոր հանգամանք: Իրական ժողովրդական շարժումները (տարաբնույթ ապստամբություններ, հեղափոխություններ, քաղաքացիական անհնազանդություններ եւ այլն) հաճախ ավարտվում են նաեւ պարտությամբ կամ անհաջողությամբ, սակայն միշտ էլ դրանք անհետք չեն մնում. ունենում են այս կամ այն չափի դրական արդյունքներ եւ նախապատրաստում են ժողովրդական հաջորդ շարժումները: Անցյալի մեր խոշոր համաժողովրդական ընդվզումները հարատեւ ազդակ են հանդիսացել մեր հետագա բոլոր մեծ թե փոքր ժողովրդական շարժումների համար՝ սկսած Վարդանանց ազատագրական պայքարից մինչեւ փառապանծ Սարդարապատ, մինչեւ 1965-ի ազգային զարթոնքը եւ, անշուշտ, ղարաբաղյան եւ անկախության համազգային հզոր շարժումը...**

**Արեւմտյան քաղաքակրթական տիպին պատկանող բոլոր երկրները որդեգրել են դեռեւս Հին Հունաստանում ծնունդ առած պետական կառավարման դեմոկրատական-ժողովրդավարական մոդելը: Հայությունը եւս, որպես արեւմտյան-եվրոպական քաղաքակրթական տիպին պատկանող ժողովուրդ, իր նոր անկախ պետականությունը ստեղծելով՝ նույնպես որդեգրեց ժողովրդավարությունը, այն է՝ սահմանադրորեն հաստատագրեց ժողովրդին որպես հանրապետության լիիրավ տեր: Սակայն, ցավոք, մեզանում ժողովրդավարությունը երկար չտեւեց եւ ժողովրդից զավթվեց-ուզուրպացվեց նրա օրինական իշխանությունը: Դա նախապատրաստվեց եւ փաստացիորեն տեղի ունեցավ 1999-ի տխրահռչակ եւ ողբերգական հոկտեմբերի 27-ին, եւ Հայաստանի հանրապետությունը 21-րդ դար մտավ որպես ոչ ժողովրդավար պետություն:**

**Այդուհետեւ յոթ տարուց ավելի ժողովուրդը ստիպված իրացրեց ընդդիմադիրի իր սահմանափակ իրավունքները: Սակայն դրանք եւս բռնի ուժով զավթվեցին նրանից, ինչը կատարվեց 2008 թվականի նույնպես տխրահռչակ եւ ողբերգական մարտի 1-ին: Այսուհանդերձ, իր իշխանությունից եւ հանրային կյանքում բոլոր լծակներից զրկված ժողովուրդը շարունակեց գործել՝ ապացուցելով, որ չի վերածվել «ոչխարի հոտի» եւ, թեկուզ իրավազրկված, բայց մնացել է գործոն, որի հետ պիտի հաշվի նստել: Դրա ապացույցն էին տարբեր քաղաքական ուժերի եւ ասպարեզ իջած նոր երիտասարդության կազմակերպած տարաբնույթ մեծ եւ փոքր ընդվզումները, որոնց հետ, ցավոք, հաշվի չնստեց ուզուրպացիոն իշխանությունը եւ այս կամ այն ձեւով խեղդեց դրանք...**

**Սակայն, ինչպես նշեցինք, ոչ մի շարժում անհետեւանք չի մնում, ուստիեւ անակնկալորեն, բայց ոչ պատահական, պայթեց ապրիլյան հզոր համաժողովրդական շարժումը՝ որպես թավշյա հեղափոխություն: Հայ ժողովուրդն իր հայրենիքում եւ ի սփյուռս աշխարհի ոտքի կանգնեց եւ ի լուր աշխարհի հնչեցրեց իր իմաստուն ձայնը: Այդ շարժումը բացառապես ներքին ազգային բնույթի էր, լիովին հասունացած ներքին դրդապատճառներով եւ միտված էր ժողովրդից զավթված իշխանությունը վերադարձնել իր օրինական տիրոջը: Հասկանալի է, որ այդ գործը հիմնականում ստանձնեց ազգի լավագույն գենետիկական արժանիքները ժառանգած երիտասարդությունը, որ զերծ է խորհրդային եւ հետխորհրդային ժամանակների բարդույթներից, ուստիեւ նա փառապանծ հաղթանակ տարավ:**

**Դիմելով համաժողովրդական շարժման շնորհիվ կայացող ու կազմակերպվող մեր նոր կառավարությանը եւ, առհասարակ, գալիք բոլոր իշխանություններին, հորդորում եմ մշտապես ականջալուր լինել իրենց գերիշխանի՝ ժողովրդի բոլոր պահանջներին՝ հիշեցնելով, որ ժողովուրդը յուրաքանչյուրից իմաստուն է:**

**Ինչ վերաբերում է ժողովրդին, ապա նա միշտ պիտի լինի գործուն, որ միշտ մնա գործոն, որպեսզի այլեւս երբեք ու երբեք իրեն պատկանող իշխանությունը ստիպված չլինի զիջել ու կորցնել՝ վտանգելով իր ինքնությունն ու ազատությունը:**

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
դգդ

# Կառավարություն՝ 100 տարի առաջ

Հայոց մեծ հաղթանակների (Ավարայր, Մեծ հայրենական, Շուշի) Մայիսի ու համաժողովրդական ոգեւորության ալեբախումների ընդհանուր ետնախորքի վրա կրկին ու կրկին անհրաժեշտություն է զգացվում գնահատել ու ամենայն պատասխանատվությամբ արժեւորել մեր պետականությունը՝ որպես բարձրագույն արժեք, որպես համազգային ոգու, նվիրումի ու մաքառումների արդյունք, որպես հայոց գոյի, տեսակի ու գալիքի երաշխիք: Ակամա մտաբերեցի մարդկային ցեղի ու հասարակական երեւույթների հայտնի «Սպիրալաձեւ զարգացման» տեսությունը: Համաձայն որի բոլոր ժամանակներում բոլոր երեւույթները կրկնվում են նոր մակարդակներում:

Մարդկային ճերմակ հեղեղով բերնեբերան լցված Հանրապետության հրապարակում շատ դանդաղ առաջանալիս ակամա «մտաբերեցի» Հայաստանի Առաջին հանրապետության հռչակման օրերին ողջ հայությանը պատած ոգեւորությունը: Փառք Տիրոջը, փոփոխություններն այս անգամ համեմատելի չեն նույնիսկ: 1918-ին ցեղասպանված, սոված ու տկլոր հայությունն էր ոգեւորվել անկախության փաստով, իսկ այսօր՝ երկու հազար տարի անընդհատ զիջելուց ու փոքրանալուց սթափված՝ Արցախյան հաղթանակը կռած, ինքն իրեն ու բոլոր կաշկանդող խոչընդոտները հաղթահարած նոր, երիտասարդ հայը:

Պատմաբանիս համար հոգեհարազատ «Սպիրալաձեւ զարգացման» տեսության դիտակետից նայելով էլ անհրաժեշտ համարեցի շատ հակիրճ խոսել Առաջին հանրապետության մասին:

Ռուսաստանում 1917 թ. Փետրվարյան «մեծ ու անարյուն» հեղափոխության հաղթանակից հետո, իշխանության հին կառույցների վերացումը եւ նորերի ստեղծումն առաջ բերեցին խառնաշփոթ ու խիստ անկայուն վիճակ: Հեղափոխության մեղրամիսը կարճ տեւեց եւ Ժամանակավոր կառավարության նշանակած Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ՕԶաԿոմ, նախագահ՝ Խառլամով) շատ արագ հեղինակազրկվեց: Ստեղծված խառը կացությունից ելք գտնելու նպատակով հայ ազգային կուսակցությունները հրավիրեցին Արեւելահայերի 1-ին համագումարը, որը տեղի ունեցավ 1917թ. սեպտեմբերի 28-հոկտեմբերի 3-ը Թիֆլիսում:

Համագումարը, որի պատվիրակների կեսից ավելին ՀՅ Դաշնակցություն կուսակցության անդամներ էին, քննության առավ արտաքին ու ներքին բնույթի (ինքնապաշտպանության, գաղթականության, պարենավորման եւ այլն) մի շարք կարեւոր խնդիրներ: Վերջում բազմակուսակցական սկզբունքով ընտրվեց Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդ (այսուհետեւ՝ ՀԱԽ): Խորհրդի նախագահ ընտրվեց հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանը: Նշենք, որ պատմական դեպքերի բերումով համախորհրդակցությունը ստեղծելով համազգային միասնական պատասխանատու մարմին՝ հանձին Հայոց ազգային խորհրդի, իրականացրեց իր հիմնական եւ գլխավոր նպատակը: Ավելացնենք, որ Հայոց ազգային խորհուրդը փաստորեն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանությունը մինչեւ Հայաստանի անկախության հռչակումը:

Այստեղ էին կենտրոնացել արեւելահայ մտավորականության սերուցքը եւ տարածաշրջանի հայ քաղաքական եւ գործարար ասպարեզի գործիչների հիմնական մասը: ՀԱԽ-ը կազմված էր 15 անդամից՝ 6 դաշնակցական (Ավետիս Ահարոնյան, Աբրահամ Գյուլխանդանյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Խաչատուր Կարճիկյան, Նիկոլ Աղբալյան, Կորյուն Ղազազյան), 2 սոցիալիստ-հեղափոխական (էսէռ Հովհաննես Տեր-Օհանյան, Լեւոն Աթաբեկյան), 1 հնչակյան (Ղազար Տեր-Ղազարյան), 1 մենշեւիկ (Արամայիս Երզնկյան), 3 անկուսակցական (Տիգրան Բեկզադյան, Ստեփան Մամիկոնյան, Պետրոս Զաքարյան) եւ Հայ ժողովրդական կուսակցության 2 ներկայացուցիչ (Սամսոն Հարությունյան, Հարություն Այվազյան) (1):

Բացի Թիֆլիսում ստեղծված Հայոց կենտրոնական ազգային խորհրդից, տեղերում նույնպես ստեղծվեցին ազգային խորհուրդներ՝ որպես մասնաճյուղեր եւ տեղական իշխանություն: Այսպես, հայ ազգային խորհուրդներ ստեղծվեցին Բաքվում, Երեւանում, Ղարաբաղում, Ախալքալաքում եւ այլուր:

Մայիսի 28-ին Թիֆլիսում՝ Արամյանցի տանը, բուռն քննարկումներից հետո Հայոց ազգային խորհուրդը որոշեց եւ իր առաջին կոչում հայտարարեց. «Ազգային խորհուրդը ստանձնում է ազգային բոլոր գործերի գերագույն ղեկավարությունը որպես գործադիր մարմին»: Հայոց ազգային խորհուրդն ուներ իր բաժինները կամ կոմիսարիատները՝ զինվորական, գաղթականության, բժշկական, դպրոցական, պարենավորման եւ այլն: ՀԱԽ-ի զինվորական միությունն ստեղծեց Հայկական ազգային կորպուս՝ գեներալ Թովմաս Նազարբեկովի (Նազարբեկյան) գլխավորությամբ, որն ստանձնեց Հայաստանի պաշտպանությունը 1918 թ-ի ծանր ժամանակաշրջանում:

1918 թ. մայիսի 26-ին մի քանի ժամ տեւած Հայոց ազգային Խորհրդի նիստում, որի օրակարգում հիմնականը՝ «հայկական գաւառների ապագայի» հարցն էր, առաջարկված վեց կետերից, այդ թվում Հայաստանի անկախության հռչակում, ոչ մեկը բավարար ձայն չի հավաքում եւ չի ընդունվում, բացի մեկից: Դրա հեղինակը ՀԺԿ անդամ Լեւոն Թումանյանն էր եւ այն տվյալ պահի համար թերեւս լավագույն լուծում էր. «Նկատի ունենալով որ Վրաստանի եւ Ատրպէյճանի անկախութեան հրապարակումով լուծարուած է Անդրկովկասեան անկախութիւնը, Հայոց Ազգային խորհուրդը ժամանակաւորապէս իր վրայ վերցնում է կառավարչական գործառոյթներ հայկական գաւառների նկատմամբ»: Առաջարկն ստանում է 7 ձայն եւ համարվում ընդունված:

Անկախության մասին ՀՀ կառավարությունը հայտարարեց ավելի ուշ՝ 1918 թ. հունիսի 13-ին: Իսկ 1918 թ. հունիսի 7-ին Հայոց Ազգային խորհուրդը (13 կողմ եւ 2 դեմ) կառավարության նախագահ ընտրեց Հովհաննես Քաջազնունուն: Իսկ վերջինս խորհրդարանի հաստատմանը ներկայացրեց Հայաստանի Առաջին հանրապետության առաջին կառավարության կազմը՝ Վարչապետ՝ Հովհաննես Քաջազնունի, Արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, Ներքին գործերի՝ Արամ Մանուկյան, Ֆինանսների՝ Խաչատուր Կարճիկյան, Ռազմական՝ Հովհաննես Հախվերդյան:


ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Армянскій Національн. Совѣтъ
объявляетъ
РЕСПУБЛИКИ АРМЕНІИ

Հուլիսին Երեւանում մի քանի ամիս անընդմեջ ծանրագույն պայմաններում իշխանություն իրականացնող Արամ Մանուկյանի ճնշման ներքո՝ 1918 թ. հուլիսի 15-ին Հայաստանի կառավարության կազմը՝ թողնելով իր գրեթե ողջ շարժական ու անշարժ գույքը Վրաստանում, Թիֆլիսից տեղափոխվում է Երեւան: Կառավարության կազմին մեկնելու ժամանակ կայարանում Վրաստանի որեւէ պաշտոնյա ներկա չի լինում: Դրան հակառակ Ղազախի կայարանում կառավարությանն ադրբեջանցիները ճոխ ընդունելություն են կազմակերպում ու ճանապարհում դեպի Երեւան, որտեղ հուլիսի 17-ին նրանց փառահեղ կերպով ընդունում է Արամ Մանուկյանը:

Ազգային խորհուրդն ու ՀՀ կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվելու հետեւանքով հայ քաղաքական կյանքի կենտրոնը դարձավ Երեւանը: Այստեղ կազմվեց նաեւ Հայաստանի խորհրդարանը: Նորակազմ խորհրդարանը ՀԺԿ անդամ Ստ. Մալխասյանի առաջարկով հայկական եռագույնը համարեց ՀՀ պետական դրոշ:

Նորակազմ կառավարությունը ներկայացրեց հայտարարագիր, որի համաձայն իր գործունեության առաջնահերթ խնդիրներն էր համարում. ա) կասեցնել երկրի տնտեսության հետագա քայքայումը, բ) հաստատել կարգ ու կանոն ամեն ինչում, գ) իրականացնել դատաիրավական բարեփոխումներ, դ) բացել հաղորդակցության ուղիները, ե) վերականգնել կապի միջոցները, զ) հնարավորինս մեղմացնել սովն ու գաղթականների ծանր վիճակը, է) ստեղծել սեփական դրամական համակարգ, ը) վերակառուցել երկրի ռազմուժը, թ) կարգավորել հարաբերությունները հարեւան երկրների հետ եւ այլն (2): Խմբակցությունները հիմնականում հավանություն տվեցին կառավարության այդ նախագծին (3):

**Այսօր՝ 2018 թ. մայիսի 8-ին, ՀՀ խորհրդարանում ձայների 59 կողմ եւ 42 դեմ հարաբերակցությամբ երկրի նոր վարչապետ ընտրվեց: Գաղտնիք չէ, որ նրա անձի ու թիմի հետ ողջ ժողովուրդը մեծ հույսեր է կապում: Տիրոջ կամոք այդ սպասելիքների մեծ մասը թող իրականություն դառնան, որպեսզի պատերազմ ու հոգեբանական պատնեշներ հաղթահարած ժողովուրդս շտկի մեջքը, ժպտա ու ծիծաղի լիաթոք եւ պարզ քայլի Նոր աշխարհում արժանավորների ամենաառաջին շարքերում:** 08.05.2018

1) ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 1-3:
2) ՀԱԱ, ֆ. 222, ցուցակ 1, գործ 141:
3) ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 146:

# Ամեն ինչ բացել չի կարելի

**Երբեւէ մտածե՞լ եք, թե ինչ կանեիք, եթե մեկ օրով հայտնվեիք Բաղրամյան 26-ում, հենց այնպես չէ՝ որպես երկրի վարչապետ: Նիկոլ Փաշինյանն, օրինակ, որը հիշեցնեմ, Հայաստանի վարչապետն է, առաջին օրը Բաղրամյան 26-ում անցկացրեց բավականին ուրախ: Նա նախ ընդունեց ԱԱԾ՝ արդեն նախկին տնօրեն Գեորգի Կուտոյանին, լսեց նրա զեկույցը, ապա ընդունեց ՊՆ՝ կրկին նախկին ղեկավար Վիգեն Սարգսյանին, նրա զեկույցն էլ լսեց, իսկ երեկոյան, իր մտերիմներով հավաքված, ուղիղ եթեր մտավ իր իսկ հեռախոսով՝ հենց Բաղրամյան 26-ից՝ Հայաստանի բոլոր պարզ քաղաքացիներին ցուցադրելով նախագահի՝ հիմա արդեն վարչապետի նստավայրը՝ սենյակներից մինչեւ խոհանոց: Ավելին՝ հայտնվեցին վարչապետի նստավայրի շոկոլադների լուսանկարները, որոնք ոսկեգույն փաթեթավորված էին՝ վրան ՀՀ զինանշանը: Մի խոսքով, ամբողջ ժողովուրդն իմացավ, որ Բաղրամյան 26-ն իրականում այդքան փակ տեղ չէ, որքան դրա մասին խոսում էին, ավելին՝ այնտեղ հնարավոր է անցկացնել հրաշալի երեկոներ, ինչպես օրինակ Սպիտակ տանը, կամ Ելիսեյան պալատում, որոնց ներսը տեսնելն ամենեւին էլ առանձնահատուկ բան չէ, ամեն դեպքում ոչ ամերիկացիներն են զարմանքից քարանում, երբ Սպիտակ տան սենյակներն էկրանից բացվում են իրենց առջեւ, ոչ էլ ֆրանսիացիներն են անհանգստանում, որ Մակրոնը կարող է ուղիղ եթերում բացել Ելիսեյան պալատում գտնվող գաղտնի փաստաթղթերը:**

**Այնպես որ Փաշինյանի կոնկրետ այս քայլն իմ կարծիքով լավ է: Այլ հարց է, որ մենք, կամ մեզանից շատերը սրան պատրաստ չենք: Շատերի կարծիքով երկրի ղեկավարի կացարանը, նստավայրը պետք է փակ լինի՝ լայն մասսաների տեսադաշտից, քանի որ այն Ծիծեռնակաբերդի պես սուրբ վայր է: Ճիշտ է, այդ մարդիկ չեն ասում, թե ինչո՞ւ կարելի է Ծիծեռնակաբերդում ապրիլի 24-ին սելֆի անել, բայց Բաղրամյան 26-ում չի կարելի, բայց ոչինչ: Մենք մի տեսակ չտես ենք՝ պաշտոնական բաց շենքերի հանդեպ: Մենք սովոր ենք, որ երկրի ղեկավարը պետք է խոսի բացառապես թղթից, ընդ որում այնպես, կարծես առաջին անգամ է տեսնում այդ թուղթը, որ նրա ուղերձները պետք է նախ մանրակրկիտ խմբագրվեն, սրբագրվեն, ապա մամուլի քարտուղարը որոշի ո՛ր մասերը հրապարակել, որոնք՝ ոչ, մենք սովոր ենք, որ երկրի ղեկավարը չի կարող ուղերձ հղելիս, կամ պարզապես խոսելիս խիստ մարդկայնորեն հազալ, կմկմալ, մի խոսքով... Մենք ազատության չտես ենք: Այս համատեքստում Փաշինյանի մուտքը՝ Բաղրամյան 26 եւ նրա՝ այնտեղ անցկացրած առաջին երեկոն հույս է տալիս, որ երկրի ղեկավարի նստավայրը մեզ համար այլեւս չի ընկալվի Նուբարաշենի ՔԿՀ-ի պես մի վայր, երբ բոլորս գիտենք որ այն կա, որտեղ է, ինչ արտաքին տեսք ունի, բայց ներսից ոչ մեկս չի տեսել, ավելին՝ տեսնել չի կարելի:**

**Բայց վարչապետի ուղղաթիռը, որով Փաշինյանը մեկնեց ու վերադարձավ Ստեփանակերտ, Բաղրամյան 26 չէ: Հիշեցնեմ, որ այդ ուղղաթիռից էլ վարչապետ Փաշինյանը ուղիղ եթեր մտավ՝ Երեւան վերադառնալու ճանապարհին, պատմեց իր՝ Արցախ այցի մասին որոշ բաներ, կադրում երեւաց ուղղաթիռի ներսը, մարդիկ, ովքեր այնտեղ էին, իսկ այնտեղ բավականին հետաքրքրական մարդիկ էին, օրինակ Սասուն Միքայելյանն ու ՊՆ ԳՇ պետ Մովսես Հակոբյանը՝ կողք կողքի: Սա արդեն ազատություն չէ: Իհարկե շատերիս է հետաքրքրում, թե ինչ տեսք ունի վարչապետի ուղղաթիռը՝ ներսից, բայց բոլորս գիտենք որ Հայաստանը չավարտված պատերազմի մեջ է, իսկ երկրի առաջին դեմքը պարզապես իրավունք չունի ուղիղ եթեր մտնել իր ուղղաթիռից, քանի որ հակառակորդը, որն այս օրերին, ինչպես Փաշինյանն անձամբ է համոզվել Արցախում, բավականին ակտիվ է, կարող է ուղիղ եթերի ընթացքում հստակ իմանալ, թե որտեղ է գտնվում ՀՀ առաջին դեմքի ուղղաթիռը, որտեղ բացի վարչապետից նաեւ ՊՆ ԳՇ պետն է (ՊՆ ղեկավարի փաստացի հրաժարականի ֆոնին), իսկ երբ այս մասին հակառակորդն իմանա... Մի խոսքով, խնդրում ենք պարոն վարչապետ Փաշինյանին այսուհետ երբեք ուղիղ եթերներ չմտնել վարչապետի ուղղաթիռից, բայց շարունակել դա Բաղրամյան 26-ից: Օրինակ՝ ո՞վ է ՀՀ վարչապետի համար կերակուր պատրաստում, որտե՞ղ, ի՞նչ գրքեր է կարդում ՀՀ վարչապետը, կարդո՞ւմ է, որտե՞ղ է նստում նա, երբ մտածում է երկրի ապագայի մասին, մտածո՞ւմ է... Բաղրամյան 26-ում իսկապես շատ բան կա ցուցադրելու, բայց ավելի շատ բան ունի ցուցադրելու ՀՀ վարչապետը, ցուցադրելու կամ ապացուցելու:**

Հ. ԱՓՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 10/05/2018 23:06 Page 9



ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Նոր ժամանակների գյուղատնտեսություն. Հողի բերքատվությունից դեպի բարձր տեխնոլոգիաներ

Հանրահայտ զրույց կա այն մասին, թե ինչու է պետք հեղափոխություն անել: Զրուցակիցներից մեկը նշում է՝ որպեսզի հարուստներ չլինեն, որին ի հակադրություն դիմացինը պատասխանում է, որ իրենք աշխատում են աղքատությունը վերացնելու ուղղությամբ:

Թե ինչ է այդ աղքատություն կոչվածը, փորձենք պարզել «ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» փաստաթղթի օգնությամբ, որը մեզանում ընդունվել է 2003 թվականին գործող ՀՀ կառավարության կողմից: Հենց առաջին բաժնում կարդում ենք. «Աղքատության տակ հասկացվում է կենսաբանական, սոցիալական, հոգեւոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինությունը»: Որպես կենսաբանական պահանջմունք առաջին տեղում սնունդն է, սոցիալականում՝ առողջությունն ու կրթությունը, հոգեւոր-մշակութայինում՝ այդ արժեքներին հասու լինելու նվազագույն հնարավորությունը: Հարցը, թե հայաստանցիներիս ո՞ր պահանջմունքների հասու չլինելն էր, որ անցած օրերին հարյուր հազարավորներին եւ նրանց է՛լ ավելի համակիրներին օրվա իշխանությունների դեմ հանեց, ինչում է բնականաբար: Ինչքան էլ քննադատենք վարչա-կառավարչական բյուրոկրատիայի վերջին երկու պահանջմունքների առումով, դրանցում առկա թերություններով ու ձախողումներով հանդերձ, հայաստանաբնակներս կարող ենք արձանագրել, որ ինչ-որ բան արվել է, թերեւս բյուջեին զուգահեռ մեր արտագաղթած հայրենակիցների հայրենիքում մնացած իրենց հարազատ-բարեկամներին հասցրած ֆինանսական միջոցների արդյունքում. գոյատեւման գումարները մարդիկ ծախսել են, ՀՀ-ում կյանքը մեռյալ կետից շարժել, մի կերպ դիմացել: Արդյունքում՝ կյանքի միջին տեւողությունը երկարել է, արտերկրներում կրթություն ստացողների քանակն ավելացել, արվեստը լավից-վատից գոյատեւել:

Ցավոք նույնը չենք կարող ասել հայաստանցիներիս սննդի ու սննդակարգի պարագայում, որոնք հիմնականում ներկրվող են եւ այս առումով տիրող միջավայրն էլ պատճառ է դարձել մեզանում հաստատված կոռուպցիոն ու մենաշնորհային հարաբերությունների սաղմնավորման ու հաստատման: Հետպատերազմյան ժամանակաշրջանից ծավալված այս գործընթացը մշտապես ղեկավարվել է ՀՀ բոլոր կառավարությունների կողմից, միայն դժվար է պնդել՝ գիտակցաբար, թե անզոր ու անօգնական լինելու հետեւանքում: Այսօրինակ պահվածքը շարունակությունն էր մեզանում սկսված այն մտայնության, որն ի լուր աշխարհի բղավոցով հայտարարեց գիտության դոկտոր Գերագույն խորհրդի պատգամավորը, թե փոքրիկ Հայաստանն ինչպե՞ս կարող է 10 մլն հայի կերակրել, այսկերպ զգուշանալով մասսայական ներգաղթի հնարավորությունից: Այսօրինակ ձեւով սկսվեց ու շարունակվեց նախորդ դարի 90-ականներին նորօրյա Հայաստանում ամրագրված այն հակատնտեսագիտական ու հակատնտեսվարական մոտեցումը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը երբեք պարենային ապահովություն ու անվտանգություն ունենալ չի կարող, իր քաղաքացուն դրանք երաշխավորել ի զորու չէ, այնպես որ ով ինչպես հնարավոր է, թող իր ու ընտանիքի ճարը փնտրի ու գտնի:

Արդյունքն այն եղավ, որ անգամ ազգային վերելքի շրջանում տասնյակ հազարավոր ընտանիքներ հեռացան երկրից, հիմնականում ԱՄՆ, ավելի ուշ եւ մինչ օրս՝ Ռուսաստանի դաշնություն եւ Եվրոպա: Այս վիճակը շարունակությունն էր այն տարօրինակ իրողության, որ նորանկախ Հայաստանում կազմավորվող ու թարմ շունչ խոստացող տնտեսագիտական ու տնտեսվարական միտքը, որքանով որ այն կար, ոչ մի կերպ չկարողացավ հակադրվել տասնամյակներով կազմավորված այն մտայնության, ըստ որի երկրների տնտեսական բարեկեցությունը պայմանավորված է 1 բնակչի հաշվով 1 տոննա հացահատիկի արտադրությամբ: Նշվում էր, որ երկիր մոլորակի թիվ 1 տնտեսությունն ունեցող ԱՄՆ-ը ունի այս ցուցանիշը, բարեկեցիկ է, այ, ԽՍՀՄ-ը մոտ ապագայում կապահովի այն եւ 80-ականներին կապրենք կոմունիզմի պայմաններում: Ինչպես ասում են՝ ուրբաթը շաբաթից շուտ եկավ, ԽՍՀՄ-ը փլուզվեց, իսկ շիլաշփոթ առաջացնող մտայնությունը մնաց: Իմա՝ Հայաստանի Հանրապետությունում հնարավոր չէ առկա բնակչության համար պահանջվող 3 մլն տոննա հացահատիկ արտադրել, ուր մնաց ներգաղթի պարագայում այն առաջիկայում 8-10 մլն տոննայի հասցնել, երբ իրական արտադրությունը հազիվ 3-4 հարյուր հազար տոննա է: Վիճակն այսչափ խրթին ու անորոշ չէր լինի, եթե տնտեսվարությունը զանազաներ պարզ մի բան. ԱՄՆ-ում արտադրվող 250 մլն տոննա հացահատիկի մեջ պարենային ցորենը հազիվ 50 մլն տոննա էր, մնացած մասը՝ հիմնականում անասնակերի եւ մասամբ արդյունաբերական վերամշակումների նպատակով օգտագործվող եգիպտացորենի հատիկն էր եւ այլ հացազգիները:



Ինչու եմ գրում ու վերհիշում այս ամենը: Որովհետեւ մեզանում սկսվում է պատկեր ուրվագծվել, որ պատմությունը կրկնվում է, որը կարող է ֆարսի, նույնն է թե զավեշտի վերածվել: Ապացույցը՝ այն հայտարարությունները կարեւորելը, թե մեզանում մենաշնորհներ չեն լինելու, ով ուզում, ինչ ցանկանում է, կարող է ներկրել: Իսկ ո՞ւր է մնում աշխատանքն ու աշխատելը կարեւորելը: Եթե 10 մլրդ ամերիկյան դոլարի սահմաններում տարեկան համախառն ներքին արդյունքի ստեղծումն է Հայաստանի Հանրապետության բարեփոխման բանաձեւը, այն լուծում չունի, քանզի ներկրողների ու ներկրումների քանակների ու ծավալների ավելացումով չէ որ սեփական քաղաքացիների կյանքն ու կենցաղը բարելավվում է, այլ՝ ներքին ուժերն ու հնարավորությունները շարժելով, մարդկանց աշխատելու եւ աշխատանքի պայմաններ ստեղծելով, փոքր ու միջին գործարար միջավայրը խթանելով: Այսկերպ է մրցակցային կանոնակարգ հաստատվում, հավելյալ արժեքի ստեղծման նախապայման ստեղծվում:

Ահա այս է, որ երբեք տասնամյակ շարունակ չի իրականացվում Հայաստանում, գործընթացը փոխարինվում է «մերն ուրիշ է» կարգախոսով հռչակելով, արտահանումների շուրջ ինչ-ինչ խոստումներով ու երկիրն այլոց արտադրածով պահելով: Ներկրում ենք որտեղից եւ ինչ պատահի, սերմերից սկսած չիր ու չամիչ, էլեկտրալամպ ու պլաստմասսայե իրեր, հատիկաընդեղեն ու պահածոներ, արդուկ ու ջեռոց, գրիչ ու մատիտ, սոխ ու սխտոր, հավի ու խոզի միս, բուսական ու կենդանական յուղեր, այն ամենը, ինչ կարող ենք եւ պարտավոր ենք մշակել ու արտադրել ինքներս, բավարարել մեր պահանջմունքներն ու հետո մտածել արտահանելու մասին: Նշվածները ոլորտներ են, որտեղ գյուղարտադրանքը, ստացվող հումքը տնտեսությունում լոկոմոտիվի դեր է կատարում, աշխատատեղեր երաշխավորում, քանզի այն իրականացնելու միջավայրն Արարիչը հնարավորինս տվել է. գյուղատնտեսական նշանակության հողեր, առավել արդյունավետ գյուղգործունեություն ծավալելու նպատակով անհրաժեշտ վարելահողեր, մշակաբույսերի համար պահանջվող ջերմություն, ջրային վերականգնվող հնարավորություններ: Պարզից էլ պարզ է, որ ամենուր պարենային ապահովությունն է մարդկանց շրջանում վստահության միջավայր ստեղծում, երկրի քաղաքացուն կապում իր բնօրրանին, ապագայի հանդեպ հույս ու հավատ ներշնչում: Տողերիս հեղինակի շրջապատի տասնյակ ընտանիքներ այս պարզ ու հասարակ պայմանների բացակայության արդյունքում են հեռացել երկրից, նրանցից շատերը, հատկապես գյուղաբնակները, ընդհանրապես գործ չեն ունեցել ոչ իրավապահի ու չինովնիկի, ոչ էլ բուժաշխատողի ու հարկահավաքի կամ բանկային համակարգի հետ: Ինչու եւ ինչպես ապրել մի երկրում, ուր հնարավոր չէ երեխաների ու ծնողների նվազագույն սննդակարգն ապահովել, առողջ սնունդ ընդունել, որը փոխարինվում է երկիր մոլորակի չորս կողմերից անհայտ միջոցներով ստացվող եւ Հայաստան տեղափոխվող հումքից:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ այլոց անգամ խաղալիքներն են վտանգավոր, չխոսելով խոր սառեցման ենթարկված մսից ու մսամթերքներից, անհայտ պարարտանյութերով մշակված բանջարեղենից ու մրգերից: Ուրեմն ինչո՞ւ ենք այսչափ անփույթ ու անպատասխանատու մեր հիմնախնդիրների հանդեպ, որոնց շուրջ հանրային որոշ շրջանակների, այդ թվում տպագիր մամուլի ահազանգումների պակաս չի զգացվել: Հայաստանյան հանրության եւ իշխանության միջեւ բարյացակամ հարաբերությունների հաստատման համար պահանջվում էր հնարավորինս լուծել բնակչության առաջնահերթ սննդակարգի հիմնական բաղադրիչների, կաթնամսամթերքների սեփական արտադրությունը: Աշխարհի հարյուրավոր երկրներ այն հիմնականում լուծել են, իսկ որոշները՝ հողային կարողունակության սահմանափակ պայմաններում մասամբ են լուծել: Ասենք, մեզանում հաճախ հիշվող Սինգապուրի պարագայում, որը Երեւանի 3 տարածքն ունեցող քաղաք-պետություն է, գյուղնախարարություն չկա, սակայն կարողանում է իր բնակչության համար մոտ 100 հազար տոննա հավի միս արտադրել: Ճապոնացիներն իրենց հիմնական սննդատեսակներից մեկը համարվող 10-12 մլն տոննա բրնձի սեփական արտադրությունն ապահովելու նպատակով օգտագործում են 4 մլն հեկտար վարելահողերի 2,5 մլն հեկտարը, երբ մենք ամեն ինչ ենք անում այլոց վայելքներն ապահովելու համար կոնյակի ու գինու հումք, պտուղբանջարեղեն արտադրելու ուղղությամբ: Ոչ մեծ տարածքով Իսրայելում հավի մսի արտադրությունն անցնում է 600 հազար տոննան:

Պատկերը նույնն է խոզի մսի առումով: Աշխարհի բարեկեցիկ պետությունների առաջին շարքերում գտնվող այնպիսի երկրներ, ինչպիսիք են ՀՀ տարածքն ունեցող 11 մլն բնակչությամբ Բելգիան, մեզնից 5- ապատիկ խիտ բնակեցված Հոլանդիան, մեր որոշ ցուցանիշներին մոտ պատկերներ ունեցող Դանիան, Ավստրիան միջին բնակչի հաշվով խոզի մսի արտադրությունում ապահովում են 100-250 կգ ցուցանիշ: Այն հիմնականում իրականացվում է լիարժեք անասնակերի միջոցով: Ավստրիայում ընտանեկան հանգամանքների բերումով հյուրընկալվող տողերիս հեղինակը փաստում է, որ հատիկի նպատակով աճեցվող եգիպտացորենի դաշտերն ամենուր են: Իտալիային սահմանակից Շտիրիայի մարզը հարյուրամյակներ շարունակ համարվել է երկրի խաղողագործական տարածք, գինեգործների բնակավայր: Հիմա այն առավելապես եգիպտացորենի դաշտերով է պատված՝ որոնք անջրդի են, հեկտարի միջին բերքատվությունը՝ 6-8 տոննա, երբ Արարատյան դաշտավայրում, Տաուշի մարզում ջրովի ցանքատարածություններում բերքատվությունը մոտենում է 15 տոննայի: Նշեմ, որ մեզանում գործընթացի հիմնական խոչընդոտը ոչ այնքան հողագործների պասիվությունն է, որքան այն ծնող համապատասխան տեխնիկայի պակասը: Ասենք, եգիպտացորենի շարքացան ողջ երկրում հազիվ 5-ը կա, բերքահավաք կոմբայն՝ ընդամենը 2-ը, երբ ՀՀ-ին անհրաժեշտ հարյուր հազարավոր տոննաներից մինչեւ մի քանի միլիոն տոննա բերքի ստացման համար հարյուրավոր, գուցեեւ հազարավոր շարքացաններ ու կոմբայններ են անհրաժեշտ: Խնդրով մտահոգ ՀՀ քաղաքացուս բազմաթիվ ահազանգումներին ի պատասխան վերջին 10 տարիներին հավաստիացումներ եմ լսել վիճակը շտկելու ուղղությամբ, իրականում՝ բացարձակ անգործություն է: Մեր պատասխանատուները չեն զլանում դեմքից-դեմք հարցնել ու հետաքրքրվել, թե ՀՀ-ում որտեղ է հնարավոր առաջիկա տարիներին մի քանի հարյուր հազար տոննայից մինչեւ 1 մլն տոննա եգիպտացորենի հատիկ արտադրել: Նշեմ, որ նախնական շրջանի ակնկալվող բերքի համար պահանջվում է հայոցս վարելահողային կարողունակության հազիվ 5-6 տոկոսը, հետագայում 30-40 տոկոսը: Դանիան, օրինակ, ուր եղանակային գործոնի հետեւանքով եգիպտացորենի հատիկ չի աճում, իր վարելահողերի 70 տոկոսն է օգտագործում լիարժեք անասնակերի նպատակով 10-12 մլն տոննա հացահատիկի ստացման համար: Ոչ մեծ տարածքով Սերբիան 2014-ին եգիպտացորենի հատիկի արտադրությունը հասցրել է 8 մլն տոննայի, էապես բարձրացրել կաթնամթերքների արտադրությունն ու դրանց զգալի քանակներ շուրջ տարին Ռուսաստան արտահանելը, երբ մերը սեզոնային ծիրանն ու խաղողն է: Արդեն նշածս Ավստրիայում 2015-2017-ին եգիպտացորենի հատիկի արտադրությունը 1,8 մլն տոննայից հասել է 2,3 մլն տոննայի:

Գյուղոլորտի վերաբերյալ յուրօրինակ միտք է հայտնել Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը, նշելով. գյուղատնտեսությունը կարող է գործել՝ հիմնված չլինելով հողի բերրիության, այլ բարձր տեխնոլոգիաների վրա: Առայժմ մեզ համար անհասանելի նշաձող, որը հաղթահարելու փորձեր սկսելը մեր նորացող իշխանությունների առաջնահերթ անելիքն է: Կունենա՞նք պարենային ապահովություն ու անվտանգություն, հայրենական արտադրության որակյալ, առողջ եւ մատչելի սնունդ, մեր մարդկանց լավագույն սննդակարգ՝ հայաստանցին իրեն հատուկ երախտիքի ու օրհնանքի խոսքերով կսկսի իր օրը, այն Աստծո պարգեւ կհամարի:

Թե ե՞րբ կապրենք երազ թվացող այս վիճակը, ցույց կտա ժամանակը: Այն օր առաջ իրականություն դարձնելու կոչված մեր նորոգ կառավարությանն իր ծրագրերի բարեհաջող ընթացք մաղթենք, միլիոնների սպասումների իրականացում:

**09.05.2018**

***Հ.Գ.-*** *Ասա ով է գյուղնախարարդ, ասեմ ինչպիսի տնտեսություն կունենա երկիրդ:*

AZG NEW SHABAT.QXD 10/05/2018 23:06 Page 10



# Սիրիացի քրդերը դառնում են իրանամետ

## *ԱՄՆ-ից եւ Իսրայելից հիասթափվելով՝ նրանք հակվում են Թեհրանի կողմը*

Սիրիացի քրդերն ակնհայտորեն դադարել են վստահել ԱՄՆ-ի եւ Իսրայելի հատուկ ծառայություններին: Սիրիայի քրդերին վախեցրել է Anadolu գործակալության եւ Yeni afak թերթի ապրիլի 27-ին հրապարակած այն փաստը, որ քրդերի ինքնապաշտպանական ջոկատների վերահսկողության տակ գտնվող Ռումելա քաղաքի ամերիկյան ռազմաբազա են բերվել ֆրանսիական հատուկ նշանակության ուժեր: Վերջերս նաեւ հաճախակի են դարձել ֆրանսիական ուժերի տեղափոխությունները Սիրիայի եւ Իրաքի տարածքներում:

Ֆրանսիացի եւ ամերիկացի զինծառայողները քրդերի ինքնապաշտպանական ջոկատների հետ տանկերով պարեկություն են անում սիրիական Մանբիջ եւ Ռաքքա քաղաքների փողոցներում: Ֆրանսիան սիրիացի քրդերին նաեւ մատակարարում է զենք ու զինամթերք: Anadolu գործակալության տվյալներով, ֆրանսիական զորքեր են տեղաբաշխված քրդերի ինքնապաշտպանական ջոկատների վերահսկողության տակ գտնվող տարածքի հինգ ռազմակայաններում:

Հարկ է նշել, որ Սիրիայի հյուսիսում հենց Մանբիջ քաղաքն է Թուրքիայի ձեռնարկած «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողության հերթական թիրախը: Այդ քաղաքում դեռ կան քրդական ջոկատներ, որոնք, սակայն, կռվում են ամերիկացիների ենթակա «Սիրիական ազատ բանակի» դրոշներով: Մանբիջի շուրջը ֆրանսիացիների եւ ամերիկացիների սկսած մանեւրները լրջորեն մտահոգում են սիրիացի քրդերին: Չէ՞ որ Իսրայելի եւ ԱՄՆ-ի հատուկ ծառայությունները քրդերին ոչնչով չօգնեցին, երբ թուրքերը հարձակվեցին Աֆրինի վրա: Քրդերին հայտնի է, որ Աֆրինում ներկայումս տեղի են ունենում ժողովրդագրական մեծ փոփոխություններ, որ այնտեղ բնակեցվում են ոչ միայն Սիրիայի, այլեւ ուրիշ երկրների արաբներ, որոնց վերջերս արտաքսել էին Համայի եւ Իդլիբի նահանգներից: Բայց քանի որ Իդլիբի ապառազմականացված գոտին Թուրքիայի վերահսկողության տակ է, թուրքերը Իդլիբի իսլամիստներին անաղմուկ վերաբնակեցնում են Հալեպի նահանգի հյուսիսային մասում, ներառյալ Աֆրինում:

Սիրիացի քրդերի համար բարդությունների պատճառը ոչ թե Իրանն է, այլ ԱՄՆ-ի եւ Իսրայելի դաշնակից Թուրքիան: Քրդերը լավ հասկանում են, որ ակնհայտորեն ձախողում է կրել իրենց անհեռատես խաղը (ակնհայտորեն թելադրված հենց ԱՄՆ-ի եւ Իսրայելի հատուկ ծառայությունների կողմից), որը պահանջում էր Աֆրինը պաշտպանել ռուսներից եւ իրանցիներից, այսինքն, փաստորեն, պատերազմ սկսել Թուրքիայի դեմ: Ահա թե ինչու քրդերի կարիքներին օժանդակելու եւ Քրդստանի բարեկամը մնալու վերաբերյալ Իսրայելի նախկին վարչապետ Օլմերտի արած հայտարարությունը խուճապ առաջացրեց սիրիացի քրդերի մեջ:

Ըստ երեւույթին, կարելի է սենսացիա համարել այն լուրը, որ մայիսի 2-ին Թեհրան է մեկնել սիրիացի քրդերի պատվիրակություն՝ Խալիդ Ասիայի գլխավորությամբ: Հարկ է նշել, որ սիրիացի քրդերի միջավայրում ցեղային միասնականության մասին ակնարկներ չեն արվում: Չի բացառվում, որ պատվիրակության վերադարձից եւ սիրիացի քրդերի մյուս ցեղերի հետ բանակցություններից հետո վերահաստատվի այն ներքին պառակտումը, որը 2014-2015 թթ. քրդերի մեջ տիրում էր այն առնչությամբ, թե պե՞տք է արդյոք բռնել ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմը կամ միանալ «Սիրիական ազատ բանակի» գործողություններին:

Հատկանշական է, որ սիրիացի քրդերի պատվիրակությանը Թեհրանում ընդունել են բարձր մակարդակով, նշում է «Ռեգնում» գործակալությունը: Պատվիրակության անդամների հետ բանակցել է Նպատակահարմարության խորհրդի անդամ եւ Իրանի առաջնորդի գլխավոր խորհրդական Ալի Աքբար Վելայաթին:

«Ես վստահ եմ, որ Սիրիայում ապրող քրդերը ԱՄՆ-ին եւ Իսրայելին երբեք թույլ չեն տա գրավել իրենց հողերը: Սիրիայում մեր քուրդ բարեկամները ԱՄՆ-ին եւ սիոնիստներին թույլ չեն տա արմատավորվել իրենց երկրում: Սիրիական ազգի հաջողության գաղտնիքը ցեղերի եւ կրոնների միասնության մեջ է: Բարեբախտաբար, արաբները, քրդերը եւ մյուս ժողովուրդները Սիրիայում ապրում են հաշտ ու խաղաղ եւ պայքարում արտաքին ուժերի դեմ, քրիստոնյաները եւս մյուսների հետ ուս ուսի տված նշանակալի դեր են խաղացել թշնամու դեմ մղվող պայքարում», հայտարարել է **Վելայաթին**:

Քրդերին քրիստոնյաների մասին հիշեցնելով՝ նա ակնարկել է, որ Սիրիայի քրդաբնակ շրջաններում ապրում են նաեւ քրիստոնյա հայեր, հույներ եւ ասորիներ: Քանզի սիրիացի քրդերը հակաահաբեկչական պայքարի մասին խոսելիս իսլամիստների դեմ տարած հաղթանակները վերագրում են բացառապես իրենց ուժերին եւ կազմավորումներին:

Այնուհետեւ Վելայաթին սահուն կերպով խոսք է բացել Իսրայելի մասին: Նրա կարծիքով, Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն Իրանի ամենաթույլ թշնամին է: Նաթանյահուի հակաիրանական դիրքորոշումը կապված է տարածաշրջանում գերիշխելու նրա անկարողության հետ: Վելայաթին ասել է, որ Իրանի եւ իր դաշնակիցների հաջողությունները, ինչպես նաեւ տարածաշրջանում թշնամական ուժերի ձախողումները վերջիններիս անտրամաբանական գործողությունների արդյունքն են:

Սիրիացի քրդերի պատվիրակ **Ասիան** իր հերթին ասել է, որ Իսլամական հեղափոխությունն ամրապնդեց Իրանի եւ Սիրիայի փոխհարաբերությունները: Սիրիացի քրդերը համոզվել են, որ իրենց իսկական դաշնակիցները կարող են լինել միայն շիա մահմեդականները՝ Իրանը եւ տարածաշրջանում գործող շիա կազմավորումները: Եվ Աֆրինի քրդերի ու եզդիների ողբերգությունը ցույց տվեց, որ ԱՄՆ-ը եւ Իսրայելը մշտապես կարող են հուսախաբ անել քրդերին:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ՌԴ արտգործնախարար **Սերգեյ Լավրովը** իտալական Panorama հանդեսին տված հարցազրույցում հայտարարել է, որ Ռուսաստանը հուսախաբ չի արել քրդերին եւ որ խաբեության մեջ պետք է մեղադրել նրանց, ովքեր «անջատական տրամադրություններ են հրահրում՝ խոստանալով հովանավորություն, խոչընդոտում են երկրի ընդարձակ տարածքների վրա օրինական կառավարության վերահսկողության հաստատմանը, ովքեր քրդերին հորդորել են միակողմանիորեն հռչակել դաշնություն եւ զբաղվել են դրա ուժային այն կառույցների ձեւավորմամբ, որոնք Սիրիայի կառավարության բացառիկ իրավասությունն են: Սիրիական կառավարության հրավերով այդ երկրի տարածքում գտնվող ռուսական զորքերը ըստ ամենայնի նպաստել են «Իսլամական պետությունը» ներկայացնող ահաբեկչության ռազմաքաղաքական օջախի վերացմանը»:

Այսպիսով, Իրանի հետ Արեւմուտքի եւ Իսրայելի փոխհարաբերությունների ճգնաժամի խորացման պայմաններում ԱՄՆ-ի եւ Իսրայելի հատուկ ծառայությունները Մերձավոր Արեւելքում հերթական մարտավարական պարտությունը կրեցին: Այնտեղ սիրիացի քրդերը վերջիններն էին, որ խուսափում էին հարաբերությունների հաստատումից: Իհարկե շփումներ եղել էին, սակայն՝ ոչ պաշտոնական մակարդակով: Վերոնշյալն ամփոփելով՝ կարելի է ենթադրություն անել, որ սիրիացի քրդերը պատրաստվում են հեռանալ ԱՄՆ-ից եւ Իսրայելից:

Պ.Ք.

# Ակադեմիկոս Ալբերտ Ղուլյանը 80 տարեկան է



2018թ. մայիսի 2-ին լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ալբերտ Գարեգինի Ղուլյանի 80-ամյակը:

Ալբերտ Գարեգինի Ղուլյանը ծնվել է Շահումյանի շրջանի Ղարաչինար գյուղում, ուսուցիչների ընտանիքում:

1960թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը՝ ստանալով աստղաֆիզիկոսի որակավորում:

Աշխատանքային մկրտությունն Ա. Գ. Ղուլյանը ստացել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Բյուրականի աստղադիտարանի ռադիոաստղագիտության բաժնում՝ աշխատանքի անցնելով որպես լաբորանտ: Նույն թվականին տեղափոխվում է ռադիոաստղագիտության բաժնի հենքի վրա ստեղծված ՀՍՍՀ ԳԱ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտ՝ որտեղ եւ աշխատում է մինչ օրս:

Ա. Գ. Ղուլյանի գիտական հետազոտությունները կապված են անտենաների բնութագրերի ուսումնասիրության ճշգրիտ մեթոդների մշակման հետ՝ հիմնված հաճախությունների լայն տիրույթում տիեզերական աղբյուրների աղմկային ռադիոճառագայթման ընդունման սահմանային զգայնությամբ ընդունիչ սարքերի եւ համակարգերի նախագծման եւ իրականացման վրա: Այս բնագավառում կատարած հիմնարար եւ կիրառական հետազոտությունների արդյունքների հիման վրա Ա.Գ.Ղուլյանը 1975թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1990թ.՝ դոկտորական թեզեր:

Որպես գիտնականի՝ Ա.Գ.Ղուլյանի կայացման գործընթացում նշանակալի է եղել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Է.Հ.Միրզաբեկյանի եւ Ռ.Մ.Մարտիրոսյանի, Ռուսաստանի ԳԱ Ֆիզիկայի ինստիտուտի պրոֆեսոր Ա.Ե.Սալոմոնովիչի, Ռադիոֆիզիկական գիտահետազոտական ինստիտուտի պրոֆեսոր, ակադեմիկոս Տրոիցկու, Ռադիոտեխնիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի պրոֆեսոր Բ. Գ. Կուտուզայի դերն ու գիտական ղեկավարությունը:

1978թ.-ից մինչ այժմ Ա. Գ. Ղուլյանը ղեկավարում է ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիան: Նրա ղեկավարությամբ լաբորատորիայում մշակվել են անտենաների բնութագրերի չափման մեծ ճշտություններ ապահովող նոր մեթոդներ, ստեղծվել՝ բարձր զգայնությամբ, աշխարհի խոշորագույն կենտրոնների լավագույն նմուշներին չզիջող, շահագործման հարմարավետությամբ ավելի նախընտրելի ընդունիչ համակարգեր: Կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիայի արգասաբեր գործունեության արդյունքը Ա. Գ. Ղուլյանի գիտական ղեկավարությամբ առաջատար գիտական ամսագրերում հրատարակված ավելի քան 250 աշխատանքները եւ 30 գյուտերի հեղինակային վկայագրերն են:

Նախկին Խորհրդային Միության կառավարական հատուկ որոշումների համաձայն, Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտը, մասնավորապես կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիան, ԽՍՀՄ-ի խոշորագույն գիտական կենտրոնների, այդ թվում ԽՍՀՄ ԳԱ Տիեզերական հետազոտությունների, Ռադիոտեխնիկայի եւ էլեկտրոնիկայի, Լեբեդեւի անվան Ֆիզիկայի ինստիտուտների, ինչպես նաեւ Բնական ռեսուրսների ուսումնասիրման պետական կենտրոնի, Տիեզերական սարքաշինության գիտատեխնիկական միավորման ճյուղային ինստիտուտների հետ համատեղ մասնակցել է «Վեգա», «Ֆոբոս», «Կոսմոս», «Պրիրոդա», «Օկեան» եւ այլ միջազգային գիտատեխնիկական ծրագրերին՝ իր ծանրակշիռ ներդրմամբ նպաստելով այդ ծրագրերի կատարմանը:

Ա.Գ.Ղուլյանի ղեկավարությամբ կիրառական ռադիոֆիզիկայի լաբորատորիայում ստեղծված նոր, ռադիոաստղագիտական մեթոդների եւ զգայուն ընդունիչ սարքերի միջոցով մեծ ճշտությամբ չափվել են նախկին Խորհրդային Միության տիեզերական կապի նպատակով ստեղծված բոլոր անտենաների բնութագրերը:

Հիմնվելով իր ղեկավարած լաբորատորիայում ստացված գիտական արդյունքների վրա՝ Ա. Գ. Ղուլյանը արժանացել է երկու երկարաժամկետ դրամաշնորհի (Սորոս, ՄԳՏԿ), ինչը զգալիորեն նպաստել է դժվարին տնտեսական շրջանում լաբորատորիայի գիտական ներուժի եւ գիտական հետազոտությունների դրական դինամիկայի պահպանմանը:

Ա. Գ. Ղուլյանը որպես գիտնական հայտնի է ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նա ՀՍՍՀ Պետական մրցանակի դափնեկիր է գիտության եւ տեխնիկայի ասպարեզում, ինչպես նաեւ մի շարք գիտական խորհուրդների անդամ: Հաշվի առնելով ռադիոֆիզիկայի հիմնարար պրոբլեմներից մեկի՝ գերբարձր հաճախային տիրույթում ընդունիչ համակարգերի նոր կառուցվածքների նախագծման, ստեղծման, անտենաների բնութագրերի ուսումնասիրության ռադիոաստղագիտական նոր մեթոդների մշակման ասպարեզում Ա.Գ.Ղուլյանի մեծ ավանդը եւ նրա գիտակազմակերպական լայնածավալ գործունեությունը՝ 2000թ.-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2010թ. պարգեւատրվել Անանիա Շիրակացու մեդալով, 2014թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Հանրապետության սահմանների պահպանության տեխնիկական վերազինմանը միտված Ա. Գ. Ղուլյանի ղեկավարած գիտական խմբի կատարած աշխատանքների շարքն արժանացել է 2011թ. հանրապետության նախագահի մրցանակին:

Գիտական գործունեությանը զուգընթաց, Ա. Գ. Ղուլյանը զգալի ավանդ է ունեցել երիտասարդ կադրերի պատրաստման եւ հետազոտական աշխատանքներում նրանց ներգրավման գործում: 1975թ.-ից նա անընդմեջ դասախոսել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Ռադիոսարքավորումներ» ամբիոնում, որի պրոֆեսոր է 1992թ.-ից եւ մինչ օրս այդ մասնագիտացման պետական քննական հանձնաժողովի նախագահն է: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 8 թեկնածուական եւ 2 դոկտորական թեզ:

Ա. Գ. Ղուլյանը սիրող ամուսին է, գորովագութ հայր եւ իր 4 թոռնիկներին անսահմանորեն նվիրված պապիկ, որոնցից երկուսը ապրում են իր հոգածության ներքո:

Շնորհավորելով ճանաչված գիտնականին՝ ցանկանում ենք քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր ստեղծագործական կյանք:

*ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն*

AZG NEW SHABAT.QXD 10/05/2018 23:06 Page 11



# ԱՄՆ-ը դուրս եկավ միջուկային համաձայնագրից

## *Իրանի հարցը կմիավորի՞ արդյոք Եվրոպան, Ռուսաստանն ու Չինաստանը*



Իրանի միջուկային համաձայնագրի առնչությամբ վերջերս ամբողջ աշխարհը եւ մասնավորապես Մերձավոր Արեւելքը լարվածության մեջ պահած ինտրիգը ի վերջո լուծում ստացավ: ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** հայտարարեց, որ չեղարկում է Իրանի միջուկային ծրագրին վերաբերող բազմակողմ համապարփակ համաձայնագրի տակ ԱՄՆ-ի դրած ստորագրությունը: Համաձայնագիրը 2015 թվականին նշանավորել էր Իրանի եւ միջազգային ընկերակցության փոխհարաբերությունների լիցքաթափումը: Թրամփը հայտարարել է, որ ԱՄՆ-ը անչափ լուրջ տնտեսական պատժամիջոցներ կհաստատի Իրանի նկատմամբ եւ կպատժի նաեւ իրանցիների միջուկային ծրագրին օժանդակող երկրներին...

Տարօրինակն այն է, որ նախագահ Թրամփը պետք է որոշում ընդուներ մայիսի 12-ին, սակայն արդեն մայիսի 7-ին նա հայտարարեց, որ չի սպասի եւ իր դիրքորոշումը կհստակեցնի հաջորդ օրը: Ինչո՞ւ: Բանն այն է, որ օրերս իր գործունեությունն է ակտիվացրել Իրանի միջուկային համաձայնագրի մշակմանը մասնակցած ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջոն Քերրին : Վերջերս նա հանդիպում էր ունեցել Իրանի արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆի հետ՝ փորձելով փրկել այդ համաձայնագիրը:

Դա հարուցել էր ԱՄՆ ներկայիս նախագահի բացասական արձագանքը: Զարիֆը ինչո՞ւ էր հանդիպել նախկին պետքարտուղարի հետ, Թեհրանն ի՞նչ էր ակնկալում: Մեկ ուրիշ հանգամանք: Ֆրանսիայի նախագահ Էմանյուել Մակրոնի՝ Վաշինգտոն կատարած այցելությունից հետո լուրեր տարածվեցին, որ երկու ղեկավարները քննարկել են Իրանի միջուկային ծրագրին վերաբերող բանակցությունների նոր ձեւաչափը, որը կնախատեսեր Ռուսաստանի եւ Թուրքիայի մասնակցությունը:

Մակրոնն առաջարկել է նոր գործարք: Այն նախատեսում էր Եվրոպայի եւ ԱՄՆ-ի համատեղ ջանքեր մինչեւ 2025 թվականը Իրանի միջուկային ծրագիրը շրջափակելու նպատակով: Այդ մասին հաղորդեց Ֆրանսիայի նախագահի մամլո ծառայությունը: Դրա հետ մեկտեղ քննարկվել են Մերձավոր Արեւելքի խաղաղության ու կայունության ապահովմանն ուղղված հարցեր: Ավելի ուշ, The New York Times թերթը տեղեկացրեց, որ Թրամփը Մակրոնին հայտնել է Իրանի միջուկային համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին: Մինչդեռ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը հաղորդում է, որ Թրամփը այդ թեմայով Մակրոնի հետ չի բանակցել:

Անցյալ շաբաթ Վաշինգտոն կատարած այցելությունների ժամանակ ինչպես **Մակրոնը**, այնպես էլ Գերմանիայի կանցլեր **Անգելա Մերկելը** եւ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար **Բորիս Ջոնսոնը** Թրամփին հորդորել են դուրս չգալ միջուկային համաձայնագրից: Նրանք հասկացրել են, որ պատրաստ են նոր քառակողմ համաձայնագիր կնքել Իրանի հետ:

Թրամփն ընտրեց հնարավոր ամենակոշտ դիրքորոշումը: Նրա փաստարկը մոտ է իր նախընտրական խոստումներին, ինչպես նաեւ համահունչ՝ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի եւ ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Ջոն Բոլտոնի հայտարարություններին: Թրամփի հայտարարության համաձայն, միջուկային համաձայնագիրը ոչ միայն սանձահարեց այաթոլլահների նկրտումները Պարսից ծոցում եւ ամբողջ Մերձավոր Արեւելքում, այլեւ նպաստեց նրանց նախահարձակ քաղաքականությանը:

Ըստ Թրամփի, Իրանը զանգվածաբար օգնում է «Հզբոլլահին», «Համասին» եւ մերձավորարեւելյան մյուս «ահաբեկչական» կազմակերպություններին, ինչպես նաեւ մշակում է բալիստիկ հրթիռներ, որոնք կարող են հանդերձավորվել միջուկային մարտագլխիկներով: Նա հիշատակեց Իրանում իսրայելական «Մոսսադի» հայթայթած փաստաթղթերը, որոնք հաստատում են Իրանում միջուկային ծրագրի գոյությունը ոչ միայն մինչեւ 2003 թվականը, այլեւ մեր օրերում: Կնքված համաձայնագիրը լոկ նպաստում է Իրանի երկարաժամկետ նկրտումների խորացմանը, որոնք Մերձավոր Արեւելքում կհանգեցնեն միջուկային սպառազինությունների մրցավազքի: Թրամփը համոզված է դրանում:

Իսրայելցի լրագրող **Ավիգդոր Էսկինը** «Ռեգնում» գործակալության կայքում այն տեսակետն է արտահայտում, թե Թրամփի որոշումը դրական է նաեւ Ռուսաստանի համար, քանի որ Իրանը ռուսների համար լոկ տարածաշրջանային մրցակից է: Հայտնի վերլուծաբան, ԿՀՎ-ի դպրոցն անցած **Ջորջ Ֆրիդմանի** կարծիքով, ռուս-իրանական ճգնաժամի սրման դեպքում Իրանն ամենայն հավանականությամբ կարող է դառնալ ԱՄՆ-ի գործընկերը: Ռուսաստանցի որոշ փորձագետներ նույնպես կարծիք են հայտնում, թե միջուկային զենք ունենալու դեպքում Իրանը տարածաշրջանում կարող է դառնալ Ռուսաստանի անվտանգությանը սպառնացող գլխավոր վտանգը: Չնայած անմիջական սահմանի բացակայությանը, Ռուսաստանն Իրանի հետ դեռ չի հստակեցրել ջրային սահմանները:

Ավելին, Սիրիայում ներկայումս իրադրությունն այնպիսին է, որ երկրում իրանցիների ներկայությունը ավելի մեծ բեռ է դարձել Մոսկվայի համար, քան նրանց մասնակցությունը հակաահաբեկչական պատերազմին: Իրանցիների ջոկատների եւ աշխարհազորայինների պայքարը նպաստեց նախագահ Բաշար Ասադի վարչակարգի պահպանմանը: Սակայն արդի փուլում նրանց ներկայությունը գրեթե զրոյական է: Հարկ է նշել նաեւ Իրանի «ուխտադրժությունը» Ռուսաստանի հանդեպ, երբ պատժամիջոցների վերացումից հետո նա լայնորեն ընդառաջեց արեւմտյան ընկերություններին՝ միանգամայն անտեսելով ռուսաստանցի հավանական գործընկերներին:

Դեմոկրատ սենատոր **Բիլ Նելսոնի** կարծիքով, ԱՄՆ-ը պետք է Իրանի վրա ճնշումն ուժեղացնի, որպեսզի այդ երկիրը չկարողանա մշակել միջմայրցամաքային բալիստիկ հրթիռներ: Միեւնույն ժամանակ նա գտնում է, որ միջուկային համաձայնագրից դուրս գալը ողբերգական սխալ է: Նման քայլը ամերիկացիներին կբաժանի եվրոպացի դաշնակիցներից եւ Իրանին հնարավորություն կտա մեկ տարվա ընթացքում ատոմային ռումբ ստեղծել, մինչդեռ համաձայնագիրը 7-12 տարի նրան թույլ չէր տա դա անել:

Իր հերթին, **Էմանյուել Մակրոնը** հայտարարել է, որ Ֆրանսիան, Գերմանիան եւ Մեծ Բրիտանիան ափսոսանք են հայտնում համաձայնագրից ԱՄՆ-ի դուրս գալու կապակցությամբ: Եվրոմիության դիվանագիտության ղեկավար **Ֆեդերիկա Մոգերինին** բազմակողմ համաձայնագրի բոլոր մասնակիցներին կոչ է արել հավատարիմ մնալ ձեռք բերված պայմանավորվածություններին: Եվրոպայի խորհրդի նախագահ **Դոնալդ Տուսկը** հայտարարել է, որ ԵՄ պետությունները պետք է միասնաբար արձագանքեն Թրամփի որոշմանը: ԵՄ ղեկավարները մտադիր են տվյալ թեման քննարկել առաջիկա շաբաթվա ընթացքում:

Իրավիճակի հետաքրքրությունը հետեւյալն է: Նախ եւ առաջ, ինչպես գտնում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը՝ ՄԱԳԱՏԷ-ն, Իրանը, փաստորեն, չի խախտել համաձայնագրի պայմանները: Երկրորդ, գործարքը կարող է շարունակվել նաեւ առանց ԱՄՆ-ի, որը Թեհրանի հետ առեւտրական հարաբերություններ չունի: Բայց առաջիկայում իրենց ինչպե՞ս կպահեն Եվրոպան, Ռուսաստանը եւ Չինաստանը: Մասնավորապես կարեւոր է Եվրոպայի կեցվածքը: Գործարքի մասնակից երկրները կմիավորվե՞ն արդյոք ԱՄՆ-ին մարտահրավեր նետելու համար:

Պայմանավորվածությունների եվրոպացի մասնակիցները առայժմ դրանք համարում են դիվանագիտական խոշոր հաջողություն, որը հնարավորություն տվեց սահմանափակել մերձավորարեւելյան երկիր Իրանի միջուկային ծրագիրը՝ միջազգային պատժամիջոցների մեղմացման դիմաց: Այդուհանդերձ, եվրոպացիները չկարողացան կանխել ամերիկացիների դուրս գալը համաձայնագրից: Խափանվեց նաեւ այսպես կոչված E3 խմբի սցենարը, խումբ, որի մեջ մտնում են Ֆրանսիան, Գերմանիան եւ Մեծ Բրիտանիան: Սցենարը ենթադրում է փաստաթղթի պայմանների փոփոխություն:

Ինչ վերաբերում է Թեհրանին, նրա հայտարարությունները կանխատեսելի են: Իրանի նախագահ **Հասան Ռուհանին** հանրային հեռուստատեսությամբ հանդես եկավ կտրուկ արտահայտություններով: Նրա խոսքերով՝ ԱՄՆ-ը իր արարքի համար կզղջա ավելի շատ, քան երբեւիցե սեփական պատմության մեջ: Միեւնույն ժամանակ նա ընդգծեց, որ եվրոպական երկրների հավասարմությունը Իրանի համար անհամեմատ կարեւոր է ԱՄՆ-ի որոշումից: Ինչպես հաղորդում է BBC-ն, Թեհրանը կարգադրել է իր դիվանագետներին Փարիզի, Բեռլինի, Լոնդոնի, Մոսկվայի եւ Պեկինի հետ բանակցություններ սկսել, որպեսզի գնահատվեն միջուկային համաձայնագրի պահպանման հնարավորությունները ի հեճուկս Թրամփի որոշման:

Արեւմուտքի փորձագետների կարծիքով, Իրանն այժմ կարող է փորձել Մերձավոր Արեւելքում փոփոխել ուժերի հարաբերակցությունը: Իսկ Իսրայելի վարչապետ **Բենիամին Նաթանյահուն** ողջունել է Թրամփի որոշումը՝ այն անվանելով ճիշտ քայլ:

Թեեւ Իրանի հետ կնքված միջուկային համաձայնագիրն իդեալական չէ, բայց ԱՄՆ-ից հետո այդ փաստաթղթից կարող է դուրս գալ նաեւ Իրանը: Որոշ փորձագետներ երկյուղ են արտահայտում, որ Թեհրանը կարող է դուրս գալ նաեւ 1968 թվականին կնքված Միջուկային զենքի չտարածման համաձայնագրից, ըստ որի 191 երկրներ ջանքեր են գործադրում միջուկային զենքի եւ դրա հետ կապված տեխնոլոգիաների տարածումը թույլ չտալու համար: Իրադարձությունների նմանօրինակ զարգացումը կարող է լրջորեն խարխլել Մերձավոր Արեւելքի կայունությունը եւ սպառազինությունների մրցավազք առաջացնել տարածաշրջանում: Դա վատթարագույն սցենարն է Միացյալ Նահանգների համար:

**Պ.Ք.**

## Փաշինյան-Պուտին. մայիսի 14-ին՝ Սոչիում

Մայիսի 14-ին Սոչիում տեղի կունենա ԵԱՏՄ հերթական գագաթաժողովը, որին կմասնակցեն Միության անդամ պետությունների ղեկավարները: Հենց այդ օրն էլ նախատեսված է Նիկոլ Փաշինյան-Վլադիմիր Պուտին առաջին հանդիպումը: Վարչապետ Փաշինյանը հայտնել է, որ անպայման մեկնելու է Սոչի, ավելի վաղ հայտնի էր դարձել, որ **Պուտինը** զանգահարել է Փաշինյանին՝ շնորհավորելով վերջինիս ՀՀ վարչապետ ընտրվելու, ապա նշանակվելու առիթով: Պուտինը նաեւ հույս է հայտնել, թե ինքն ակնկալում է, որ Փաշինյանի կառավարության օրոք Հայաստան-Ռուսաստան ռազմավարական դաշնակցային հարաբերությունները կամրապնդվեն ինչպես երկկողմ, այնպես էլ ԵԱՏՄ-ի, ՀԱՊԿ-ի եւ ԱՊՀ-ի շրջանակներում: Ուշագրավ է, որ մեկ ամիս առաջ, երբ Հայաստանի վարչապետ ընտրվեց Սերժ Սարգսյանը եւ Պուտինը գրեթե նույն տեքստով շնորհավորեց նրան, ՌԴ նախագահը հիշյալ հարաբերությունների ամրապնդման հարցում ոչ թե հույս էր հայտնել, այլ վստահություն:

## Մոգերինին Փաշինյանին հրավիրում է Բրյուսել

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** հեռախոսազրույց է ունեցել ԵՄ արտաքին հարաբերությունների գլխավոր հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինիի հետ: Տիկին հանձնակատարը ու պարոն վարչապետը կարեւորել են ՀՀ-ԵՄ համաձայնագրի իրականացման ընթացքը եւ Հայաստան-Եվրոմիություն գործընկերության ամրապնդումը: Այս համատեքստում **Մոգերինին** Փաշինյանին հրավիրել է Բրյուսել եւ շեշտել, որ ինքն անհամբեր սպասում է Փաշինյանի հետ հանդիպմանը:

**Պատրաստեց՝ ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆԸ**

AZG NEW SHABAT.QXD 10/05/2018 23:06 Page 12



ԻՄԱՆ ԱՐԷՖ

# Հայաստանի մէջ... թաւշեայ յեղափոխութիւնը խաչմերուկներու ընդառաջ

***Միջազգային ամենակարեւոր թերթերից՝ եգիպտական «Ալ Ահրամը» նույնպես անդրադարձ է կատարել «հայկական հեղափոխությանը», ընդհանրապես իրապաշտ գնահատումով: Մեր թերթի բարեկամ, եգիպտահայ հայտնի գործիչ եւ հեղինակ Պերճ Թերզյանի թարգմանությամբ՝ արաբ լրագրողի դիտարկումները՝ ստորեւ.***

Ամէն ոք սպասման վիճակի մէջ է գտնուելու համար, թէ ինչ տիպի ըլլայ հետեւանքը անցեալ ամսուան կէսէն ի վեր Հայաստանի մէջ բռնկած բողոքի ցոյցերուն, որոնք յետագային կոչուեցան թաւշեայ յեղափոխութիւն:

Այս երկիրը, որ կը գտնուի Կովկասի հարաւը, փոքր է իր տարածութեամբ, սակայն կարեւոր է քաղաքական եւ շրջանային դիրքով:

Իր աշխարհագրական դիրքին առընթեր ան դրացի է Թուրքիոյ եւ Ատրպէյճանին, որոնց հետ պատմական թշնամութիւն ունի:

Ան տնտեսական եւ զինուորական սերտ գործակցութիւն ունի Ռուսիոյ հետ, նկատի առնելով որ նախկին Սովետական Միութեան հանրապետութիւններէն մին էր: Ռուսիա զինուորական խարիսխ մը ունի Հայաստանի մէջ, որուն ընդմէջէն ան կը դիտարկէ Ատրպէյճանի եւ Հայաստանի հասարակաց սահմանները, ինչ որ կը նշանակէ, թէ Հայաստանի քաղաքական կացութեան անկայունութիւնը հաւանաբար ունենայ ժխտական հետեւանքներ ամբողջ այս տարածաշրջանին վրայ:

Թերեւս այդ է պատճառը այն հետաքրքրութեան, որուն մինչեւ հիմա արժանացաւ այս ժողովրդային խաղաղ շարժումը:

Տագնապը բարդացաւ ու շարունակեց տարածուիլ: Միւս կողմէ կը տեսնենք մէկ օրէն միւսը զարգացումներ, որոնց վերջինն էր ընդդիմութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանի պարագան:

Արդարեւ, ան ձախողեցաւ խորհրդարանին մէջ ստանալու հարկ եղած ձայներուն մեծամասնութիւնը, զինք ընտրելու իբրեւ ժամանակաւոր վարչապետ, մինչեւ նոր վարչապետ մը ընտրելու համար արդար եւ թափանցիկ ընտրութիւններու կայացումը: Ան պիտի յաջորդէր վեթերան քաղաքական գործիչ Սերժ Սարգսեանին, որ խորհրդարանին կողմէ ընտրուելէն տասնմէկ օր ետք ստիպուեցաւ հրաժարիլ, իբր հետեւանք իր ընտրուելուն դէմ ժողովրդային բուռն մերժումին եւ իշխանութիւնը մինչեւ վերջ իր ձեռքը պահելու փորձերուն:

Փաշինեան ստացաւ խորհրդարանի 45 պատգամաւորներու ձայներ, սակայն կարիքը ունէր 53 ձայնի, որպէսզի ձեռք ձգէ 105 անդամներէ բաղկացած խորհրդարանի մեծամասնութեան քուէները:

Մինչ ընդդիմութեան ղեկավար Նիկոլ Փաշինեան կը զգուշացնէր, թէ իշխող կուսակցութիւնը եթէ շարունակէ խոչընդոտներ յարուցանել, ի վերջոյ պիտի առաջնորդէ կացութեան պայթումին, մանաւանդ որ ինք կը վայելէ ժողովրդային աննախընթաց աջակցութիւն:

Արդարեւ, կառավարութեան ժամանակաւոր պետը եւ Ազգային Ժողովի իշխող Հանրապետական կուսակցութեան անդամները, որոնք կը տիրապետեն աթոռներու մեծամասնութեան, կը շարունակեն կառչած մնալ իրենց մերժողական կեցուածքին, ընդդիմութեան ղեկավարին ընթացքը համարելով հրահրիչ, յամառող եւ իր կամքը իրենց վրայ պարտադրելու ձգտող:

Անոնք կը նկատեն, թէ անիկա պարտաւոր է փոխան իր կեցուածքին, աշխատիլ տագնապը լուծելու բոլոր քաղաքական ուժերուն հետ:

Այս պարագան յստակօրէն տեսնուեցաւ, երբ անցեալ շաբաթ ժամանակաւոր վարչապետը մերժեց հանդիպում ունենալ ընդդիմադրութեան ղեկավարին հետ:

Ինչպէս նաեւ առաջին փոխ վարչապետը մերժեց Փաշինեանի պահանջները ինչ կը վերաբերի ԶԼՄներուն թոյլտուութիւն տալու, որ իշխող կուսակցութեան հետ կայացող բանակցութիւնները նկարեն եւ հեռասփռեն: Այս պահանջը «անիմաստ» նկատուեցաւ եւ անոր իրագործումը համարուեցաւ յօգուտ Հայաստանի երկու թշնամիներուն՝ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ շահերուն:

Այս մօտեցումը մղեց ընդդիմութեան ղեկավարը իշխող կուսակցութիւնը ամբաստանելու, որ կը ձգտի խորացնելու տագնապը, փոխանակ զայն լուծելու եւ կառչած է իշխանութեան, հակառակ անոր որ ձախողած է դիմագրաւելու տնտեսական հարցերը եւ փտածութեան տարածումը:

Դիտորդները կը նշեն, թէ ընդդիմութիւնը իր պատճառները ունի այս մտմտուքին մէջ:

Հրաժարեալ վարչապետ Սերժ Սարգսեան նախապէս երկու անգամ ստանձնած է նախագահի պաշտօնը երկու նախագահական շրջաններու համար, 2008-էն մինչեւ անցեալ ամսուան կէսը: Եւ որովհետեւ սահմանադրութիւնը կ՚արգիլէ նախագահին իր պաշտօնին վրայ մնալ երկու շրջանէ աւելի, կուսակցութեան պատգամաւորները, որոնք մեծամասնութիւն են, զինք ընտրեցին, սակայն այս անգամ որպէս վարչապետ, ընդարձակ իրաւասութիւններով, նախապէս 2015-ին վիճայարոյց հանրաքուէով մը փոխելով սահմանադրութիւնը: Այս փոփոխութեամբ իրաւասութիւններու մեծ մասը փոխանցուեցաւ վարչապետին եւ նախագահութիւնը փոխուեցաւ մեծ մասով պատուակալ պաշտօնի:

Այնպէս կը թուի, թէ այս քայլը լաւ չէր հաշուուած, երբ շատ մը քաղաքացիներ զայն նկատեցին շրջանցելու փորձ մը իշխանութեան վրայ մնալու երրորդ շրջան մը, ինչ որ պատճառ դարձաւ, որ կացութիւնը ամբողջութեամբ պայթի:

Այսուհանդերձ, հակառակ կացութեան բարդացումին եւ ամէն տեսակ հաւանականութեան առկայութեան, Փաշինեան ձախողեցաւ բաւարար ձայներ ստանալու, որպէսզի դառնար անցումային վարչապետ, հակառակ անոր որ միակ թեկնածուն էր, որովհետեւ իշխող կիւսակցութիւնը գոյութիւն ունեցող տագնապը մեղմելու փորձով մը, իր կողմէ թեկնածու չէր ներկայացուցած:

Վերլուծաբանները արձանագրեցին մէկէ աւելի երեւոյթներ, որոնցմով յատկանշուեցան այս խաղաղ բողոքները:

Անոնցմէ առաջինն է բոլորին մեծաթիւ մասնակցութիւնը, մասնաւորաբար երիտասարդներու եւ զանազան ուսումնական հաստատութիւններու աշակերտութեան, որոնք իջան մայրաքաղաք Երեւանի փողոցները եւ պնդեցին հոն մնալ օրերով, արդարացնելով այդ քայլը իրենց փափաքը եւ ճիգը՝ ունենալու աւելի լաւ ապագայ մը:

Կարգ մը ցուցարարներ բացատրեցին, թէ երկար ատեն դժգոհած են տիրող կացութենէն, սակայն չեն գտած մէկը, որ զիրենք առաջնորդէ եւ պահպանէ, մինչեւ Փաշինեանի երեւիլը: Առաջին անգամն է, որ 1991-ին Սովետ Միութենէն անկախանալէն ի վեր կը հաւատան աւելի լաւ ապագայի մը գոյութեան:

Կարգ մը անձեր այն կարծիքը ունին, թէ այս սերունդը չէ ապրած սովետական շրջանին եւ չէ տեսած միակ կուսակցութեան տարածած փառաբանութիւնները եւ մէկ ձայնը, հետեւաբար ան աւելի ազատ է եւ աւելի կը պնդէ իր իրաւունքները պահանջելու համար:

Անոնցմէ երկրորդն է Ռուսիոյ հանդարտ անդրադարձը այս տագնապին ուղղութեամբ, ինչ որ աննախընթաց է պետութեան մը համար, որ ոչ միայն անցեալին իրեն մաս կը կազմէր, այլ նաեւ տակաւին սերտ կապեր կը պահէ անոր հետ: Մոսկուայի եւ Երեւանի միջեւ տնտեսական գործակցութեան կողքին, Հայաստանը մաս կը կազմէ Ռուսիոյ հետ շրջանային զինուորական դաշինքին: Հետեւաբար Ռուսիոյ հետաքրքրութիւնը այս երկիրով բնական եւ հասկնալի կը թուի:

Քրեմլինի յայտարարութիւնը ցոլացուց այն հանդարտ մօտեցումը, որ կը հաստատէ թէ ներքին տագնապին շրջանցումը կը պահանջէ, որ քաղաքական ուժերը ունենան ինքնազուսպ ընթացք եւ պատրաստակամութիւն, առկախ հարցերը լուծելու սահմանադրական շրջագիծի մէջ, մինչ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը բաւականացաւ յայտարարելով, թէ Մոսկուա ուշադրութեամբ կը հետեւի Հայաստանի կացութեան զարգացումներուն եւ այնպէս կը թուի, թէ Ռուսիոյ կարեւորութեան գիտակցութիւնը մղեց ընդդիմութեան ղեկավարը յայտարարութիւն մը կատարելու, նախքան ռուս պատգամաւորներու պատուիրակութեան մը հետ հանդիպումը, որմէ յետոյ ան յանձնառութիւն առաւ սերտ կապեր պահելու Ռուսիոյ, Միացեալ Նահանգներու, Չինաստանի եւ Եւրոպական Միութեան հետ:

Ռուսական այս դիրքորոշումը բոլորովին տարբեր է Վրաստանի 2003-ի յեղափոխութեան շրջանին պատահածէն, ինչպէս նաեւ 2004-ին Ուքրանիոյ մէջ պատահած նարնջագոյն յեղափոխութենէն եւ նոյնիսկ ուքրանական վերջին տագնապէն: Անոր բացատրութիւնը, ըստ կարգ մը դիտորդներու կարծիքին, այն է, թէ ռուսական կողմը հասկացողութիւն ցոյց կու տայ, որ Հայաստանի տագնապին արմատները տեղական են, ի տարբերութիւն այլ պարագաներու, որոնք պատահեցան նախկին սովետական շրջագիծին մէջ, ուր արտաքին միջամտութիւնը յստակ էր եւ շօշափելի: Ինչ որ կը պատահի Հայաստանի մէջ, չի մտներ գունաւոր յեղափոխութիւններու ծիրին մէջ:

Ինչպէս նաեւ Ռուսիա շատ լաւ գիտէ, թէ նոյնիսկ այս բողոքներուն յաջողութեան պարագային Հայաստանի անցումը իր պատմութեան նոր մէկ հանգրուանին, չի փոխեր Մոսկուայի վրայ իր տնտեսական եւ զինուորական յենուածութիւնը , մանաւանդ իր դրացիին՝ Ատրպէյճանի հետ ունեցած Լեռնային Ղարաբաղի վէճին առկայութեան, որ չէ լուծուած:

Փաշինեան (42 տարեկան), որ նախկին լրագրող է եւ այժմ Ազգային Ժողովի պատգամաւոր, կոչ ուղղեց իր հայրենակիցներուն սկսիլ քաղաքացիական անհնազանդութեան ամբողջական արշաւ մը, մինչեւ որ Ազգային ժողովի պատգամաւորները եւ իշխող կուսակցութիւնը քննարկեն ներկայ տագնապը լուծելու հարցը, մանաւանդ որ սահմանադրութիւնը կը նշէ, որ Ազգային ժողովը անպայմանօրէն մէկ շաբթուան ընթացքին պարտի գումարուիլ եւ նոր վարչապետ մը ընտրել: Իսկ դարձեալ ձախողելու պարագային Ազգային Ժողովը կը լուծուի:

Փաշինեան շարունակ կը հաւաստիացնէ, թէ ինք միակն է, որ կրնայ արմատախիլ ընել փտածութիւնը եւ առաջնորդել երկիրը դէպի խորհրդարանական ազատ ընտրութիւններ, ինչ որ այս տագնապին զարգացումներուն նախատեսութիւնը կը վերածէ շատ դժուար խնդիրի մը:

**«Ալ Ահրամ» օրաթերթ, Գահիրէ**
**Երկուշաբթի, 7 Մայիս 2018**
**Թարգմանութիւնը՝ Պերճ Թէրզեանի**

# Կաթողիկոսը հաստատում է նոր առաջնորդի ընտրությունը

**Մայիսի 8-ին, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն հաստատել է Հայր Դանիել Ֆինդիքյանի ընտրությունը որպես Հայ եկեղեցու Ամերիկայի արեւելյան թեմի առաջնորդի: Ֆինդիքյանին այդ պաշտոնում մայիսի 4-ին ընտրել էր թեմի 116-րդ համագումարը, որը հավաքվել էր Նյու Յորքի Վեստչեստեր Կաունտիում:**

**Հոգեւոր նոր առաջնորդը փոխարինելու է Խաժակ արք. Պարսամյանին, որն ավելի վաղ հայտարարել էր, որ 28 երկար տարիներ (յոթը պաշտոնաշրջան) ծառայելուց հետո հրաժարական էր տալիս իր պաշտոնից:**

**Նյու Յորքի Սբ. Վարդան մայր եկեղեցում մայիսի 8-ին կեսօրից հետո տեղի է ունեցել գահակալման կարճատեւ արարողություն, որի ընթացքում պաշտոնապես նոր առաջնորդին է փոխանցվել եպիսկոպոսական ասան՝ գավազանը: Արարողությանը մասնակցել է Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ Նաթան արք. Հովհաննիսյանը, ով Ս. Էջմիածնից հատուկ այդ առթիվ ժամանել էր Նյու Յորք:**



«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԵ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 3.5.2018, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUIT.qxd 10/05/2018 19:50 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ

Թիվ 18(378)
11 ՄԱՅԻՍ
2018



# Վալմար. Հնչող նկարչություն

**ԼԵՒՈՆ ԼԱՃԻԿՅԱՆ**

Արտաքինից դատելով բնավ չես ասի, թե ՀՀ ժողովրդական նկարիչ Վլադիմիր Մարգարյանը, նույն ինքը՝ Վալմարը, օրերս հատեց 70-ի շեմը: Դա նկատելի չէ նաեւ նրա ստեղծագործական եռանդուն գործունեությանն ի մոտո հետեւելիս: Օրերս Ազգային պատկերասրահում բացվեց նրա հոբելյանական ցուցահանդեսը:

Այսօր եւս Երեւանի կենտրոնում գտնվող նրա արվեստանոցում կարող ես տեսնել իրար կողք-կողքի շարված թաց ու անավարտ նոր աշխատանքներ: Նկարչի համոզմամբ, «Պրոֆեսիոնալ արվեստագետը չպետք է մտածի՝ նկարելու ցանկություն ունի, թե՞ ոչ: Նա այդ աշխարհի մեջ պետք է լինի»: Ինքն այդ աշխարհում է արդեն գրեթե կես դար: Վկան՝ հայրենիքում եւ արտերկրում նրա կազմակերպած շուրջ 50 անհատական ցուցահանդեսներն են եւ Հայաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Ֆրանսիայի եւ Ճապոնիայի պատկերասրահներում ու թանգարաններում ցուցադրվող նրա գործերը:

Արդ. ինչո՞վ են Վալմարի ստեղծագործությունները գրավում հայ եւ օտար արվեստասերին: Նախ եւ առաջ, իհարկե, իրենց նրբագեղությամբ ու ոգեղենի արտացոլման գեղագիտությամբ: Տպավորում են հատկապես դրանցում առկա գծի բանաստեղծականությունն ու ռիթմի երաժշտականությունը: Պակաս կարեւոր չեն նաեւ զգայականությունն ու զգացմունքայնությունը: Վերջինս, ըստ նկարչի, պայմանավորում է ընդհանրապես արվեստի էությունը, որը կոչված է արթուն պահել մարդու ներաշխարհը: Մեջբերենք նաեւ արվեստաբան **Արարատ Աղասյանի**՝ Վալմարի ստեղծագործությանը տված հակիրճ բնութագրականը. «Սա ներհայաց անվրդով, լուռ ու երազկոտ մտորումներով, լուսավոր թեթեւ տխրությամբ, մտամփոփ արվեստ է»:

Չնայած նկարչի օգտագործած արտահայտչամիջոցների նկատելի զանազանությանը՝ Վալմարի գործերը երեւան են հանում մեկ միասնական ոճ, որ նա կարողացել է բյուրեղացնել մի քանի տասնամյակի ընթացքում: Նրա աշխատասիրությունը, միանալով բնատուր տաղանդի հետ, գոյացրել է տպավորիչ մի գունաշխարհ, որը չես կարող շրջանցել արդի հայ գունապնակի մասին խոսելիս:

Վալմարն իր ստեղծագործական ուղին սկսել է ծննդավայր Լենինականից: Սովորել է տեղի Մերկուրովի անվան նկարչական դպրոցում՝ որպես առաջին ուսուցիչ ունենալով Հակոբ Անանիկյանին: Հետագայում, երբ ավարտեց Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտը եւ սկսեց մասնակցել ցուցահանդեսների, նրա մուտքը հայկական գեղարվեստ ողջունեց մեծն Երվանդ Քոչարը:

Առաջին բնանկարները ցոլացնում էին հարազատ Գյումրու տեսարանները: Հետագայում դրանք միավորվեցին «Իմ պատուհանից» նկարաշարում: Մինչ օրս հայտնի նկարիչը անխզելի թելերով է կապված իր հայրենի ոստանի հետ, որտեղ ստացել է գեղարվեստական իր մկրտությունն ու ձեւավորել գեղագիտական ճաշակը: Բնական էր ուրեմն, որ 1988-ին պատուհասած երկրաշարժի ավերիչ դրվագները տեղ գտնեին նրա աշխատանքներում: Արդյունքում ծնվեց նշանավոր «Արհավիրք» շարքը, որը դիտելիս քեզ թվում է, թե հողը երերում է ոտքերիդ տակ, իսկ երկինքը՝ փուլ է գալիս գլխիդ: Շարքի աշխատանքներից մեկում, օրինակ, առջեւի պլանում խորհրդանշական սեւ շունն է, ետեւում՝ «Էն փլած տներ»՝ որպես խորապատկեր ուրվականների պես դեսուդեն վազող մարդկանց համար:



Վալմարի կտավներում ու գրաֆիկական թերթերում, նրա պիրկ ու դինամիկ կոմպոզիցիաներում հաճախ են գոյակցում ուղղահայաց գծերն ու կորերը, լուսաստվերային խաղերն ու սառըտաք տոների սահուն անցումները: Երկրաչափական այդ ձեւերի աբստրահված տարրերով է ամբողջապես կառուցված հոգեւոր թեմատիկային նվիրված մեկ այլ նկարաշար («Հավատ»): Հատկապես ուղղահայաց գծերը, որոնք իրոք ոճական ծանրաբեռնվածություն են կրում, կազմում են Վալմարի ստեղծագործությունների առանցքային հենքը: Թերեւս այդ պատճառով է, որ նրա մոտ գեղանկարն ու գծանկարը գիրկընդխառն են զարգանում եւ կարծես փոխներթափանցված լինեն: Չմոռանանք, անշուշտ, նաեւ նկարչի խիտ գույների մասին, որոնք ամբողջանում են ոսկու ու արծաթի գուներանգների կիրառմամբ:

Տարբեր մոտիվների կարելի է հանդիպել այս արվեստագետի աշխատանքներում: Զարմացնում է դրանցից յուրաքանչյուրի տարբեր փոխակերպումները տալու նրա հմտությունը: Թերեւս միակը երաժշտական մոտիվն է, որ անցնում է նկարից նկար («Ջութակի կոնցերտ», «Ջազային երաժշտություն», «Կոնցերտ», «Սիրո երգ», «Դուետ», «Տրիո» եւ այլն): Այն ակնհայտորեն վկայում է, որ եթե Վալմարը նկարիչ չդառնար, հաստատ երաժշտությունը կընտրեր որպես մասնագիտություն: «Ջազմեն կդառնայի»,- խոստովանում է նկարիչը: Դարձյալ արվեստի այս տեսակից է նա քաղում իր գրաֆիկական աշխատանքների բովանդակությունը:

Հմուտ դիրիժորի նման նա ներքին կանոնավորման է ենթարկում նկարի ողջ մակերեսը նույնիսկ այն գործերում, որտեղ գծերի սլացք կա ու գույների հորձանք: Հեղինակին լիովին հաջողվում է, իր իսկ բնորոշմամբ, «գունավորել» երաժշտությունը («Կապույտ երաժշտություն», «Կանաչ երաժշտություն», «Երաժշտությունից այն կողմ» եւ այլն)՝ անդրադառնալով մերթ անտիկ ու դասական մելոսին, մերթ՝ ժամանակակից ջազային ելեւէջներին:

Վալմարի ստեղծագործական ժառանգության անբաժանելի մասն են կազմում նաեւ նրա նատյուրմորտներն ու դիմանկարները: Առաջիններում հեղինակը փորձում է առարկաներն ու ծաղիկները պատկերել հայելային անդրադարձումներով՝ այդպիսով պատկերելով այն տարբեր չափումների մեջ: Իսկ ինչ վերաբերում է դիմանկարներին, ի մասնավորի՝ երկու տասնյակից ավելի ինքնադիմանկարներին, ապա ըստ նկարչի, դրանք ստեղծվում են միայն կուլմինացիոն հոգեվիճակներում, երբ ուզում է մաքրվել ներքին սիրուց ու ցավից:

Դասական արվեստի էությունը խորապես ըմբռնելով ու դրա հանդեպ երկյուղած վերաբերմունք ունենալով հանդերձ՝ Վալմարն անընդհատ որոնումների մեջ է՝ հետամուտ գեղարվեստական նոր ձեւերի (օրինակ, «Իսպանական ու Վենետիկյան տպավորություններ» շարքերը): «Ես անընդհատ փորձում եմ մոտենալ ինքս ինձ,- մի առիթով գրել է նա:- Յուրաքանչյուր մարդ պետք է փորձի ինքնիրեն պեղել, խորանալ ինքն իր մեջ»: Ընդհանրապես, նա շատ պատկերավոր է նկարագրում ստեղծագործական ընթացքը. «Նկարելը հաճույքից բացի նաեւ տառապանք է: Նկարելու ընթացքում ժխտում ես ինքդ քեզ, հետո հաշտվում, կռվում ու սիրում: Այդ ամենից հետո արդեն հանրությանն ես պարգեւում տառապալից սիրուց աշխարհ եկած ասելիքդ, որ հիմա էլ ուրիշները ժխտեն ու ընդունեն, կռվեն, սիրեն ու հասկանան քեզ»: Ես կավելացնեի. երբեմն էլ՝ չհասկանան...

Չմոռանանք նշել, որ գնահատելով իր արվեստագետ ընկերների գործունեությունը՝ Վալմարը տասնամյակների ընթացքում ձեռք է բերել նրանց մոտ 150 աշխատանք, եւ արդյունքում այսօր ունի եզակի մի հավաքածու: Իսկ 2004-ից Երեւանում գործող «Վալմար» ցուցասրահում (valmargallery.com) գրեթե ամեն տարի, որպես ստեղծագործական հաշվետվություն, կազմակերպում է անհատական նոր ցուցահանդես:

Հայաստանի Ազգային պատկերասրահում մայիսի 4-ին բացված հերթական անհատականը նվիրված է նկարչի ծննդյան 70-ամյակին: Դրանում պատկերանում է Վալմարի անցած ողջ ուղին, որն իրավամբ եղել է սեփական եսի անվերջ հայտնագործման երկար ու բեղմնավոր ճանապարհ: Վերջինիս տպագրական արտացոլքն է 2017-ի տարեվերջին լույս տեսած ստվարածավալ պատկերագիրքը:

Շնորհավորում ենք հոբելյարին, իսկ նրա երկրպագուներին հիշեցնում, որ ցուցահանդեսը գործելու է մինչեւ մայիսի 27-ը:



# Լուսանկարների ցուցահանդես Սբ. Վարդան մայր տաճարում

Մայիսի 5-ի շաբաթավերջում աննախադեպ լուսանկարների ցուցահանդես է բացվել Նյու Յորքի Սբ. Վարդան մայր տաճարում նշանավորելու համար եկեղեցու կառուցման եւ օծման 50-րդ տարեդարձը: Նյույորքաբնակ Յոհաննա Գոլդֆեյլդի ձեւավորմամբ ցուցահանդեսը, ըստ «Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի, յուրահատուկ պատմական ակնարկ է մայր տաճարի անցած ուղու մասին:

Հայաստանի Սբ. Հռիփսիմե տաճարի (7-րդ դար) նմանողությամբ, եղեռնը վերապրած հայորդիների նախաձեռնությամբ կառուցված հոգեւոր շինությունը պաշտոնապես օծվել է 1968-ին ձեռամբ Ամենայն Հայոց երջանկահիշատակ կաթողիկոս Վազգեն Ա-ի: Տաճարը կառուցվել է մրցանակակիր ճարտարապետ Ուոքեր Կուինի նախագծով, եւ համարվում է Մանհաթենի աչքի ընկնող ճարտարապետական կառույցներից մեկը, ուր իրենց այցելություններով պատվել են Նյու Յորքի մի շարք քաղաքագլուխներ, ինչպես օրինակ Ջոն Լինդսին եւ Մայքլ Բլումբերգը:

Որպես կրոնասեր հայկական համայնքի անքակտելի մասը, տաճարը համաժողովրդական միասնականության վայր է եղել մեր պատմության ճգնաժամային պահերին, ինչպես օրինակ Արցախյան շարժման, Սպիտակի երկրաշարժի եւ այլ առիթներով: Այն նաեւ Նյու Յորքի էկյումենիկ համայնքի կարեւորագույն կենտրոններից է եւ ծառայել է որպես հավաքավայր տարբեր կրոնների առաջնորդների համար հանուն համընդհանուր մարդասիրական առաքելությունների:

«Ներկայացված 60 լուսանկարները հրաշալի հիշողություններ են արթնացնում: Երախտապարտ եմ ծրագիրը մտահղացող հանձնախմբին այս գեղեցիկ առիթը ընձեռնելու համար», նշել է **Խաժակ արք. Պարսամյանը**:

Հ.Ծ.

AZG NEW MSHAKUIT.qxd 10/05/2018 19:50 Page 2



# ՄԱՐԿ ՆՇԱՆՅԱՆ. «Պըլտյանը վերականգնեց ժամանակը մեր սփյուռքյան գոյության մեջ»

*France-Arménie հանդեսի հարցազրույցը փիլիսոփա Մարկ Նշանյանի հետ*

**- Ե՞րբ ծանոթացաք Գրիգոր Պըլտյանի հետ եւ իր ստեղծագործությանը:**

- Ստեղծագործությունը մարդն է: Ու նրան ծանոթ եմ, այսպես ասած, ի սկզբանե: Փարիզ, Բլո փողոց, Հայ ուսանողների եվրոպական ընկերակցություն, 68-ի մայիսին անմիջականորեն նախորդած եւ հաջորդած ժամանակաշրջան. սրանք են ժամանակը եւ վայրը: Բեյրութից եկած այդ բոլոր նոր բարեկամները, որոնք հայերենին տիրապետում էին աստվածների պես, որոնք գիտեին ինձ անհայտ շատ բաներ, որոնք այդ լեզվով աշխարհ էին հորինում, որոնք այնտեղի եւ այստեղի, Ստամբուլի եւ Փարիզի գրականության բնական ժառանգորդներն էին, ես ինչպե՞ս կարող էի նրանցով չտոգորվել մինչեւ իմ ուղնուծուծը:

**- Նրա պոեզիայի ընթերցումը ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ այն ժամանակ Ձեր սովորած արեւմտահայ գրական լեզվի հանդեպ Ձեր վերաբերմունքի վրա:**

- Պըլտյանի պոեզիան հեղափոխական է: Այն հեղափոխական է իր ավանդույթի` Կոստանդնուպոլսի եւ սփյուռքի հայ բանաստեղծների ավանդույթի, ինչպես նաեւ Ֆրանսիայում ընդունված պոեզիայի համեմատությամբ: Ժամանակ է հարկավոր այդ բացարձակ նորամուծության ներքին ուժը ըմբռնելու համար: Արեւելյան լեզուների ու քաղաքակրթությունների ինստիտուտի կազմակերպած գիտաժողովի ժամանակ մենք խոսում էինք ավելի շուտ մեր գրական նախասիրությունների մասին: Պըլտյանը իր հիացմունքն արտահայտեց ձեւավորման փուլում Պոլ Վալերիի գրած երկերով: Իմ հիացմունքը պակաս չէր:

**- Դուք Գրիգոր Պըլտյանի վիպաշարի յոթերորդ մասի` «Շրջման» վերլուծության միջոցով մեկնաբանել եք անհնարին վերադարձի հարցը: Ինչո՞վ կբացատրեք այդ ընտրությունը:**

- Հարկավոր էր հասկանալ վերնագրում ազդարարված «շրջումը»: Այդ շրջադարձը վերաբերում է հեղինակի վերամեկնաբանած ամբողջ ստեղծագործությանը:



Վիպաշարի հատորները առանձին-առանձին հրատարակվել էին Հալեպում, Լոս Անջելեսում, Փարիզում: Տվյալ դեպքում 2012 թ. Երեւանում հրատարակված աշխատությամբ հեղինակը ընդհանուր վերնագիր («Գիշերային վերադարձ») եւ ոչ պաշտոնական բնութագիր («պատմվածքներ») էր տալիս նախապես դրանք չունեցած շարքին: Այսպիսով նա ստեղծագործությանը տալիս էր միասնականություն, որը չէր ազդարարվել եւ հավանաբար չէր էլ նախատեսվել նախորդ հատորներում: Այդ ամենը պահանջում էր առանձնահատուկ քննություն: Այդ «շրջումը» «լրիվ շրջադարձ» էր, «հայացքափոխություն»: Դա նաեւ «վերադարձ» էր, շատ փիլիսոփայական թեմա Նիցշեի «հավերժական կրկնությունից» ի վեր, որը հարկավոր էր նկատել վեպի ներսում եւ հասկանալ, թե ինչու «պատմվածքը» պահանջում է միաժամանակ երկու բան. մի կողմից կրկնել «վերադարձի» փիլիսոփայական թեման եւ մյուս կողմից լիովին սահմանազատվել դրանից: Այսպիսով դա թույլ էր տալիս ինչ-որ բան ճանաչել Նիցշեի մտադրությունների մեջ: Համենայն դեպս, դա անհնարի «վերադարձը» չէ, եթե գոյություն ունի անհնարինություն: Ընդհակառակը, կեցությունն առկա է միայն վերադարձի միջոցով: Ուստի հարկավոր է կարողանալ «վերադարձը» կարդալ եւ ապրել Աղետի հորիզոնի վրա: Վերապրողը նա է, ով վերադառնում է, ով շրջվում է:

**- Արդյոք կարո՞ղ ենք ասել, թե Պըլտյանի երկերում լեզուն կակազում է: Բանն այն է, որ նա ֆրանսերենը յուրացրել է արեւմտահայերենով նոր ավանդույթ ստեղծելու համար...**

- Լեզուն Պըլտյանի կարիքը չունեցավ կակազելու համար: Այն կակազում է ինքնուրույնաբար: Ինչ վերաբերում է ֆրանսերենի յուրացմանը, դա այլ բան է: Պոլսահայ գրողները նմանապես գիտեին այն ամենը, ինչ արվում էր Ֆրանսիայում, եւ ես կկարողանայի նույնն ասել Փարիզի երեսնականների գրողների վերաբերյալ: Պըլտյանը շատ գեղեցիկ բաներ է գրել նրանց մասին: Վերջիններիս միջոցով նա վերաքննել է Աղետի հանդեպ վերաբերմունքը, որը, իհարկե, տարբեր է այդ սերունդներից յուրաքանչյուրի համար: Ձեր անվանած «նոր ավանդույթից» նրան տարբերում է այն փաստը, որ նա անցյալի եւ ներկայի հետ հաստատում է հակազդական եւ քննադատական հարաբերություն: Դա քիչ բան չէ: Գրականության մեջ իր նախորդները չէին հասցրել դա անել: Աղետը խլել էր նրանց ժամանակը: Խոսքը ոչ թե նյութական ժամանակի, այլ ավելի խոր բեկվածքի մասին է, որը ձայնին թույլ չի տալիս դուրս գալ կոկորդից: Այդ մասին խորհրդածելով` Պըլտյանը վերականգնեց ժամանակը մեր սփյուռքյան գոյության մեջ. չնայած մասնատվածությանը, դա այնուամենայնիվ ժամանակ էր: Ահա թե ինչն է աներեւակայելի:

**- Պըլտյանը գրում է վերապրած լեզվով, ինչպես ինքն է ասում, «տարկետված լեզվով»: Այդ ընտրությունը միտումնավո՞ր է: Նրա արձակը ինչո՞վ է արեւմտահայերենը դարձնում ընդհանրական լեզու:**

- Մի՞թե կա արեւմտահայ «մտածողություն»: Գուցե խոսքը անցյալում երբեք չմտահղացված փորձառությա՞ն մասին է, որը ի հայտ է գալիս միայն այսօր, նախապես մեր աչքերի առաջ: Եթե իրոք այդպես է, ապա պարզ է, որ այն ի հայտ է գալիս որպես փորձառություն, քանի որ մտահղացվել եւ բացահայտվել է որպես փորձառություն: Մեկն առանց մյուսի երբեք չի գործում: Վերապրողը չի խոսում, եթե իրեն չեն խոսեցնում, այսինքն չեն դարձնում վկա, սեփական անձի անհնարին վկա: Վկա դառնալը, դրա պայմանները, դրա գործընթացը անտեսանելի կմնային առանց գրականության, որը դրանք բեմ է հանում, թեմա ստեղծում եւ, ի դեպ, ինքն իրեն հարցականի տակ է դնում այդ բեմականացման միջոցով: Ահա Աղետի ոչ ընդհանրական հորիզոնի վրա ուրվագծվելու եւս մեկ ձեւ: Աղետ, որը ընդհանրականորեն նույնիսկ անհայտ է: Մենք դարձյալ այդ միջանկյալ վիճակում ենք: Մենք ընդհանրական ենք դառնում միայն թյուրիմացությամբ:

Զրուցեց ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆԸ
France-Arménie, octobre 2015
Ֆրանս. թարգմ. Պ. Ք.

# Հայ նկարիչների ցուցահանդես «Gallery Z-ում»



Փրովիդենսի (Ռոդ Այլենդ) Ատուելս պողոտայում գտնվող «Gallery Z-ում» (տնօրեն Պերճ Զոբյան) տարիներ շարունակ ցուցադրվել են համաշխարհային ճանաչման արժանացած նկարիչների, այդ թվում նաեւ հին ու նոր ժամանակների 400-ից ավելի հայ նկարիչների ստեղծագործությունները: Այս անգամ ապրիլի 19-ից մինչեւ մայիսի 6-ը պատկերասրահում ներկայացվել են Սիմոն Սամսոնյանի (1915-2003), Գեւորգ Մուրադի (1970), Աղասիի (1964), Ռաֆայել Աթոյանի (1931-2014), Լարա Բիի (1977), Էմմա Գրիգորյանի (1943), Ալեքսանդր Գրիգորյանի եւ Էլիբեկյանների երեք սերունդների (Արեգ- 1970, Ռոբերտ- 1941, Վաղարշակ- 1910-1994) կտավները:

**Սիմոն Սամսոնյանը** Մեծ եղեռնի ժամանակ որբացած եւ Հունաստանի ու Եգիպտոսի որբանոցներում մեծացած արվեստագետ է, որին Սամսոնյան ազգանունն են տվել Սամսունում ծնված լինելու պատճառով: Ուսանել է Կահիրեի հայկական Գալուստյան եւ արվեստի Լեոնարդո դա Վինչի վարժարաններում: Եվրոպական երկրներում ճանապարհորդելուց հետո վերադարձել է Եգիպտոս եւ ստեղծագործել հիմնականում կուբիզմի ոճով: ԱՄՆ է տեղափոխվել 1968-ին: Նրան բնորոշ են համարձակ գծերն ու հարուստ գույները: «Խորհրդանշական կուբիզմ» հորջորջված նրա կտավները ցուցադրված են Մ. Նահանգներում, Եգիպտոսում, Հայաստանում, Ֆրանսիայում եւ Ավստրիայում:

**Գեւորգ Մուրադը** ծնվել է Հալեպում (Սիրիա): Ավարտել է Երեւանի Գեղարվեստի ինստիտուտը: Նրա բազմաշերտ եւ զգացմունքային կտավները դիտողի առաջ բացում են հայ ժողովրդի պատմության եւ տառապանքի էջերը: Անդամակցում է 3ո-3ո-Մայի «Մետաքսի ճանապարհ համույթին»: Ապրում է Նյու Յորքում: Կտավները ցուցադրված են Փարիզում եւ Դուբայում:

**Աղասին** (Պողոս Թասլաքյան) ծնվել է Լիբանանում: Սովորել է Հայաստանում եւ Իտալիայում (Վենետիկի Գեղարվեստի ակադեմիայում): Կտավները ցուցադրված են Հայաստանում, Իտալիայում եւ Լիբանանում: Սիրում է օգտագործել հիմնականում մուգ գույներ:

**Ռաֆայել Աթոյանը** ծնվել է Լենինականում (Հայաստան): Ավարտել է Թերլեմեզյանի անվան եւ Երեւանի գեղարվեստաթատերական կրթօջախները: Վաստակավոր նկարչի կոչմանն է արժանացել 1982-ին: Ֆրեզնո (Կալիֆոռնիա) է տեղափոխվել 1988-ի երկրաշարժից հետո: Նրա կտավները ցուցադրվել են Խորհրդային Միության եւ Եվրոպայի տարբեր քաղաքներում: Նկարներում բնության գրկում մարդկանց խաղաղ տեսարաններ են: Ունի նաեւ դիմանկարներ եւ նատյուրմորտներ:



**Լարա Բին** ծնվել է Բեյրութում (Լիբանան) եւ սովորել Թորոս Ռոսլինի անվան արվեստի ակադեմիայում: 2001-ին ավարտել է Լիբանանի Գեղարվեստի համալսարանը: Մ. Նահանգներ է տեղափոխվել 2002-ին, որտեղ երկու տարի անց մասնակցել է Նյու Յորքում, Սան Ֆրանցիսկոյում եւ Փրովիդենսում կայացած խմբակային ցուցահանդեսների: Ապրում է Կալիֆոռնիայում:

**Էմմա Գրիգորյանը** գյումրեցի է: Հաճախել է Թերլեմեզյանի անվան եւ Երեւանի գեղարվեստաթատերական կրթօջախները: 1971-ին դարձել է Նկարիչների միության անդամ: Ներկայիս ապրում է Քուինզում (Նյու Յորք, ԱՄՆ): Կտավները ներկայացվել են ինչպես խմբակային, այնպես էլ անհատական ցուցահանդեսներում:

**Ալեքսանդր Գրիգորյանը** ծնվել է Հայաստանում: Նկարիչ է, քանդակագործ եւ բանաստեղծ: Հայտնի են նրա Ուիլյամ Սարոյանի եւ Ալեք Մանուկյանի դիմանկարները:

**Էլիբեկյանների** ընտանիքում նկարչությունը մի սերնդից մյուսին է անցել ժառանգաբար: **Վաղարշակը** եւ **Ռոբերտը** ծնվել են Թբիլիսիում: **Արեգը`** Երեւանում: Վաղարշակի կտավներում պատկերված են հին Թիֆլիսի կենցաղը, ավանդույթները եւ բանահյուսությունը ներկայացնող տեսարաններ: Ռոբերտը Երեւան տեղափոխվելով ավարտել է գեղարվեստաթատերական ինստիտուտը 1969-ին եւ ստեղծել կտավներից բացի նաեւ օպերաների, ֆիլմերի եւ ներկայացումների համար հրաշալի դեկորացիաներ: Արեգը նույնպես ավարտել է (1992-ին) Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: Տեղափոխվել է Մոնրեալ եւ հաճախակի այցելում է Փարիզ, որտեղ ներշնչանքի աղբյուր են ծառայում կամուրջները, կաֆեները եւ նավահանգիստները: Էլիբեկյաններից յուրաքանչյուրն իր արժանի տեղն ունի աշխարհի հեղինակավոր թանգարանների կտավների մշտական ցուցադրություններում:

Առավել մանրամասն տեղեկությունների համար այցելել «www.armenian-artgalleryz.com» կայքը:

Հ.Ծ.

AZG NEW MSHAKUIT.qxd 10/05/2018 19:50 Page 3



# «Միս ուտողներ» – 180

*Օրերս լրացավ ժամանակակից գրող Հովիկ Աֆյանի «Միս ուտողները» գրքի 6 ամսյակը կամ 180 օրյակը. 180... լավ թիվ է, մանավանդ՝ հայացքային փոփոխությունների աստիճանավորման տեսանկյունից:*

*Այս գիրքն արդեն փորձառու լրագրողի անդրանիկ ժողովածուն է, որտեղ առաջին անգամ ընթերցողին են ներկայացվում տարբեր տարիներին գրված նրա պատմվածքները, որոնք, ինչպես հինքն է ասում՝ գրվել են ժամանակի անկեղծ պատասխանատվությամբ ու ազնիվ մուսայի ներկայությամբ: Իմ ու ինձ ծանոթ ընթերցողների կողմից սրտանց շնորհավորում եմ Հովիկին՝ իր գրքի կեսամյակի կապակցությամբ, եւ օգտվելով առիթից, կփորձեմ իր գրքում տեղ գտած պատմվածքների քանակով հարցեր ուղղել նրան, որը սոսկ հարցազրույց լինելուց բացի եւս մեկ հնարավորություն է այլ լույսի տակ բացահայտել համեմատաբար հին լրագրողին ու նոր գրողին:*




**- Ի՞նչը Ձեզ բերեց գրականության աշխարհ...**

-Իսկ գրականության աշխարհ կա՞: Կա աշխարհ, որտեղ կան ծառեր, սարեր, երջանիկները, որոնք նաեւ ծով ունեն, կամ օվկիանոսի ափին են ապրում, կա սեր, չնայած շատերը դրան չեն հավատում, կա արվեստ, որտեղ նետվում են կա՛մ շատ փող աշխատելու, կա՛մ աշխարհը փրկելու ցանկությամբ, եւ կան մարդիկ, ովքեր այս ամենի մասին գրում են, կամ էլ կարդում: Չնայած ոչ մի գրող աշխարհը չի փրկել, բայց կարդալով դա հնարավոր է:

**- Ինչո՞ւ «Միս ուտողներ»:**

-Որովհետեւ նրանց մասին է, ավելի ճիշտ՝ մեր՝ ոչ ազնիվներիս, ընդ որում ազնիվ՝ նախ եւ առաջ ինքներս մեր առջեւ: Ես չեմ հավատում, որ ազնիվ մարդ լինում է, ամենաազնիվներն անգամ չեն ասում, թաքցնում են, որ իրենք ազնիվ են, որպեսզի իրենց գովեն, իրենց սիրեն, իրենց մասին խոսեն: Իսկ սա արդեն ազնվություն չէ, գոնե 100 տոկոսանոց: Միս ուտողները սեփական անազնվությունը խոստովանած ազնիվներն են, կամ ազնիվ-անազնիվ խաղի մեջ մոլորվածները: Մարդկանց մեծամասնությունը, մարդիկ:

**- Ինչպես գիտենք, այս ժողովածուն Ձեր գրական պատանեկությունն է: Եթե երբեւէ հնարավոր լինի որեւէ բան այժմ, 180 օր հետո, կփոխե՞ք այնտեղ:**

-Երբեք: Ոչինչ չէի փոխի: Ինչպես ասացիք, սա իմ պատանեկությունն է, իսկ այնտեղ բան փոխել ես չեմ ցանկանա, հնարավոր էլ չէ. գիրքն արդեն կա, արագահոս ժամանակն արդեն անցել է:

**- Երբեւէ երազե՞լ եք գրող դառնալու մասին:**

-Չէ, երբ շատ փոքր էի, երազում էի բժիշկ դառնալու մասին, հետո երազեցի իրավաբան դառնալ, մի քանի օր անդադար երազում էի բանկիր դառնալու մասին, հետո սկսեցի երազել արտելլագիտության մասին, սակայն ընդունվեցի հոգեբանության ֆակուլտետ, մեկ տարի անց տեղափոխվեցի ժուռնալիստիկայի ֆակուլտետ եւ հենց այդ ժամանակ էլ հասկացա, որ այս ամենը դառնալու համար ես պետք է գրող դառնամ:

**- Ինչի՞ մասին եք մտածում, երբ չեք գրում:**

-Նայած, թե ժամը քանիսն է: Օրինակ երեկոյան 21:20-ից սկսած մտածում եմ՝ տուն վերադառնալու մասին, առավոտյան 08:00-ին մտածում եմ մի քիչ էլ քնելու մասին, օրվա ընթացքում եթե չեմ կարդում, ուրեմն գրում եմ: Հայրենիքի, ժողովրդի, իշխանության, ընդդիմության, Թրամփի կամ Պուտինի, Մարսում կյանքի, Քիմ Քարդաշյանի կամ Կոնգոյի գետաբերանի մրրիկների մասին չեմ մտածում...

**- Ձեզ նմանեցնո՞ւմ եք որեւէ գրողի:**

- Այն բոլորին՝ ում կարդացել եմ կամ կարդում եմ: Նմանվելն անխուսափելի է ե՛ւ գրականության մեջ, ե՛ւ կյանքում: Չնմանվելու ցանկությունը եւս: Ցանկացած նոր գրող կամ շարունակում է հնին, կամ հերքում է նրան: Իսկ ովքեր ոչ դա են անում, ոչ էլ մյուսը, այլ նոր բան են ասում, հանճար են:

**- Գրականության մեջ խուսափո՞ւմ եք որեւէ բանից:**

- Շատ բաներից եմ խուսափում: Օրինակ՝ բացասական կերպար ստեղծելուց: Սեփական հերոսին չսիրելուց: Ընթերցողին չծիծաղեցնելուց: Սեռական ակտի բոլոր մանրամասները նկարագրելուց, գիտական ֆանտաստիկայից, անտառում միայն ծառեր ու կենդանիներ տեսնելուց, բնություն գովերգելուց կամ անձրեւի կաթիլների բաղադրությունն ու նկարագիրը մանրամասն տալուց: Ես սիրում եմ մարդուն, սիրում եմ նրան լացացնել, հուզել, ծիծաղեցնել, կծել, ապտակել, ուշքի բերել, ...մի խոսքով՝ ձեռքը բռնել ու նայել աչքերի մեջ:

**- Ովքե՞ր են Ձեր գրքի հերոսները:**

-Նրանք, որոնց արածը ամենեւին էլ հերոսություն չէ: Ուղղակի ապրում են, ուղղակի ուտում են, խմում են, ծխում են, սիրում եմ, տիրում են, բռնաբարում կամ բռնաբարվում են, խոսում կամ լռում են, երբեմն նույնիսկ սպանում են, կամ ասենք՝ մանկատուն են պայթեցնում, բայց նրանք բոլորը այնքան մարդկային են:

**- Դուք լրագրող եք. լրագրությունը չի՞ խանգարում գրականությանը:**

- Իսկ ո՞ւմ կամ ինչի՞ն չի խանգարում լրագրությունը: Լրագրությունն ինքը գրականություն է, եթե թույլ կտաք՝ առանձին ժանր: Այ, լինում են չէ՞ աղջիկներ եւ գիշերային թիթեռնիկներ: Պատկերացրեք գրականությունն աղջիկներն են, լրագրությունը՝ գիշերային թիթեռնիկները: Մեկը մյուսին խանգարո՞ւմ է, խանգարում է, իսկ մեկը մյուսին չի՞ օգնում, օգնում է:

**- Որ հարցը չէիք ուզենա լսել՝ Ձեր գրքի հետ կապված:**

- Միակ բանը, որը չէի ուզենա լսել գրքիս հետ կապված՝ լռությունն է: Լռությունը՝ որպես գնահատական լավագույն մարդասպանն է: Գուցե դրա համար էլ ես մարդկանց եմ սիրում, ոչ թե ծառեր:

**- Ձեզ համար ո՞վ է ամենալավ գրողը. ո՞ւմ համար եք Դու՛ք ամենալավ գրողը:**

- Ամենալավ գրողը նա է, ում գիրքը գնում ես կամ գողանում: Իսկ ես... Չեմ հավատա նրան, ով կասի, թե ես ամենալավ գրողն եմ: Մի՞թե նա ոչինչ չի կարդացել:

**- Ունե՞ք գրականության հետ կապված դեռեւս չիրականացված նպատակ կամ նպատակներ:**

- Ես գրականության մեջ մեկ գիրք ունեմ, ընդ որում վստահ չեմ, որ այն գրականություն է: Իսկ երբ հասկանամ, որ բոլոր նպատակներս կատարվել են գրականության մեջ, այլեւս չեմ գրի:

**- Ո՞վ է Ձեր պատմվածքներն առաջինը կարդում:**

-Կինս: Ընդ որում՝ երեք անգամ: Առաջին անգամ, որպեսզի հասկանա, թե էլ ինչեր եմ հորինել, երկրորդ անգամ, որպեսզի վիճի հետս որոշ նախադասությունների, բառերի ու կետադրական նշանների շուրջ, եւ վերջին անգամ կարդում է... Մի անգամ հարցրեցի՝ ինչո՞ւ, ասաց, որովհետեւ լավն են:

**- Կա՞ որեւէ մեկը, որը գրող դառնալու ճանապարհին ուղղորդել է Ձեզ:**

- Հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչս՝ ընկեր Աբրահամյանը, ով հիմա իմ լավ բարեկամն է: Մի անգամ նա հանձնարարել էր, որ շարադրություն գրեինք աշնան մասին: Երբ կարդաց իմը, ասաց՝ սրանից հետո դո՛ւ կգրես, էլ քրոջդ չտաս, որ գրի: Դրանից հետո ես եմ գրում, կամ դրանից հետո գրում եմ:

**- Ընթերցողին դուր է եկել Ձեր առաջին ժողովածուն եւ նա սիրով սպասում է երկրորդին, զո՞ւր չե՞ն նրա սպասումները...**

- Սպասումները երբեք զուր չեն: Երկրորդ ժողովածուն պատրաստվում է, կարող եմ միայն ասել, որ այնտեղ իմ գործն ավարտվել է, մնում է ծառ կտրեն, կխնդրեմ, որ առողջ ծառ չլինի, դրա փայտից թուղթ պատրաստեն, որի վրա էլ տպեն:

**- Նոր գրքի «բնակիչները» կապ ունե՞ն «Միս ուտողներ» հետ:**

- Նոր գիրքը կկոչվի՝ «Անվճար աղավնիներ»: Իհարկե կապ ունեն, դրանք նույն միս ուտողներն են, ուղղակի ավելի մեծացած:

**- Հիմա գրեթե բոլոր գրողները տուրք են տալիս ժամանակի պահանջին, որը հաճախ նաեւ խանգարում է՝ առողջ գործ ստեղծելուն, իսկ Դուք ի՞նչ սկզբունքով եք գրում Ձեր ստեղծագործությունները:**

- Սկզբունք չկա, կա քաղաք, որն ունի շատ փողոցներ, որտեղ քայլում են շատ մարդիկ, որոնք այնքան հետաքրքիր են ապրում, որ անհնար է չգրելը: Իսկ ժամանակի պահանջին տուրք տալը...Գիտեք, կա երկու ժամանակ, երբ Ադամն ու Եվան դրախտում էին, եւ երբ նրանք դուրս եկան այնտեղից: Այդ օրվանից մինչեւ այսօր մարդը չի փոխվել:

**- Ի՞նչ եք ակնկալում Ձեր ընթերցողից:**

- Հերթ կանգնել գրախանութների մոտ. պարտադիր չէ՝ որ իմ գրքի համար:

**- Յուրաքանչյուրիս կյանքում կա մեկը կամ մի քանիսը, որ մեզնից շատ են տխրում մեր անհաջողությունների պատճառով եւ ամենաշատն ուրախանում՝ հաջողությունների համար. ո՞վ է Ձեր այդ մեկը կամ մի քանիսը:**

-Նրանք, որոնք իմ մասին խոսելիս կամ մտածելիս ասում են՝ իմ որդին է, իմ ամուսինն է, իմ հայրն է, իմ եղբայրն է, իմ ընկերն է... Ես երջանիկ եմ, քանի որ շատերինն եմ:

**- Ըստ Ձեզ, գրողի մեջ ո՞րն է բնավորության ամենաանտանելի գիծը:**

- Իրեն աշխարհի փրկիչ երեւակայելը: Ընդ որում՝ կապ չունի գրողն ինչպես է «աշխարհը փրկում», մարդ սպանելո՞վ, թե՞ մարդասպաններին սիրելով: Աշխարհը մի փրկիչ ունի, Ամերիկան, որին, ի դեպ, աշխարհում քչերն են սիրում:

**- Եթե մի օր ընտրության առջեւ կանգնեք, ո՞ր գիծը կընտրեք՝ գրողի՞, թե՞ լրագրողի:**

- Գրողի, բայց անպայման մի հոդված կգրեմ այդ ընտրության մասին:

**- Հանուն ինչի՞ երբեք չեք լքի գրականության աշխարհը:**

-Երբ հնարավոր լինի երբեք չլքել իրական աշխարհը, անպայման կհանդիպենք եւ ես կպատասխանեմ այդ հարցին:

Հարցազրույցը՝
ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԻ

## ԹՄՄ-ի թատերախումբը Քրիստի է բեմականացրել

Իր հիմնադրման 20-ամյակի առթիվ Թեքեյան մշակութային միության Միեր Մկրտչյան թատերախումբը ապրիլի 15-ին եւ 16-ին Օրադելի (Նյու Ջերսի) տարրական դպրոցի դահլիճում բեմականացրել է անգլիացի կին գրող, դետեկտիվ ժանրի թագուհի հորջորջված **Ագաթա Քրիստիի** (1891-1976) «**Անկոչ հյուրը**» պիեսը՝ հայերեն լեզվով եւ անգլերեն ենթախորագրերով:

Բեմականացումը տեղի է ունեցել այն նույն շաբաթավերջին, որ քսան տարի առաջ թատերախումբը տվել էր իր առաջին ներկայացումը: «Դարձյալ Պարոնյան» խորագրով (Թամար Հովհաննիսյանի բեմականացմամբ) Նյու Ջերսիի Սեդլ Բրուք պողոտայում գտնվող ՀԲԸՄ-ի նախկին կենտրոնում:

«Մենք տարբեր հեղինակների գործեր էինք բեմադրել, Ուիլյամ Սարոյան, Հակոբ Պարոնյան, Երվանդ Օտյան, Շեքսպիր, Պերճ Զեյթունցյան, բայց առաջին անգամն է, որ անդրադառնում ենք Քրիստիին, ցանկանալով ընդլայնել մեր բեմադրությունների ցանկը», նշել է բեմադրիչ եւ դերասան **Հարութ Չաքմաքճյանը**, ավելացնելով, որ թատերախմբի հիմնադրման ժամանակ ընդամենը 9 դերասան է եղել խմբում, այժմ 50 դերասաններ շարունակում են հայկական թատերարվեստի ավանդույթները համագործակցելով Գրիգոր Սաթամյանի, Պերճ Ֆազլյանի, Ժիրայր Փափազյանի եւ այլ տաղանդավոր բեմադրիչների հետ:

«Անկոչ հյուրը» ներկայացման համար հատուկ երաժշտություն է գրել երգահան **Հարութ Պարսամյանը**:

Ըստ «Միրոր Սփեքթեյթր» շաբաթաթերթի, Պարսամյանը «մեծ տեղ է» հատկացնում երաժշտությանը: «Դա հանդիսատեսի զգացմունքների հետ է խաղում, ավելացնելով տպավորությունը: Երաժշտությունը «զգեստավորում է»: Առանց դրա բեմադրությունը մերկ կլինի», ասել է նա:

Բեմադրության մեջ ներգրավված են եղել այլոց շարքում Հարութ Չաքմաքճյանը եւ Թալար Զոքյանը: Հ. Ծ.



# Ֆրանսիական ջազի ռահվիրան` Անդրե Էքյան

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ

«Ազգի»` անցյալ տարվա սեպտեմբերի 22-ի համարում մեր հրատարակած «Աշխարհի առաջին հայազգի ջազմենը» հոդվածը բավական արձագանք ունեցավ` կրկին ապացուցելով մեր ժողովրդի տածած հատուկ սերը ջազային արվեստի հանդեպ: Առաջին հայազգի ջազմեն Գրիգոր Քելեկյանին նվիրված հոդվածում հիշված էր նաեւ հայազգի ֆրանսիական սաքսոֆոնահար, կլառնետահար, երգահան, գործիքավորող եւ նվագախմբի ղեկավար Անդրե Էքյանը (Էքշյան, 1907-1972), որը հանդես էր եկել Քելեկյանի հետ գրեթե միաժամանակ: Ընդառաջելով ԱՄՆ-ից մի ընթերցողուհու խնդրանքին` ստորեւ ներկայացնում ենք նաեւ այդ երաժշտին:




Հայտնի է, որ ջազը ծնունդ է առել ԱՄՆ-ում, որտեղից էլ արագ տարածվել է աշխարհով մեկ: Ֆրանսիայում այն տարածվել է արդեն 1910-ականներին, ամերիկացի երաժիշտների միջոցով: 1920-ականներն վերջերին հայորդի Անդրե Էքյանը եղավ ֆրանսիական ջազի ռահվիրաներից մեկը, որին համարել են ամենահինքնատիպ ջազային ոճաբաններից մեկը Ֆրանսիայում եւ Եվրոպայի այն հազվագյուտ սաքսոֆոնահարներից, որոնք զարգացրել են սեփական ոճը...

Նա ծնվել է Փարիզի մոտ Մյոդոն քաղաքում, Օսմանյան կայսրությունից գաղթած հայի եւ հունգարուհու ընտանիքում: Մանկուց ինքնուրույն սովորել է կլառնետ ու ալտ սաքսոֆոն նվագել եւ 1920-ականների վերջից հանդես է եկել տարբեր նվագախմբերում, մասնավորապես` բելգիացի սաքսոֆոնահար Պոլ Գասոնի «Վերսաթայլ» նվագախմբի հետ: 1930-ականների սկզբին նա արդեն հայտնի անուն էր Ֆրանսիայի ջազի երկրպագուների շրջանում, որն իր գործունեությամբ մեծապես նպաստել է ջազի զարգացմանը` ակումբներում եւ կաբարեներում կազմակերպելով համերգներ ու ջեմ-սեշըններ (թեմատիկ հանկարծաբանություններ): Անդրե Էքյանը հանդիսատեսին հմայել է ոչ միայն իր ճարտար նվագով ու հմուտ հանկարծաբանություններով, այլեւ գեղեցկատես արտաքինով: 1934-ին նրա անունը հոլովվել է մի գայթակղալից պատմության մեջ: Փարիզի շքեղ հյուրանոցներից մեկում է ապրել երիտասարդ ամերիկուհի Մարգրիթ Չադվիքը, որը վեց տարի առաջ կորցրել էր իր ամուսնուն և վիշտը մոռանալու համար սկսել է հաճախել գիշերային զբոսավայրեր: Դրանցից մեկում էլ նա հանդիպել է Անդրե Էքյանին եւ սիրահարվել: «Բայց վիշտը անհետանալու փոխարէն կը կրկնապատկուի, որովհետեւ անտիտան հայը չ՚ուզեր գոհացում տալ գեղանի այրիին,- գրել է ժամանակի հայ մամուլը:- Չի կրնար սիրել: Ապսպրանքի վրայ ըլլալիք բան չէ՛ եա: Ի զուր կ՚ողոքէ խարտիշագեղ ամերիկուհին: Ի զո՛ւր կը յամառի, կը պնդէ: Ո՛չ և ո՛չ»: Այդժամ Շամիրամյան կրքով համակված Մարգրիթը մի անգամ կաբարե է ժամանել մի խոշոր ատրճանակով ու այն ուղղել է ուղիղ Անդրե Էքյանի սրտին: Երկու ոստիկան իսկույն հարձակվել են կատաղած այրիի վրա` խլելու համար զենքը: Իրարանցում, աղմուկ-աղաղակ: Հանկարծ ատրճանակը պայթել է: Էքյանին ոչինչ չի պատահել. թեթեւակի վիրավորվել է նրա նվագախմբի երաժիշտներից մեկը, իսկ Չադվիքը բանտարկվել է (տե՛ս` Հայու մը սիրահարուած ամերիկուհին զէնքի կը դիմէ... բայց նուագահար մըն է, որ կը վիրաւորուի, «Ապագայ», Փարիզ, 7.12.1934):

1935-ին հայազգի երաժիշտը հիմնել է «Ջազ Էքյան» խումբը, 1936-ին` «Սուինգ թայմ» պարասրահ-ռեստորանը: Նույն տարի Փարիզի «Էկոլ Նորմալ» հայտնի երաժշտական դպրոցում մասնակցել է ֆրանսիական ջազի գալա-համերգին, ինչպես նաեւ կազմակերպել ջազ երաժշտության ձայնագրություններ: Նա բազմիցս հանդես է եկել ամերիկացի նշանավոր սեւամորթ կատարողներ Բենի Քարթերի, Քոուլմեն Հոքինսի, Ջո Թըրների, Ջեք Բաքլերի, Բիգ Բոյ Գուդիի, Ֆաթս Ուոլերի, Թոմի Բենֆորդի եւ շատ ուրիշների հետ: 1930-ականներին Լոնդոնում հյուրախաղերով հանդես է եկել անգլիացի հայտնի երգահան, դաշնակահար, նվագախմբի ղեկավար Ջեք Հիլթոնի, Նյու Յորքում` Թոմի Դորսիի եւ Ռեյ Վենտուրայի նվագախմբերի հետ: Հոդվածի սկզբում հիշված երաժիշտ Գրեգորի (Գրիգոր Քելեկյան) հետ նա հանդես է եկել 1933-ին, Փարիզի հեղինակավոր «Օլիմպիա» համերգասրահում: Երկրորդ աշխարհամարտի տարիներին Էքյանը շարունակել է իր խմբով հանդես գալ Փարիզի «Պլեյել» դահլիճում եւ «Նորմանդի» կինոթատրոնում: Պատերազմից հետո, 1946-ին, հայազգի ֆրանսիական վավերագրող **Էդի Պետրոսյանը** Էքյանին ու նրա նվագախմբին նկարահանել է «Քոքթեյլ-մագազին թիվ մեկ» կարճամետրաժ փաստագրական կինոնկարում: 1947-ին «Ջազ Էքյանը» ձայնագրել է «Հեյ-բա-բա-րեբոպ» երգը, որն արժանացել է «Ձայնապնակների գլխավոր մրցանակին»:



Անդրե Էքյանի կենսագրության կարեւոր էջերից է նրա համագործակցությունն ազգությամբ գնչու նշանավոր վիրտուոզ կիթառահար, «ջազ-մանուշ» (գնչուական ջազ) ոճի հիմնադիր Ջանգո Ռեյնհարդտի (1910-1953) հետ... Այդ անսովոր ստեղծագործական եւ մարդկային հարաբերությունների պատմությունը մանրամասն ներկայացված է Մայքլ Դրեգնիի «Ջանգո. գնչու լեգենդի կյանքը եւ երաժշտությունը» գրքում (Օքսֆորդ, 2004): Այստեղից իմանում ենք, որ նրանք առաջին անգամ համատեղ հանդես են եկել 1932-ին, Ժան Սաբլոնի նվագախմբում, եւ Էքյանը մեծ դեր է ունեցել Ջանգոյի` որպես երաժիշտ եւ անհատականություն հղկման ու կայացման գործում: Քանի որ Ջանգոն կյանքում սովոր չի եղել ժամանակային սահմանափակումների եւ կիրթ վարվեցողության, Էքյանն անձամբ պատասխանատու է եղել վերջինիս համար: Երիտասարդ հայորդին երիտասարդ գնչուին ոչ միայն օժանդակել է մասնագիտական առումով, այլեւ հետեւել, որպեսզի վերջինս համերգներին ներկայանա միշտ սանրված, մաքուր եղունգներով, փայլեցրած կոշիկներով եւ սմոքինգով: Բազմաթիվ ելույթների հետ մեկտեղ նրանք համատեղ ձայնագրել են դասական ջազի տասնյակ ստեղծագործություններ 1930-ականների վերջին եւ կրկին` 1950-ականների սկզբին:

...1949-ի սկզբին Ջանգոն անհետացել է երաժշտության աշխարհից եւ հանրությունից: Էքյանը մի կերպ գտել է նրան եւ համոզել վերադառնալ, նաեւ պարզել, որ ընկերը կարիք ունի լուրջ ատամնաբուժական միջամտության: Նա Ջանգոյի կողքին է եղել վիրաբուժական գործողության ժամանակ, որի ընթացքում կիթառահարը գրեթե հասել է մահվան դուռը: Ամեն ինչ բարեհաջող է ավարտվել, եւ այդ տարի Ջանգոն հանրությանը ներկայացել է իր նոր սպիտակ ատամներով: Նրանք կազմել են մի նոր ջազ հնգյակ եւ շրջել Ֆրանսիայում, Շվեյցարիայում եւ Իտալիայում (Էքյանն, ի դեպ, անձամբ է վարել մեքենան): Սակայն Ջանգոյի կարիերան ավարտվել էր: Պատերազմի տարիներին կրած զրկանքներն իրենց զգացնել են տալիս, եւ Ջանգոն հանկածամահ է լինում 1953-ին, 43 տարեկան հասակում:

Գործընկերոջ եւ մտերմի մահից հետո Էքյանը շարունակել է ելույթներն իր խմբով` կինոթատրոններում, ռադիոյով եւ հեռուստեսիլով, իսկ 1955-ին ղեկավարել է իր նվագախումբը «Մաքսիմ» ռեստորանում: 1957-ին Պոլ Պավիոն նկարահանել է «Ջանգո Ռայնհարդտ» վավերագրական կինոնկարը, որի հիմնական մասնակիցներից Անդրե Էքյանը բազում հիշարժան դրվագներ է պատմում իր երկարամյա մտերիմ ընկերոջ մասին...

Ի դեպ, մահից երկու տարի առաջ (որը տեղի ունեցավ 1972-ին, Իսպանիայի Ալիկանտե քաղաքում) Էքյանը փայլել է մեկ այլ` դերասանական տաղանդով: Ռիկոյի երկրորդական դերով նա նկարահանվել է ֆրանսիացի ճանաչված բեմադրիչ Ժան-Պիեռ Մելվիլի «Կարմիր շրջան» ֆիլմում` խաղընկերներ ունենալով այնպիսի ականավոր կինոդերասաններ, որպիսիք էին Բուրվիլը, Ալեն Դելոնը, Ջան Մարիա Վոլոնտեն եւ Իվ Մոնտանը...

# Իտուլվիդես Վիլչես. «Որոշեցի CD-ն անվանել «Արարատ»




Վենեսուելացի շեփորահար **Իտուրվիդես Վիլչեսն** ամիսներ առաջ դիտելով երիտասարդ կոմպոզիտոր, դաշնակահարուհի **Աննա Մանուկյանի «Տերեւների պարը»** տեսահոլովակը` հմայվել է նրա ստեղծագործությամբ եւ որոշել համագործակցել հայուհու հետ

Աննայի հետ կապ հաստատելուց եւ համագործակցության հնարավոր եզրերը հստակեցնելուց հետո Իտուրվիդես Վիլչեսի այս տարվա շրջագայությունների ցանկում ավելացավ եւս մեկ երկիր` Հայաստանը Նա Պուերտո Ռիկոյից Հայաստան ժամանեց ընդամենը տասը օրով, որի ընթացքում ծրագրել էր Աննա Մանուկյանի հետ հանդես գալ համերգային ծրագրով, նկարահանել տեսահոլովակ, ինչպես նաեւ թողարկել ձայնասկավառակ

«Ազգ»-ի հետ զրույցում երաժիշտն ասաց. «Երբ դիտեցի Աննայի տեսահոլովակը, ինձ միանգամից գրավեց իր ստեղծած նուրբ երաժշտությունը, սիրտս շարժվեց եւ հասկացա, որ ցանկանում եմ հենց իր հետ համագործակցել»:

Իտուրվիդես Վիլչեսը եղել է Grupo Mania նվագախմբի պրոդյուսերը, համագործակցել է Մարկ Էնթոնիի, Օսկար դը Լեոնի, Նատալիա Ջիմենեզի եւ այլոց հետ

Համատեղ ստեղծված ձայնասկավառակը Իտուրվիդեսը որոշել է անվանել «Արարատ» Ըստ նրա` Հայաստանը բոլորը ճանաչում են Արարատ լեռով Ձայնասկավառակում ներառված բոլոր ստեղծագործությունները գրել է կոմպոզիտոր Աննա Մանուկյանը:

Օրերս հանրության դատին հանձնված ալբոմն առանձնանում է իր ոճով` դաշնամուրային կատարումները զուգակցվում են շեփորի հնչյուններով. արդյունքում ստացվել է լատինական ռիթմերով ջազ: Դաշնակահարուհի Աննա Մանուկյանը նշեց, որ այս համագործակցության շնորհիվ իրեն փորձել է ջազային ոճում. «Բացի այդ, հնարավորություն ունեցա համագործակցելու օտարազգի հիանալի երաժշտի հետ: Ուրախ եմ, որ Իտուրվիդեսը ցանկացավ մեր համատեղ ձայնասկավառակը անվանել «Արարատ», քանի որ բոլոր այն մարդիկ, որոնք չեն լսել Հայաստանի մասին, այդ միջոցով կճանաչեն Հայաստանը»

Երաժիշտների համագործակցության մյուս արդյունքը` **«Քարերի սիմֆոնիա»** կոչվող տեսահոլովակն է, որի ռեժիսորը **Ավետիս Պետրոսյանն** է Իտուրվիդես Վիլչեսն, ի սկզբանե, ցանկություն էր հայտնել տեսահոլովակը նկարահանել Հայաստանի պատմական վայրերից մեկում, որն օտարերկրացիներին հնարավորություն կտա ճանաչելու Հայաստանը Տեսահոլովակի նկարահանումները կատարվել են Գառնու տաճարում, Քարերի սիմֆոնիա հուշարձանի մոտ, ինչպես նաեւ Երեւանի ֆիլհարմոնիայում

Ի դեպ, Հայաստանի մասին Իտուրվիդես Վիլչեսը նախկինում չէր լսել:

«Համացանցով տեսել էի Գառնու տաճարը եւ Արարատ լեռը, բայց չգիտեի, թե որ երկրում են գտնվում Աննայի տեսահոլովակը դիտելուց հետո միայն հետաքրքրվեցի, թե որտե՞ղ է ապրում եւ իմացա Հայաստանի մասին»,- ասաց նա, ապա հավելեց, որ իր ընկերներին, երկրպագուներին Հայաստանի մասին պատմելու է` որպես ջերմ ու կիրթ մարդկանցով լի երկիր. «Սիրել եմ ոչ միայն հայերին, այլեւ` հայկական խոհանոցը, որը շատ համեղ է»

Երաժիշտը Հայաստանում ապրելու հնարավորությունից էլ չէր հրաժարվի. «Ինձ դուր է գալիս, որ մեծ տեղ եք տալիս ընտանիք գաղափարին Լատինական Ամերիկայում ընտանեկան արժեքներն արդեն կորել են»,- ասաց նա:

Երաժիշտը, որն այսօր արդեն բավականին հայտնի է, մանկության տարիներին ստիպված էր հաճախել երաժշտական դպրոց, քանի որ մայրն է այդպես ցանկացել. «Մայրս ասում էր` երաժշտությունն ամենագեղեցիկ բանն է, որ մարդ կարող է ունենալ իր սրտում, դու մեծ երաժիշտ պետք է դառնաս, որդիս Միշտ հիշում եմ մորս` Լեյդայի խոսքերը եւ հիմա առանց երաժշտության կյանք չունեմ Ինչ ստեղծում եմ, նվիրում եմ մորս» Նրանից հետաքրքրվեցինք` արդյոք ծնողները երաժիշտ են, պարզվեց` ոչ, սակայն երաժշտության հետ կապը եկել է տատիկից, որը ակորդեոն է նվագել

Մանանա ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ներդիրը հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: